։ՌՄՋ։ (1757)|ԹՎԻՆ.| ԿԱՄԱԻՆ Ա՛Ց. ԵՍ ՊՈՒԿԱՍ ՎՐԱ՚ՐԴԱ՚ՊՐԵՏ՚Ս|ՇԻՆԵՑԻ ՄԷԿ ՃԱՊՂԱՑ| Լ՚Ի՝ ԽԱՉԱՆԱԿԵՏ ԵԻ ԴՎԻ |ՎԱԽՃՆ Մ՚Բ ՈՒԽԴԻՍ ԳԵՒ|ԵՐԳԱ Ի ՓՐԿՈՒԻ՚Թ ՀՈԳՈՑ| ԻՄՈՑ։ ՈՎ ՈՔ ՀԱՆԵԼ ՋԱՆ|Ա ։ԳՃՓԸ։ (318) ՀՐԱՊՐԵ՚ՏԱ՚ՑՔ Բ ԻԱՆ (ԵՐԿՈՏԱՍԱՆ)|ԱՌԱՔԵԼ՚ՈՑ|ՆՋՈՎՔ| ԱՌՑԷ։

Ծանոթ. Ջալալյանցը ունի արձանագրության սկզբի մասի բովանդակությունը և թվականն էլ սխալ՝ ՌՄԼ։

Հրատ. Ջալալեանց, I, 193.

461. ՏԱՊԱՆԱՔԱՐ, տափակ, գտնվում է բակում, եկեղեցու հարավային պատի մոտ. երեսին 4 տող.



ԱՅՍԷՏԱՊԱՆԽԱՉԱՏՕՐ
ՎԱՐԹԱՊԵՏԻՆ ՍԱԼ . . . .
ՈՐ՚Ի՚Մ՚ՆՈՉԱՐԻՆ
ՌՄ ՃԻՆ

ԱՑՍ Է ՏԱՊԱՆ ԽԱՉԱՏՕՐ|ՎԱՐԹԱՊԵՏԻՆ, ՍԱ Ը՚ԲՐ| ՈՐԴԻ ՄԱՆՈՉԱՐԻՆ.| ։ՌՄ։ (1751) ԹՎԻՆ։

462. ՏԱՊԱՆԱՔԱՐ, տափակ, գտնվում է նախորդի մոտ. երեսին 2 տող.

ԱՅՍ ՏԱՊԱՆՈՒԼՈՒԲԱԲԻՐԴԻ
ԳԱՍՊԱՐԻՆՈՒՄԼԸԹՎԻՆ

ԱՑՍ Է ՏԱՊԱՆ ՈՒԼՈՒԲԱԲԻ ՈՐԴԻ| ԳԱՍՊԱՐԻՆ. :ՈՒՄԼԸ: (1789) ԹՎԻՆ:

463. ՏԱՊԱՆԱՔԱՐ, մեծ, տափակ, երեսին հովվական գավազան և 5 տող.

ԱՅՍԵՏՊԱՆՍԻՄԷՕՆ ՎԱՐԴ
ԱՊԵՏԻՆՈՐԷՐՄԻԱԲԱՆՍՐԲ
ՈՅՆՊԷՏՈՒԱՅԶՕՐԱՎԱՐԻՆ
ԻՇԱՏԱԿՇՆԵՑԻՍԱՐԳԻՍ
ԲԱԼԱՅԵԱՆ 1815 Ա

ԱՑՍ Է ՏԱՊԱՆ ՍԻՄԷՕՆ ՎԱՐԴ|ԱՊԵ-ՏԻՆ, ՈՐ Ի:Ր ՄԻԱԲԱՆ ՍՐԲ|ՈՑՆ ԳԷՈՐ-ԳԱՑ ԶՕՐԱՎԱՐԻՆ.|ԻՇԱՏԱԿ ՇԻՅՆԵՑԻ ՍԱՐԳԻՍ| ԲԱԼԱՑԵԱՆ. 1815 ԱՍԻ:

464. ԱՆՂԱՆԱՏԱՆ (ավերակ) մուտքի կողի ստորին քարի վրա 5 տող.

ՅԻՇԱՄԱԿԷ
ԿԱՄԱՐԳՍԲ
ՕԹԱՂՍՔԼԱ
ՆԻՂՈԿԱՍՎՄ
ԴԱՊԵՄԻՆ

ՑԻՇԱՏԱԿ Է| ԿԱՄԱՐԳՍ :Բ: |ՕԹԱՂՍ ՔԼԱ|ՆԻ ՂՈՒԿԱՍ ՎԱՐ|ԴԱՊԵՏԻՆ:

465. ԽԱՉՔԱՐ, փոքր, ընկած է գավթում, 2 տող.

Խ ա չ Ս Ն ա վ ա ր
Խ ա թ ո ւ ն

ԽԱՉՍ ՆԱՎԱՐ,| ԽԱԹՈՒՆ.

466. ԽԱՉՔԱՐ, փոքր, ընկած է նախորդի մոտ. 1 տող.

Խ չ Մարգարիւի

Խ|Ա|Չ|Ս| ՄԱՐԳԱՐԻՍԻ.

467. ԽԱՉՔԱՐ, փոքր, նախորդների մոտ, վրան չշարունակված, աջից ձախ շրջադիր 2 տող.

ԻՈՐՅՂ
ՅՈՐ ՛

ՑԱ · · · · |ԽԱՉ Մ · · ·

34. ՔԱՐԱԳԼՈՒԽ ԳՑՈՒՂ

Այս ղլուղը տեղավորված է Շիկաքար կոչվող դժվարամատչելի քերծի գլխին, հին բերդի ավերակների մոտ, որին Զալալյանցը Զալաղանա բերդ անունն է տալիս:

Արձանագրություններ ունեցող հուշարձանները գտնվում են երեք կետերում:

Ա. Հին գերեզմանատան մնացորդներ, ուր կանգուն և ընկած վիճակում կան մի քանի խաչքարեր ու տապանաքարեր. հնագույնն ունի ՉԲ: (1253) թվականը. գտնվում է գլուղի հարավարևմտյան կողմում՝ գլուղ մտնող ճանապարհի եզրին:

Ք. Ս. Աստվածածին նորաշեն եկեղեցու պատերի մեջ օգտագործված են տապանաքարեր և խաչքարեր, որոնց վրա կան արձանագրություններ. եկեղեցին գտնվում է գյուղի կենտրոնում։

Գ. Աղաքար կոչվող անտառոտ հանդում, ուր կան գյուղատեղի և գերեզմանատան մնացորդներ՝ ըռլորը ծածկված խիտ ծառերով և թփերով։ Գերեզմանաքարերը և փոքրիկ անարվեստ խաչքարերի մեծ մասն, ըստ երեւույթին, XVI—XVII դարերի են և մակագրություններ չունեն. այստեղ գտանք միայն մի աննշան տապանագիր։

468. ԽԱՉԿԱՐ, մեծ և գեղաքանդակ, կանգնած է պատվանդանի վրա։ Ստորին մասում գունդի փոխարեն կլոր սեղան, ուր շարված են ուտելիքներ, շուրջը նստած տղամարդ ու կին՝ երեխան գրկին. գտնվում է հին գերեզմանատան մեջ. թիկունքին խառը գրերով 16 տող.

ԹԻՆԲԻՂԽԱՆՈ
ՙԹԻՀԱՍԱՆԱ
ՅԵՍՍՆՊԱՏԵՙ
ՆՂԲԱՐՔԻՄԿԱ
ՆՆԷՅԻՋԽԱՆՆՍ
ԲԱՐԷԽԱՒՍԱ
ՌԿՍԻՆՆԵՙԱՄ
ՈՒՍԻՆԻՄՌՆԿԱՏ
ԱՅԻՆՋՈՐԵՏՊԱ
ՐՈՆՄԵՋՇԱՐԵՆ
ԻԿԵՙԳԵՐԵՋՄԱ
ՆԱՅ ՏԵՂԿՍ
ԱՒԳՆՆԻՒ
ՐՈՐԴԵԱ
ՑՆ ԱՄ
ԵՆ

ԹԻ[Վ]Ն[Յ] :ՁԲ: (1253). ԻՇԽԱՆՈ[Ի]ԹԻ. ՀԱՍԱՆԱ[Ց]. ԵՍ ՍՆՊԱՏ ԵԻ[Ե]ՂԲԱՐՔ ԻՄ ԿԱ[Ն]Կ[Ն]Յ[Ե]ՑԻ ՁԽԱՁՍ[Ի] ԲԱՐԷԽԱԻՍ Ա[Ի]Ւ ՔՍ. ԻՆՁ ԵԻ ԱՄ[Ո]ՒՍԻՆ ԻՄՈՑ ԿԱՏ[Ա]ՑԻՆ. ՁՈՐ ԵՏ ՊԱՐՈՆ ՄԵՋ ՀԱՑՐԵՆ[Ի]Ք ԵԻ ԳԵՐԵՁՄԱ[Ն]ԱՑՏԵՂ. ՔՍ[Ի] ԱԻԳՆԵ ԻՒ[Ր] ՈՐԴԵԱ[Ց]Ն. ԱՄ[Ե]Ն:

Հրատ. Ջալալեանց, II, 344 (սկզբի մասն աղավաղված և առանց թվականի): Բարխուդարեանց, 166,

469. ԽԱՉՔԱՐ, մեծ սև գեղաքանդակ, կանգնած է նախորդից հարավ, ստորին մասում կլոր սեղան կամ մատուցարան, շուրջը տղամարդ և կին՝ կանգնած. ստորին մասում 6 տող. խառը գրերով.

ՄԵՔ[Ի] ՀԵՒԵՏ[Ի]ՔԱՑ ՈՐ[Դ]Ի[Ք]Ս ՊԱՊԱ[Յ] . . . ՐՍԻՆ-
ՊԱՏ, ՐՍԱՐԳԻՍ՝ . . . . . .

ՄԵՓ
ՅԵՙԵՏ
ԻՓԱՅՈՐ
ԴԻՓՍՊԱՊԱ
՝ՍԻՆՊԱՏՍՍՐԳԻՍ
. . . . . .

Ծանոթ. Արձանագրությունը գրել են նախքան պատվանդանի մեջ դնելը. այդ պատճառով էլ 5-րդ տողի կեսը և շարունակությունը մտել են պատվանդանի փոսի մեջ։

Ոճանդակների և գրչության ոճով հար և նման է նախորդին, հետեւարար ժամանակակից է նրան։

Հրատ. Բարխուդարեանց, 166 (սկզբի մասը աղավաղված),


470. ԽԱՉՔԱՐԻ բեկոր, նախորդների մոտ, 3 տողի մնացորդով.

..աչսմ
....արայքսող
..նմայ

ՐՍԲ. ԽՐԱՉՍ ՄՐԽԻԹՐԱՐԱՑ. ՔՍ. ՈՂՐՈՐՄԻՐ ՆՄԱ:

Հրատ. *Բարխուդարեանց, 166։*

471. ԽԱՉՔԱՐ, պարզ, ագուցված է գյուղամիջի ս. Աստվածածին եկեղեցու հարավային պատի արևմտյան ծայրին. շրջանակներին 3 տող.



ԵՍ ՍՈՒՄԲԱՏ ԿԱՆԿՆԵՑԻ ՋԽԱՉՍ| ՐՀԱՄ . .
ԱՄՆ| ԿՈՂԱԿԻՑ ԻՄ ՀԱԻԱՆԱՑ ԵՒ ՀԵՂԱ. . . .

Հրատ. *Բարխուդարեանց, 166.*
Լուսանկ. *99.*

472. ԽԱՉՔԱՐ, պարզ, կիսովին խրված է գետնի մեջ, ս. Աստվածածնի մուտքի դիմաց. թիկունքին 3 տող.

ԵՍՃԱՀԱՆՍԿԱՆՆ
ԵՅԻՋԽԱՀՍԵՂԲ
ԱՅՐՓԻՐՈՒՋՊԱՒ

ԵՍ ՃԱՀԱՆՍ ԿԱՆԿՆԵՑԻ ՋԽԱՉՍ ԵՂԲ|ԱՑՐ ՓԻՐՈՒՋՊԱՐԽՏԻՆ՝:

473. ԽԱՉՔԱՐԻ բեկոր, ագուցված է ս. Աստվածածին եկեղեցու հարավային պատի մեջ. 2 տող.

ՍԲ. ԽԼԱՅՉՍ| ՓՐԿՈՒԹԼԻՅ·:

474. ԽԱՉՔԱՐԻ վրա, որը գտնվում է Աղաքար կոչվող հանդամասի գերեզմանատանը, 5 տող.

ՍԲ ԽԱՀՍ
ԲԱՐԽԱՒ
ՍՂԱԿՏ
ՈՒԽԱՆ
ԻՆ

ՍԲ. ԽՍՉՍ| ԲԱՐԼԵՅԽԱԻ|Ս ՇԱԿՏ|ՈՒԽԱՆ|ԻՆ:

35. ԲԱԴԱՐԱ (ՊՏՐԵՑԻՔ) ԳՅՈՒՂ

475. ԱՄԵՆԱՓՐԿԻՉ եկեղեցու բեմի ճակատին. գտնվում է գյուղից արևմուտք, ձորակի մեջ.

ցաՆուն · · · զեկեղեցիս զդարապաս նկարաf · · · Ուխաճին մեծուճիfն. յիս տվին արդ ծննդեան Ը: աւրէfն և աղուհացից տաւնեն և ի զատկէն ինձ ու նոր կիրակին զպատարագն մեզ առնեն. Դարապաս վանաւն Հուտահոա տներն եկեղեցւոյս:

Հրատ. Բարխուդարեանց, 137,

476. ԱՄԵՆԱՓՐԿԻՉ եկեղեցու պատին ագուցված խաչքարի վրա.

Աթանաս Է. նա կաթողիկոս է Արբաին:

Հրատ. Բարխուդարեանց, 137,

36. ԽՆԶՐԻՍՏԱՆ ԴՅՈՒՂ

Մելիքանիստ ալս գյուղում եղել են շատ հին հուշարձաններ, որոնք այժմ չկան, մնում են միայն XVIII դ. վերաբերողները: Գյուղի ստորոտում եղել է եկեղեցու ավերակ, իսկ շուրջը՝ դերեզմանատուն, կոչվել է «Հանգած եղցի». Ալս վայրի բոլոր արձանագրություններն առնում ենք Բարխուդարյանցից:

477. ԽԱՉՔԱՐԻ վրա, որը եղել է Հանգած եղցու մոտ.

Ես Դաւիթ կանգնեցի զխաչս իմ ծնողաց: թվ՚ին՝ :Շե: (1056):

Հրատ. Բարխուդարեանց, 161,

478. ՏԱՊԱՆԱՔԱՐԻ վրա, որը եղել է Հանգած եղցու մոտ.

Այս է տապան Մեծ ջինայցի տէր Սարգիսի դուսեր Մարեանին, որ էր կողայկից Բալի որդի Խաամին, որ է եխբար ուզպաշի Պողոսին. որ էր առաչ Զալաղան ուզպաշին հարան էր. սորայ համար շատ մուվայտի վեր իկաց, յետով մենf բերինf. թվ՚ին՝ :ՌՃՁՋ: (1737). օվ որ կարդայ, Աստուած ողորմի ասէ:

Հրատ. Բարխուդարեանց, 161,

479. Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ գյուղամիջի եկեղեցու մուտքի բարավորի վրա.

:ՌՄԳ: (1754). յիշատակ է Սուրբ Աստուածածին եկեղեցիս խոճծրուսացցի Մելիք Մէզախանին և ծնողացն Այտինին և Մարիանին և կողակցուն պարուն Նանային և Հերիքին և որդուն Ալայվերտին:

Հրատ. Բարխուդարեանց, 160,

480. ՍՐԱՆՈՑ (ՋԻԹԵՎԱՆՔ) պատին, որը կից էր եկեղեցուն.

Ջիշատակ է սուսնոցս. շինեցաւ Մելիք Ալահվերտին, որ էր որդի Մելիք Միրզայխանին. թվ՚ին՝. :ՌՄԼԱ: (1782):

Հրատ. Բարխուդարեանց, 160,

481. ՏԱՊԱՆԱՔԱՐԻ վրա, որը գտնվում էր ս. Աստվածածին եկեղեցու հարավային պատի մոտ.

կամաւն ամենազօրին. այս է տապան Մելիք Միրզախանին, որ է որդի Այտինին, հայր էր Մելիք Ալավերտին, իշխանութիւն աներ խաչենու երկրին, որ մաս-

կան ցսչաւ Խցծrusաճայ գեղիճ. ehնեց յիcաsակ- Ասsուածածճայ սուրբ եկեղեցին, սմի վախճաճեցաւ :ՌՄԻՉ: (1777) թուականին:

Հրատ. Բարխուդարեանց, 160։

37. ԽԱՆՉՈՒ ԳՑՈՒՂ

Դյուղի շրջակայքում կան մի քանի գյուղատեղեր, հասարակ մատուռներ և ղերեզմանատաներ։ Արձանագրություն ունեցողները հետևյալներն են.

482. ԽԱՉՔԱՐ, մեծ. գտնվում է դյուղի եղրին, շուրջն ընկած են երեք քարեր՝ առանց գրության. ստորին մասում կիսեղծ 8 տող.

ՅԱՆՈՒՆ ՔԵՐՈՐԴ
ՔՆԱՆԷՍ ՍՈՍՏ
ԱՆԷՍՈՒԲԱՐՍԵՂԿԱՆԳ
ՆՑՑԱՔՉԱՀԱՉՍԿԱՒՐՍՔՈՅՀԱՅՐԱ
ՊԵՏԱՅԵՒՄԱՒՐՄԵՐ
ՈՅՀՌԱՄՍԻՄԻՆՈՐՔԵՐԿՐ
. . . . . ԱՂԱՔՍ
ՅԻՂԵՀ· · ·

ՑԱՆՈՒՆ ՔՐ. ԵՐՈՈՐԴԼՈՒՅԹԵԱՆ. ԵՍ ՍՈՍՏԱՆԷՍ ՈՒ ԲԱՐՍԵՂ ԿԱՆԴՆԵՑԱՔ ՉԽԱՉՍ ՀԱՒՐ ՄԵՐՈՑ ՀԱՑՐԱՊԵՏԱՑ ԵՒ ՄԱՒՐ ՄԵՐՈՑ ՀՌԱՄՍԻՄԻՆ. ՈՐՔ ԵՐԿՐՊԱԳԵՔ ԱՂԱՉԵՄՔ ՑԱՂԱԹՈՒ ՑԻՇԵԼ Ր:ՉԲ:ՐՈՒ (1253):

Ծանոթ. Թվականի տառերը բոլորովին աննշմար են այժմ, լրացնում ենք ըստ հրատարակչի։

Հրատ. Բարխուդարեանց, 159։

483. ԽԱՉՔԱՐԻ վրա, որը կանգնած է եղել գյուղամիջի ս. Ստեփանոս եկեղեցու հյուսիսային կողմում.

Թիւն :ՈՀԲ: (1230). ես Հայրապես, Պետրոս, Վարդ·ւն, ծոհաճ կանգնեցաք զխաչս մաւրն մեր, որ բարեպաշտ, աղխատասէր էր. յաղաւթս յիշեցէք:

Հրատ. Բարխուդարեանց, 159։ Զալալեանց, II, 343։

484. Ս. ՍՏԵՓԱՆՈՍ, եկեղեցու մուտքի ճակատակալ քարին.

ի :ՌՃԻԲ: (1673) թվին. ես Պետրոս կաթողիկոս Աղուանից ի գեղչէս Խաճցկայ, հայրն իմ Մանկասար, մայրն Ադխանն և աւաք եղբայրն իմ Իշխանն և իւր որդիքն Ովանէսն, Պապաջանն և իւր քոռ Մանկասարն և տաս Խաթունն ehնեցաք զեկեղեցիս յիշատակ մեզ և ննջեցելոց մերոց:

Հրատ. Բարխուդարեանց, 159, Զալալեանց, II, 343։

38. ԴԱՀՐԱՎ ԳՑՈՒՂ

Արցախում երկու վայրեր են եղել, ուր կառուցվել են խմբովին որմնափակ խաչքարեր՝ պսակված գեղեցիկ ճակատոնով։ Թեև դրանց որմերը շինված են գլխավորապես ճեղքված և անմշակ քարերից, բայց երկու տեղում էլ բուն խաչքարերը և նրանց կիսակամար ճակատաքարերը զարդարված են մեծարվեստ քանդակներով։ Խաչքարերը բոլոր դեպքերում էլ տեղադրված են մեծ խորութիւն ունեցող խորանների մեջ, որպիսի հանգամանքը շփոթության մեջ է դցել բարխուդարյանցին, որը դրանք համարել է «բեմ»։

Նշված վայրերից մեկը Վարանդա գավառի Նորաշեն և Հացի գյուղերի արանքում եղած «Բուի եղջիւր» կոչվածն է և երկրորդը՝ ալս, Դահրավ գյուղից դեպի հյուսիսարևմուտք, մոտ երկու կիլոմետր հեռու սարալանջը՝ ս. Նահատակ կոչված մատուռի շրջակայքը։ Անցյալում ալստեղ կանգնած են եղել երեք որմնափակ խաչքարեր, այժմ միայն մեկն է կանգուն, իսկ մյուսների հետքերն են երևում։ Ս. Նահատակ մատուռի պատերի ստորին մասերը կան միայն՝ շարված քարի մեծ կտորներով։

485. ԽԱՉՔԱՐ, որմնափակ, կանգնած է ձորի շրթունքին, մատուռի արևելյան կողմում, կիսակամար ճակատաքարին 6 տող.

ԻՔՎ ՉԻԵԷԱՀՀԱՍ
ԱՆՈՐԴԻՎԱՍԱԿԱԿԱՆԳ
ՆԵՑԻՋԼԻԱՀՉՍԵՂԲԱՒՐԻՍ
ՂՈՒՐՋԻՆՈՒՔԱՆԱՒՔՐԿՈՒ
ԹԻ ՀՈԳՈՅ ՈՎԿԱՐԴԷՔ
. . . . ՇԵՔԻՄՐ

Ի ԹՎՐԻՆ՝ ՉԻԵ: (1276). ԵՍ ՀԱՍԱՆ ՈՐԴԻ ՎԱՍԱԿԱ. ԿԱՆԳՆԵՑԻ ՋԽԱՋՍ ԵՂԲԱՒՐ ԻՄ ՋՈՒՐՋԻՆ, ՈՒՔԱՆԱ. Ի ՔՐԿՈՒԹԻ. ՀՈԳՈՑ. ՈՎ ԿԱՐՒԷՔ՝ ՐՑԻՇԵՔ Ի ՏՐ.:

Հրատ. Բարխուդարեանց, 136,

486. ԽԱՉՔԱՐ, որմնափակ, կանգնած է եղել նախորդից մոտ 20 մետր հեռու. վրան եղել է՝

Թիւ ՉԻ: ես Ոհան կանգնեցի գխաչս իմն և ամուսին իմ Թիքեղնիկայ. աղաւթքս յիշեցէք:

Հրատ. Բարխուդարեանց, 136,

39. ՇԻՒՇԻ ՔԱՂԱՔ

Քաղաքում հին հուշարձաններ և արձանագրություններ չեն նկատվել: Մինչև ավերումը կային հետևյալ եկեղեցիները և հուշարձանները:

Ա. Ղազանչեցոց եկեղեցի (Ամենափրկիչ). հիմնադրվել է 1869 թ. և ավարտվել 1878 թ.: Ալտեղ պահվող մասանց տուփերի վրա եղել են հետևյալ արձանագրությունները.

487. ՈՍԿԵՁՕԾ ԱՋ ս. ԳՐԻԳՈՐԻՍԻ, վրան՝

Այս է աջ սրբոյն Գրիգորիսի Աղուանից կաթողիկոսին, թոռին սրբոյ Լուսաւորչին. ընդոգող սուրա տէր Յովհաննէս որդի Տաւութին, թոռն Պաղդասարին, որ է որդի Մէհրապ պէկին՝ տեառն Խաչենոյ. թվ. ՌՀ: (1621). Արուեսի Գալուստ:

488. ՆՈՒՅՆԻ վրա հետագայում գրված՝

Նորոգեաց վերսին սուրբ աջս Գրիգորիսի Բէյրամ Բէկ Մէլիք Ջիմշիտեան Մէլիք Շահնազարով :ՌՄԿՆ: էր (1812):

Հրատ. Բարխուդարեանց, 141,

489. ՄԱՄՆԱՏՈՒՓԻ վրա

:ՌՃՔ: (1660):

Հրատ. Բարխուդարեանց, 141,

490. ՏԱՊԱՆԱՔԱՐ. գտնվելիս է եղել Գավթի հյուսիսային կողմում. վրան հովվական գավազան.

Վիճակաւոր առաջնորդ թէմին Արցախայ Անդրէաս արհեպիսկոպոս Պօլսեցի. վախճանեալ է 8 սեպ. 1882 ամի. ի հասակի 48 ամաց:

Հրատ. Բարխուդարեանց, 142,

Բ. Ագուլեցոց եկեղեցի. (սբ. Աստվածածին). շինվել է 1822 թվականին:

491. ՅՈՎՀԱՆՆՈՒ ՄԿՐՏՉԻ ՄԱՄՆԱՏՈՒՓԻ վրա.

Ցիշատակ է Զարեհու Մկրտիչ վարդապետին և իւր ծնողացն. թվ. :ՌՃՁԸ: (1739) փետրվարի . . . :

Հրատ. Բարխուդարեանց, 144,

Գ. Մեղրեցոց եկեղեցի (ս. Աստվածածին)։ ..շինվել է 1838 թվականին։ Այստեղ ևս եղել է Հովհաննես Մկրտչի մասունքը՝ ամփոփված արծաթյա խաչի մեջ՝ 1856 թ. արձանագրությամբ.

Դ. Նոր թաղի եկեղեցի (ս. Յովհաննէս Մկրտիչ)։

Ե. Կուսանաց անապատ (ս. Աստվածածին). շինված է 1816 թվականին։

Զ. Հին գերեզմանատուն, ուր կան հետևյալ տապանագրերը.

492. «ՆԱՀԱՏԱԿ», գերեզմանաքար, գտնվում է գերեզմանատան ստորին մասում, վրան՝

Այս է տապան Թիֆլիսեցի ննահատակ Աճեոնին, ։ՌՄԽԴ։ (1795)-ին։ Ես Թիֆլիսեցի Սիմոնի որդի Սարկիս այս բարս հոկացի, սէրս ննահատակին։

Հրատ. Բարխուդարեանց, 180։

493. ՏԱՊԱՆԱՔԱՐ, գտնվում է գերեզմանատան հարավային մասում, վրան՝

Ցարձանիս շիրմի ամփոփեալ դնի մարմին իշխանին Խաչէն գաւառի, վեհ իշխանազնեայ Դանիէլ Բէկի Որդւոյ Մելիք-Բէկ իշխանապետի, ի տանէ Հայկազրն մեծ Ջալալ Դօլի Տեառն Արցախայ Հայոց աշխարհի, Որ Վարապաղայ կամ Շուշւոյ ննահանգ Նա սովորաբար արդ վերածայնի. Առ սուրբ հաւատոյ սա լուսահոգի, Նահատակի աս յամրոցիս Շուշի, Դառն տանջանօք Իբրահիմ խանի, Որ թշնամի էր խաչին Քրիստոսի. Ի ։ՌՄԽ։ (1791) կանգնեաց զայս արձան Վէսալի որդին այս ննահատակի Բաղդասար արհին տէր մեսրապօլիտն, Հասան Ջալալեանց արքուն հովուապետն Աղուանից երկրին. որ հանդիպիմ այսմ տապանի Տուք ճօրն և որդւոյն Աստուած ողորմին. ի 1851։

Նանոթ. Դանիել բեկին Իբրահիմ խանը մաս-մաս կտրատել էր։ Դանիել բեկի քույր Ղամար խաթունը մասերը հավաքել և ամփոփել էր գերեզմանի մեջ, որի վրա հետագայում Դանիել բեկի որդի Բաղդասար մետրոպոլիտը դրել է գերեզմանաքարը և գրել տապանագիրը։

Հրատ. Բաֆֆի, Նամսայի մելիքությունները, 180։ Բարխուդարեանց, 180—181։

Շուշվա եկեղեցիներում մինչև դարասկիզբը պահվում էին բազմաթիվ ձեռագիր մատյաններ, հավաքված Արցախի վանքերից, հիմնականում Դանձասարից՝ կարևոր հիշատակարաններով։

40. ՇՈՇ ԳՅՈՒՂ

Գյուղում կան երկու եկեղեցիներ, մեկը հյուսիսային եզրի գերեզմանատան մեջ, ուր հնում եղել են հին խաչքարեր և կենցաղային քանդակներով տապանաքարեր։ Այժմ միայն նորերն են մնացել։

Երկրորդ եկեղեցին գյուղամիջումն է, թաղածածկ մի շենք, անտաշ քարերով կառուցված՝ ս. Ստեփաննոս անունով, մուտքը հյուսիսից, որի ճակատաքարին կա խիստ վնասված մի արձանագրություն, որը դեռևս Բարխուդարյանցի ժամանակ դժվարընթեռնելի է եղել։

494. Ս. ՍՏԵՓԱՆՆՈՍԻ հյուսիսային մուտքի բարավորի վրա, կիսեղծ.

Փոխր ծոքով ուր գա · · հասա ևս տէր. ոսարհ շինեցաք գսուրբ Ամենափրկիչ եկեղեցիս յիւասակ հոգոց մերոց և ննջեցելոց. ի հայրապետութեան Աղուանից տեառն Երեմիայի · · · եւ ի մերոցս ննահանգի աթոռն ղուկ · · տէր Գրիգորն և տէր Դաւիթ եպիսկոպոսաց։ Եւ մեղաւորս տէր Դաւիթ էրեցս եղէ պատկառ.

յիշ՛եցեք՝ ի տէր ճաղերս :ԺԵ: (15) ֆահաճայիւ. զտէր Առաքել ֆահաճայն յիշեցէք ի տէր. թվ. :ՌՃԴ: (1655) էր: Ցաղաւթս յիշեցէք: Տէր Ցիսուս Քրիստոս Աստուած ողորմեա ննջեցելոցն:

Հրատ. Բարխուդարեանց, 132,

495. ԽԱՉՔԱՐԻ բեկոր, ագուցված է եղել նույն եկեղեցու լուսամուտի մեջ. վրան՝

թվ. :ՋԷ: (1458) ես ղոչ սարկաւագ Գոյաւեցի (կանգնեցի՞) խաչս Ազիզա, մաւր իմ:

Հրատ. Բարխուդարեանց, 132, Լալաեան, Ազգ. Հանդ., II, 33,

496. ԽԱՉՔԱՐԻ բեկոր, ագուցված է սբ. Սահականնոսի բեմի ճակատին, վրան եկեղեցու շինութեան թվականը.

ՌՈՃ
Դ ԷՐ

Թվին :ՌՃԴ: էր (1655):

497. ԽԱՉՔԱՐԻ բեկոր, ագուցված նախորդի կողքին.

ՌՈՃ

Թվին :ՌՃ: (1651):

498. ԽԱՉՔԱՐԻ բեկոր, ագուցված է նույն եկեղեցու հյուսիսային ավանդատան մուտքի ճակատին, վրան՝

ՌԻՆ
ՈՃԿԱ

Թին :ՌՃԿԱ: (1712):

41. ԴՈՆԱՎԱՐՋ ԳՑՈՒՂ

499. ԽԱՉՔԱՐԻ վրա, որը գտնվելիս է եղել գյուղի հյուսիսային կողմի բլրի վրա գտնվող Աղին ճահճատակ մատուռի արևելյան պատի տակ.

Ես Սահակ կանգնեցի զխաչս:

Հրատ. Բարխուդարեանց, 131,

500. ԽԱՉՔԱՐԻ վրա, Աղին նահատակի բակում՝

Ես Աղամս Աստուծով սուրբ խաչս կանգնեցի:

Հրատ. Բարխուդարեանց, 131,

501. ՈՐՄՆԱՓԱԿ խաչքար, գտնվելիս է եղել Աղին նահատակից քիչ վերև, երեք իրար կից խաչքարերից վեր՝

Թվ՛ին :ՇԻ: (1071). կամաւ ամենակալին Աստուծոյ ես . . . . Գրիգոր . . Աստուծոյ միաբան եղբարս լա . . . զխաչս իշխանութեան . . . հայրապետութեան . Ոհանէսի տէր Ներսէսի . . ո . . . աղաւթեցէք:

Հրատ. Բարխուդարեանց, 131,

42. ՆԵՐՔԻՆ ՍՂՆԵՔ

Գյուղի եզրին, ձորաբերանին կա մի հին գերեզմանատուն՝ հասարակ տապանաքարերով՝

502. ՏԱՊԱՆԱՔԱՐԻ վրա խաչ և տակին՝


ՔՌԽ ԹՎԻՆ ՝ՌԽԸ (1591):

43. ՂԱՐԱԲՈՒԼԱՂ ԳՅՈՒՂ

Գյուղամիջում հին հուշարձաններ չկան։ Այս և Ավետարանոց ու Վերին Թաղավարդ գյուղերի արանքում, մի բարձր բլրի վրա գտնվում է Ղևոնդյանց կամ տեղական բարբառով Ղոնղիկ անապատը։ Անապատի ներկա շենքերը և նրանց արձանագրությունները վերաբերում են XIX դարին։ Ավերակների մեջ կան մի քանի հին խաչքարերի և ճարտարապետական մասերի բեկորներ, սակայն առանց արձանագրության։

Գյուղից հարավ-արևմուտք, մոտ չորս կիլոմետր հեռու, գտնվում է, Հովհաննես անունով մատուռը, որի արևմտյան մուտքից վեր ապուցված փոքր խաչքարի վրա մնում է հետևյալ արձանագրությունը.

503.



ԽԱՉՈՍ ՄՈՒՂՏԱՍԻ ՄԱՐՏԻՐՈՍԻ. ԹՎԻՆ՝. ՝ՌԿԷ: (1618).| ՊԼԵՅՏՐՈՍ.

ՔԷ ՌԿԷ
ՊՏՐՈՍ

Ծանոթ. Պետրոսը հավանաբար խաչքարը կազմող վարպետն է։

44. ԱՎԵՏԱՐԱՆՈՑ ԿԱՄ ՋԱՆԱՀՋԻ ԳՅՈՒՂ

Գյուղի Ավետարանոց անունն ավելի հին է և ավանդաբար կապվում է Վաչագան Թագավորի հետ, որն իբր նեղվելով պարսից Պերոզ Թագավորից, մի ավետարան դրկած, առանձնանում է այս գյուղը և որպես ճգնավոր անցկացնում իր օրերը։

Գյուղի երկրորդ ծաղկումը կապված է մելիքական շրջանի հետ, երբ այն դառնում է վարանգյալի մելիքների նստոցը։ 1682 թվականին կովկասյան լեռնականներն ավերում են Սևանա լճի ավազանի գյուղերը։ Այդ ժամանակ Շահնազարյանների տոհմից Մաղրալում նըստող Մելիք Հուսեյինը իր եղբորորդի Մելիք Բաշիի հետ վերցնելով իրենց ենթակա ժողովըրդի մի մասին, քոչում և հաստատվում են Ավետարանոց գյուղում, ապա պարսպապատելով գյուղը, այն դարձնում ուժեղ ամրացված բերդ ու վաբանդալի մելիքանիստ ավան։

Այս գյուղից էր XIX դարի ռուսական բանակի նշանավոր գեներալ Մագաթովը, որը հետագայում դարձավ Ավետարանոցի տերը և այնտեղ հիմնեց իր ապարանքը։

Ավետարանոց գյուղը ականատես է եղել բազմաթիվ պատերազմների և արյունահեղությունների, որոնցից արժանահիշատակն է 1733 թվականին կատարված դեպքը։ Թուրք-պարսկական պատերազմների այդ տարին Ավետարանոցում էր տեղավորված տաճկական մի դորաբաժին՝ Սուլեյման բեկի հրամանատարությամբ, որը ավերածություններին միացնում էր նաև հայ կանանց պատիվն արատավորող իր ցինիկ գործարքները։ Ծողովուրդը չհանդուրժելով դրանք, ոտքի է կանգնում և մի գիշերվա ընթացքում Մելիք Հուսեյինի կին Աննայի և

դուստր Գալանեի գլխավորությամբ ոչնչացնում ամբողջ զորաջոկատը։ Գալանեն հետագայում դարձավ միանձնուհի կուսանոցում, իրեն նվիրեց գրչությանն արվեստին։ Նրա ձեռագիր Ավետարանը արվեստի փայլուն կոթող է։

Ավետարանոց գյուղում կան հետևյալ պատմական հուշարձանները.

Ա. Կուսանաց անապատ. գտնվում է գյուղի եզրին՝ մի ժայռաբլրի վրա. շինված է 1616 թվականին։ Վերանորոգվել ու նոր շենքերով հարստացվել է XVIII գարում։ Եկեղեցին մի փոքրիկ թաղածածկ շենք է, կառուցված անտաշ քարերով. արևմուտքում ունի փոքր գավիթ, որը և ծառայել է որպես դամբարան մելիքների ու նրանց ընտանիքների, ինչպես և մալրապետների համար։ Հնում այստեղ եղել են ավելի շատ հանգուցյալներ. հրատարակիչները դրանցից հիշատակում են Մանվել վարդապետին, Մելիք Միրզային, Մելիք Հուսեյինին, Մելիք Հովսեփին և մալրապետներին. ցավոք՝ դրանցից ոչ մեկի տապանագրերը չեն արտագրվել։ Տեղամ ալժմ պահպանվել են մեր գծագրածները միայն, երեք տապանագիր և մեկ գերեզմանաքար՝ առանց գրության։

Անապատը շրջափակված է եղել պարսպով, որի ներսում եղել են տնտեսական շենքեր և խուցեր. այդ բոլորի միայն չնչին մասերն են պահպանված։

Բ. Մելիքական ապարանքներ. գտնվում են գյուղի բարձրադիր մասում. դրանցից Մելիք Բաղիինը, որի վերին հարկը կառուցել է Մադաթովը և վերածել բնակարանի, ալժմ ավերակ է, իսկ Մելիք Շահնազար II-ինը դեռևս շեն է։

Գ. Գերեզմանատուն. գտնվում է գյուղի արևմտյան կողմում. շատ հին ծագում է ունեցել, ուր և ավանդաբար գտնվում էր Համամ թագավորի գերեզմանը. ավելի նոր մասում եղել են մելիքների և նրանց մերձավորների գերեզմանները։ Ալժմ այդ բոլորից ոչինչ չի մնացել տեղում։

Դ. Ս. Աստվածածին. եկեղեցի, գտնվում է գյուղամիջում, ցածրադիր վայրում. մեծ և թաղակապ շենք է՝ կառուցված 1651 թվականին, համակ սրբատաշ քարերով։

ԱՆԱՊԱՏԻ ԵԿԵՂԵՑՈՒ մուտքի բարավորին, անարվեստ գրերով իրար տակ երեք արձանագրություն.

Չ
ԵԿՂՑԻՍ
ԹՎԻՆ ՌԿԵ
ԹՎԿՆՌՃԻԵ
ՇԱԲՆԻՆ ԱՎՐՊՆԱՌՎԱ
ՅԻԾԱՄԿԵ ԴՈՒՐՍ
ԿՈՅԱԽՈՍՐՎԻՆ ԱԾՆՈՂԱՑ

504. Ա. ՉԵԿԼԵՂԵՑԻՍ| ԹՎԻՆ :ՌԿԵ: (1616)

Մանոթ. Հավանաբար շինության թվականը։

Հրատ. Բարխուդարեանց, 96, Լալաեան, II, 42։

505. Բ. ԹՎԿՆ :ՌՃԻԵ: (1676). ՇԱԲՆԻՆ ԵՎ ՎԱՐԴԱՊԵՏՆ . . . :

Մանոթ. Հրատարակիչը թվականից հետո վերծանել է «Շահնազարին և վարդապետ Գրիգորին», բայց իրականում այդպես չէ. տե՛ս գծագիրը։

506. Գ. ՑԻՇԱՏԱԿ Է ԴՈՒՐՍ| ԿՈՑՍԻ ԽՈՍՐՈՎԻՆ ԵՎ ԾՆՈՂՑ։

Հրատ. Բարխուդարեանց, 96։

507. ՏԱՊԱՆԱԳԻՐ։ գտնվում է Գավիթ–դամբարանում. սպիտակավուն է, բաղկացած բարձից և տապանաքարից. մի երեսին սաղ նվագող, դիմացը՝ երեք պարողները, ապա ևս երկու ֆիգուր, մեկի ձեռքին հայելանման իր, իսկ մյուսինը՝ կենաց ծառ։ Բոլորի դիմացը ուտելիքների պնակներ են, անկյունում առանձին մի ֆիգուր՝ ձեռքին գավ և բլիթ։ Մյուս երեսին՝ երեք հեծյալ և մի թամքած ձի, որի վրա նստել է ուղում թռչունը։ Արձանագրությունը երեք երեսներին և բարձի վրա՝ օղակաձև.

ԱՅՍԷՅԱՊԱՆ+ՄԷԼԻՔ ՇԱՀՆԱԶԱՐԻ+ՈՐԴԻՄԷԼԻՔ
ՅԻՍԷՒՆ+ՔԼ ՌՃՁԵ+ՈԳԵՄ ՋԲԱՆՍՊՈՎԵՍԳԻ+Ի ՎԵՐԱՅ
ՄԵԼԻՔ ՀՈՒՍԷՅՆԻ+Ջ ՈՐԳԻՑ ՅԱՅԱՊԱՆԻ+ՍԱԷՐՏՐԵՐԿ

ՐԻՆՎԱՐ ՈՐԷ ԱՅՇՆ ՔԼ ՌՃԾԸ
Ի+ԼԵՄԱՍՍ
ԳԵՂԻ+ ՍԱՅ
ԷՐՀԱՅՈՒՍԵ
ՂԱՆՈՒԼԻ+
ՈՂՈՐՄԷՐԱՄ
ԷՆԱՋԳԻ+ Կ
ԵՐՊԱՐԱՆՕՔ
ՆԷՐԳՈՒԵԼԻ

ԹԱԳՊԱՐՁԱՆԴՀԱՅՈՅԱՋԳԻ+ՅՈՅՁԿՈՂՈՐԵԱՅԱՋԳԻՆԴԱՉԿԻ+ՊԱՏ

ԼՈԿՅՈԼ ՀԻՍ ՅՈՒԻՍՀՈՒՇՈՒՀՅՈՆՆՅՁԾՍՈՈ+ԻՀԸՂՈՅՈՈՕՇՁԷՔՈՁՆ

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՄԷԼԻՔ ՇԱՀՆԱԶԱՐԻ
ՈՐԳԻ ՄԷԼԻՔ| ՅԻՍԷՒՆ, ԹՎ. :ՌՃՁԵ: (1736):
ՈԳԵՄ ՋԲԱՆՍ ԳՈՎԵՍԳԻ,
Ի ՎԵՐԱՅ| ՄԵԼԻՔ ՀՈՒՍԷՅՆԻ,
ՋՈՐ ԳՐԵՅԻ ԱՅՍ ՏԱՊԱՆԻ:
ՍԱ ԷՐ ՏԷՐ. ԵՐԿ|ՐԻՆ ՎԱՐ|ԱՆԴԱՅ|Ի,
:ԼԵ: (35) ՄԱ|ՍՆ| ԳԵՂԻ.
ՍԱՅ| ԷՐ ՀԱՅՈՎ ՍԵ|ՂԱՆՈՎ ԼԻ,
ՈՂՈՐՄԷՐ Ա|Մ|ԷՆ ԱՋԳԻ.
Կ|ԵՐՊԱՐՆՕՔ|Ն ԷՐ ԳՈՎԵԼԻ,
ԹԱԳ ՊԱՐՁԱՆՔ ՀԱՅՈՅ ԱՋԳԻ.
ՅՈՅԺ ԿՈԴՈՐԵԱՅ ԱՋԳԷՆ ԳԱՋԿԻ,
ՊԱՏԵՐԱԶՄԵԱՅ ՅԵՏ ՕՍՄԱՆՅԻ.
ՍԱ ՈՁ ԵՏ ՀԱՐԿ ԹԱԳԱՒՈՐԻ,
Ա|ՄՈՒՐ ՊԱՐՍՊ ԷՐ Ա|ՇԽ|ԱՐՀԻ|:

ՈՐ Է ԵԱՇՆ ԹՎ|ԻՆ| :ՌՃԾԸ: (1709)

Հրատ. Րաֆֆի, Համառօտ մելիքութիւնները, էջ 49 (ուղղագրական շտկումներով):

508. *ՏԱՊԱՆԱՔԱՐ, նախորդի մոտ, երեսին, մի շարքի վրա երեք պարոններ և նվաղող, ապա հեծյալ, որի ետևում թամքի վրա նստած թռչուն, իսկ դիմացը՝ հրացան. ներքևի շարքում երկու մատուռակ և ըլիթներ. ստորին մասում 3 տող.*

ԱՅՍԷ ԴԱՊԱՆՄԷԼԻՔ ՊԱՂՐԻ ՈՐԴԻՄԷԼԻՔ ՄԻՐՋ
ԱՅԲԷԿԻՆՔԼԻՆ ՌՃՂԳՆՈԵՄԲԵՐԻՅԱՒՆԱՆ
ԱԾՓՈԻԵՅԱԻ ՋՕՎ ՈՂԱՐԴԱՈՂՈՐՄԻԱՍԻԱՄԷՆ

ԱՅՍ Է ԴԱՊԱՆ ՄԷԼԻՔ ՊԱՂՐԻ ՈՐ-
ԴԻ Օ՛ԷԼԻՔ ՄԻՐՋ|ԱՅԲԷԿԻՆ. ԹՎԻՆ
:ՌՃՂԴ: (1744). ՆՈԵՄԲԵՐԻ :Ի: (10)
Ա|Ր|ԱԻՈՅՏՆ Ա|Ր| Ա՛Ծ. ՓՈԻԵՅԱԻ. ՋՕՎ
ՈՐ ԳԱՐԴԱ ՈՂՈՐՄԻ ԱՍԻ ԱՄԷՆ:

509. ԿՈՒՄԱՆԱՑ ԱՆԱՊԱՏԻ եկեղեցո- վեմ-քարի վրա եղել է.

Թվ՛ին՝ ՌԿԵ: (1616). Ես Աբաս Հխմազգի(՞) կանգնեցի խաչս ի հայր իմ վիճակին:

Հրատ. Բարխուդարեանց, 95։

510. ՏԱՊԱՆԱԳՐԵՐ, որոնք եղել են մելիքական գերեզմանատան քարերի վրա.

Այս է տապան Մէլիք Շահնազարին,
Որ է որդի Մելիք Յիւսէինին,
Արցախ գաւառաց իշխանին,
Վարանդու տիրապետողին.
Սա էր հայր Մէլիք Ջումշիտին,
Ըստ Ռուսաց պլկովնիկին,
Ազնիւ ոմն Հայոց ազգին,
Արի և քաջ զօրավարին.
Խնդրեմ առնել զայս արժանին
Միոյ բերան հայր մեղայիս.
ՌՄԽ: (1791) թվին:

Հրատ. Բարխուդարեանց, 97։ Լալաեան, II, 44։

511. Այս է տապան Մէլիք Ջումշուտին,
. . . . . Սա էր
Թոռն մեծասեռին,
Ազնիւ Մէլիք Յիւսէյինին.
Խնդրեմ առնել զայս արժանին,
Միոյ բերան հայր մեղայիս.
Թվ՛ին՝ ՌՄԿԱ: (1812) Ապրիլի ԻԵ: (25):

Հրատ. Բարխուդարեանց, 97։ Լալաեան, II, 44։

512. Այս է տապան Մէլիք Ջհանբախշին,
Իշխող Վարանդայ զաւառին
Ազնիւ որդոյ Մէլիք Շահնազարին.
Վախճանեցաւ 1822:

Հրատ. Բարխուդարեանց, 98։ Լալաեան, II, 44։

513. Մէլիք Խուդաբ իշխող Վարանդայ,
Թոռն ըստ մարմնոյ Մէլիք Ջումշուտայ,
Այս նորա տապան յորում մարմնով կայ,
Կենդանի հոգւով միշտ և յարակայ,
Ամաց հառասնից եւ սա յաշխարհէ,
Ջերծ արդ գտանի յամենայն չարէ.
Զայս վէմ եւ շինել առն իւրում ի ձօն,
Ի պատիւ սորա՝ կին սորին զզօն.
Թվ՛ին՝ ՌՄՁԲ: էր (1833):

Հրատ. Բարխուդարեանց, 98։ Լալաեան, II, 44—45։

514. Այս է տապան Մէլիք Ցիւսէյինի որդի . . . . Աւաճեանցին. թվ՚ին՝ :ՌՄՀԲ: (1823):

Հրատ. Բարխուդարեանց, 98։

515. Այս է տապան Մէլիք Ցիւսէյինի որդի Մանասան Բէկին. թվ՚ին՝ :ՌՄԾԶ: (1807):

Հրատ. Բարխուդարեանց, 98։

516. Այս է տապան Մէլիք Շահնազարի որդի Մէլիք Ցիւսէյինին. թվ՚ին՝ :ՌՄԾ: էր (1801):

Հրատ. Բարխուդարեանց, 98։

ՆՈՒՅՆ ԳԻՐՔԶՄԱՆԱՏԱՆԸ ԵՂԵԼ ԵՆ

517. ՏԱՊԱՆԱՔԱՐ, աջ կողմում թագավորի պատկերը, աջ ձեռքին խաչ, նրա- տած ձիու վրա. ետևից երախը լայ վիշապ. վրան եղել է կիսեղծ արձանա- գրութ յունն։

Ի :ՈՂ: (1241) . . . ննեց Հա . . . թգաւորի Աղվց . . . ես տէր Մասուց գրեցիք այս. ով որ կարդէ Ա֊ծ. ողորմի ասէ.

Մանոթ. Համարվում է Աղվանից թագավոր Համամ իշխանի գերեզմանաքարը։ Եթե ճիշտ համարվի դա, ապա ուրեմն այդ քարը նորոգել է և արձանագրությունը գրել ումն Մա- սուն, Համամից շատ հետո, որը IX դարի գործիչ էր։ Այս գերեզմանաքարի մոտ եղել է մեկ ուրիշը ևս՝ թագուհու պատկերով, բայց անարձանագիր։ Այժմ ոչ մեկը տեղում չեն։

Հրատ. Բարխուդարեանց, 98—99։

518. ՏԱՊԱՆԱՔԱՐԻ վրա եղել է.

Այս խաչս Թորոս այդպ. թվ՚ին՝ :ՈՋ: (1157) ար(էր):

Մանոթ. Դատելով լեզվից, թվականը սխալ է նշանակել հրատարակիչը, այն պետք է լինի՝ ՌՋ։

Հրատ. Բարխուդարեանց, 98։

519. ՏԱՊԱՆԱՔԱՐԻ վրա եղել է.

Այս է հանգիստ Մուրադի Ղաթիոնա Գաջի (խաջի) Վաւանցդայ գավառ. հմուտոյն ասպարեսի.

Մանոթ. Հրատարակիչը այս միացրել է «Համամի» տապանագրին, որոնք լեզվի տեսա- կետից անհարիր են։

Հրատ. Բարխուդարեանց, 98—99։

520. ՏԱՊԱՆԱՔԱՐԻ վրա, որը գտնվելիս է եղել մի պարտեզի մեջ.

Անուան Մէլիք Շահնազարին, որ է որդի Մէլիք Սէյինի. այն ժամանակն որ Կուրնին եկաւ քուին .ՌՃՂՔ: (1750) էր, որ դալաս ընեցի. ով որ կարդա, մէկ բեռան Աստուած ողորմի ասի. ամէն։
Այս է տապան Գաբրիէլի որդի Դաւթին :թվ՚ին՝: ՌՄՆԸ (1799):

Հրատ. Բարխուդարեանց, 96 (համարում է բերդի պարիսպները շինող վարպետը)։

521. ՄԵԼԻՔ ՇԱՀՆԱԶԱՐՑԱՆՆԵՐԻ ապարանքի գարբասի ճակատին գրված է եղել.

Այս ամարաթս Մէլիք Շահնազարի որդի Սէյիճ Բէկիճ, որ է այս շինութիւնս. որ շինել տուած էճմճ է. թվիճ: ՌՄԼԵ: (1786):

Հրատ. Բարխուդարեանց, 95; Լալաեան, II, 32,

522. ԳՅՈՒՂԱՄԻՋԻ Ս. ՍՏԵՓԱՆՈՍ եկեղեցու մուտքի բարավորի վրա՝

թվին :ՌՃ: (1651)

Հրատ. Բարխուդարեանց, 94,

ՀԱՎԵԼՎԱԾ

Գյուղի եկեղեցիներում պահվել են արծաթյա խաչեր, որոնց վրա եղել են հետևյալ արձանագրությունները.

523. Ցիւաւակ է խաչս տէր Սուաճել վարդապետիճ. :ՌՃՀԹ: (1670):

Հրատ. Ջալալեանց, 248,

524. Այս է ճեան Քրիստոսի և բարեխօս տեր Բարսեղ եպիսկոպոսիճ, Գրիգորիսի՝ որ այժմ Մաւաս էոչի. թվիճ :ՌՃԺ: (1661).

Հրատ. Ջալալեանց, 248,

525. Սուրբ խաչս յիւաւակ է Մէլիք Բաղուճ և իւր կողակից Մարիամիճ, ի դուռն Ամարաւայ. թվիճ հայոց :ՌՃԺ: (1661):

Հրատ. Ջալալեանց, 248,

ՄԱՐՏՈՒՆՈՒ ՇՐՋԱՆ

45. ՀԱՑԻ ԳՑՈՒՂ,—ԲՈՒՒ ԵՂՑԻ

Այս անունով է կոչվում Հացի գլուղից դեպի արեելք դանվող հուշարձանների մի մեծ խումբ, որը սփռված է լալնանիստ ու բարձր բլրի ստորոտից սկսած մինչև դագաթը։ Կանգուն և կիսավեր հուշարձանների վրա պահպանված արձանագրութլուննները հիմնականում վերաբերում են XII—XIII դարերին, բալց մի քանի ճարտարապետական բեկորները և ժողովըրդի մեջ պահպանված ավանդութլուննները հաստատում են այդ վայրի շատ ավելի հին, մինչև հեթանոսական ժամանակները հասնող մշակութլթի դոլութլունը։

Հնադույն բեկորներից առանձնապես նշել ենք մի քանի քառակող կոթողների մասեր, որոնք վերաբերում են V—VII դարերին. դրանք գտնվում են բլրի դագաթի եկեղեցիների շրջապատում, ցրված վիճակում և ծածկված են թփերով ու մացառներով։ Մենք այդտեղ տեսանք մի կոթողի բուն, երկու խոլակ և երեք խարիսխներ՝ այդ դարաշրջանին բնորոշ երկրաչափական և բուսական զարդաքանդակներով և հավասարաթև խաչերով։

Կանգուն և կիսավեր հուշարձանները հետևյալներն են.

Ա. Երկու իրար կից եկեղեցիներ, փոքր, որոնց մուտքերը բացվում են մի ընդհանուր գավթի մեջ. գավթի ծածկն ավելի բարձր է, քան եկեղեցիներինը և նստած է որմնամուլթերով խաչավորված կամարների վրա։ Բոլոր երեք շենքերն էլ կառուցված են անտաշ քարերով. սրբատաշ և գեղեցկորեն զարդարված են հարավային եկեղեցու և գավթի մուտքերը։ Այդ եկեղեցու մուտքը զարդարված է շախմատաձև ուռուցիկ քարերով, և կենտրոնում նման ձևի խաչ է.

Բ. Եկեղեցի-մատուռ. գտնվում է նախորդների մոտ, արևմտյան կողմում. շինված է անտաշ քարերով. մուտքը սրբատաշ է և նախորդի նման ուռուցիկ, ձևավորված է ռոմբաձև զարդերով, ճակատին ուռուցիկ խաչ։ Մուտքի շրջանակներից դուրս, երկու կողմերից առանձին քարերի վրա հուշկապարիկների քանդակներ են, որոնցից մեկի մոտ Խաչենիկ վարդպետի արձանագրութլունն է։

Գ. Եկեղեցի, փոքր, գտնվում է բլրի ստորոտում, դեպի Նորաշենիկ գլուղը տանող ճանապարհի եզրին. նախորդների նման շինված է անտաշ քարերով և նույնպես գեղեցիկ ձևավորված մուտք ունի, որի շրջանակներից դուրս, երկու քարերի վրա պատկերված են սիրամարգեր, արևմտյան պատի վրա վարդպետ Շահենի արձանագրութլունն է՝ առանձին քարի վրա։

Դ. Որմնափակ խաչքարեր. երեք հատ, բոլորն էլ խիստ վնասված և կիսավեր, գտնվում են բլրի ստորոտից մինչև գագաթը տանող ճանապարհի եզրերին։ Դրանցից երկուսի ճակատներին գրված են չորսական և մեկին՝ երկուական խաչքարեր, բոլորն էլ գեղաքանդակ և բարձրարվեստ, դժբախտաբար հողմահարված և վնասված։ Խաչքարերը շրջապատող որմերի երեսպատման սրբատաշ քարերը թափված-կորած են, մնում են կրաշաղախ լիցքերը, նույնը և ճակտոնների մասում։


Այս հուշարձանների մասին Մ. Բարխուդարլանցից սկսած գրականութլան մեջ է մտել երկու սխալ կարծիք. Ա. Որ իբր դրանք բացօթլա բեմեր են։ Բ. Որ, ինչպես եկեղեցիներում,

այնպես էլ այս բեմերի մոտ կարգված են եղել հատուկ վանականներ, որոնց պաշտոնն է մշտապես աղոթել դրանց մեջ թաղված Աղվանից թագավորազների և իշխանազների հոգու հանգստյան համար[1]։ Իրականում այդ բեմ կոչվածները նույն որմնափակ խաչքարերն են, մի տարբերությամբ միայն, որ դրանց խաչքարերը փոքր-ինչ խորն են ագուցված։ Դրանց վրա, ինչպես և եկեղեցիների պատերին գրված արձանագրությունները ո՛չ ժամանակով և ո՛չ էլ բովանդակությամբ չեն համապատասխանում Բարխուդարյանցի ենթադրությանը։

Բլրի գագաթի եկեղեցիների շուրջը հնում եղել է մեծ գերեզմանատուն, որի չնչին բեկորներն են մնացել այժմ։

Բոլոր հուշարձանները շինված են նույն բլրի վրա՝ այժմ էլ օգտագործվող քարհանքի շերտավոր-սալանման սպիտակ կրաքարով, որը կոտրելով, իրար վրա են շարել ագուսի նմանությամբ։ Բանդակազարդ և արձանագրված քարերը ագուցվել են կանգնած դիրքով։

526. Ա. ԵԿԵՂԵՑԻ, փոքր, գտնվում է բլրի գագաթին. արևմտյան մուտքի հյուսիսում, մի քարի վրա հուշկապարիկի քանդակ և արձանագրություն, 8 տող.




ՉԽԱ|ՉԵՆԷԿ| ՎԱՐԴ|ՊԵՏ| ՍԲ. ԷԿԵՂ|ԵՑՈՑՍ Ց|ԱՂԱՒԹՍ ՑԻՇ|ԵՑԷՔ Ի ՔՍ.

Ծանոթ. Վարդպետ = ճարտարապետ, կառուցող և ոչ վարդապետ, ինչպես համարել են հրատարակիչները։

Հրատ. Բարխուդարեանց, 125; Լալաեան, II, 48; Լուսանկ. 100.

527. Բ. ԵԿԵՂԵՑԻ, փոքր, գտնվում է բլրի ստորոտում, ճանապարհի եզրին՝ արևմտյան մուտքի հյուսիսում, արտաքուստ, մի քարի վրա 4 տող.




ՉՆԱՀԵՆ Վ|ԱՐԴԱՊԵՏ| ԵԿԵՂԵՑՈՑՍ Ց|ՇԵՑԷՔ Ի ՏՐ։

Ծանոթ. Շահենին համարում ենք եկեղեցու ճարտարապետը, հետևաբար վարդպետ և ոչ վարդապետ։

Հրատարակիչներն արձանագրության առաջին տառը, որ անվան նախդիրն է, անջատել և սխալմամբ Չ-են վերծանել՝ այն համարելով թվական։

Հրատ. Բարխուդարեանց, 125; Լալաեան, II, 48; Լուսանկ. 101.

528. Գ. ԵԿԵՂԵՑՈՒ արևմտյան մուտքից վեր, արտաքուստ, 5 տող.



. . . . . | ՀՆ·ԱԵՒԵՂ· · | ԻՄՎԱՐՅԱՄ· . . . . . .
. . . . . | ՈՒՆԱՓԱՇԻՆ | ԵՅԱՓՉԵԿԵՂԵՑԻՍԲԱՉՈՒՄ
ՒՇԽԱՄ· . . . | ՅԵՊԻՍԿՈՊՈ | ՍՈՒԹԵՄՐՅՈՅԱՆԻՍԻԵՒՄՐ
ՆԵՐՍԻՍԻՅ· · | ՄԱԿՅՈՓՈՑԱՑ | ԵՒԾՆՈՂԱՑՄԵՐՈՑ . . . .
. . . . ԿԱՐԴԷ | · ԱՂԱՒԹՍՅԻ · | ԷՓՉԱԾԽԱՄՈՂՓԵԿԵՂԵՑՈՅՍ

. . . . ՐՔԱՂԱՆՆ. ԵՒ ԵՂԲԱՐՔ ԻՄ ՎԱՐՉԱՄ . . . . ՈՒՆԱՓԱ ՇԻՆԵՑԱՔ ՉԵԿԵՂԵՑԻՍ ԲԱՉՈՒՄ| ԱՇԽԱՏՈՒԹԲ. ՑԵՊԻՍԿՈՊՈՍՈՒԹԵ ՏՐ. ՑՈՀԱՆԻՍԻ ԵՒ


[1] Բարխուդարեանց, *Արցախ*, 125, Լալաեան, *Ադպ. հանդ.*, II, 48։ Հ. Հ. Ոսկեան, *Արցախի վանքերը*, Վիեննա, 1953, էջ 35։

ՏՐ.| ՆԵՐՍԻՍԻ. ՑՐԻՇԱՅՏԱԿ ՀՈԳՈՑԱՑ ԵԻ ԾՆՈՂԱՑ ՄԵՐՈՑ . . . ՐՈՐՔ՝ ԿԱՐԴԷՔ ՑՅԱՂԱԻԹՍ ՑԻՐՇԼԷՔ ԶԱՇԽԱՏՈՂՔ ԵԿԵՂԵՑՈՑՍ:

Ծանոթ. Հովհաննես և Ներսես եղբայրներից առաջինի մասին այլ արձանագրություններում տեղեկություններ կան 1195—1235 թթ., իսկ երկրորդի՝ 1235—1260 թթ. երկու եղբայրներն էլ եղել են Աղվանից կաթողիկոսներ։

Հրատ. Բարխուդարեանց, 125։ Լալաեան, II, 48։

529. ԽԱՉՔԱՐ, որմնափակ, բոլոր կողմերից որմերը քայքայված և թափված. դրանք եղել են անտաշ քարերով շինված. կենտրոնում մնում են երկու խաչքարերը, որոնց ղլխի վեց քարերի վրա եղել է ընդարձակ արձանագրություն. այժմ չորս քարերն են մնում, որոնցից մեկի արձանագրությունը բոլորովին չի կարդացվում, 9 տող.



ՐԹՎԻՆ:ՉԺԹ: (1270) Ի ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵ. ՐՏՐ՝. ԸՍՏՐԵՓԱՆՈՍԻ ԵԻ ՑԷՊԻՍԿՈՊՈՍՈՒԹԵԱՆ| ՏԷՐ ՆԵՐՍԷՍԻ ԱՐՍՏՈՒԾՈՎ ՄԵՐ ԵՂԲԱՐՑՍ| . . . ՎԱՐԴԱՊԵՏԱՑ ԱՐԿԱԹ| . . . ԱՄԻԿ . . . ՑՈՐԴԵԱՑՍ . . . ԵՉԵՒՐ:

ՐՎԻՆԱՉ|Մ:.

Ծանոթ. Բարխուդարյանցի ժամանակ թեև վնասված, բայց ավելի ամբողջական է եղել. Թվականի տողը և այլ մասեր, որոնք համարել ենք ճշտված, լրացնում ենք նրանից՝ մանր տառերով։

Հրատ. Բարխուդարեանց, 126։
Լուսանկ. 102.


530. ԽԱՉՔԱՐ, որմնափակ, մեծ. որմերը եղել են անտաշ քարերից. տեղում կանգուն են իրար կից հինգ սրբատաշ խաչքարեր, որոնց վրա եղել է ընդարձակ արձանագրություն, մնացորդները պահպանվել են երկրորդի և հինգերորդի վրա.

ԻՐՈՍԻ . . .	. . . . .	. . . . .	. . . . .
ՈՎԱՅՐԵՑՆ	. . . . .	. . . . .	ԱՍՒԱԻՓՆԻՆԵ
ՉՍՆՊԱՏՅԻ	. . . . .	. . . . .	ՍՆՊԱՏԱՈ
ՉԳԷԷՐԼԵԼՈՉ	. . . . .	. . . . .	ԹԱՐԱԷՄ
ԻՄԻՆՆՍՆՊԱՏ	. . . . .	. . . . .	ՍԲԱՂԱԻԹՍ

ԻՒՐՈ . . . . . .
ՈՎԱՑՐԵՑՆ . . . . . ԱՍՎԱԻՓ ՇԻՆԵՐՑԻ.
ՉՍՆՊԱՏ ՑԻ . . . . ՍՆՊԱՏԱ ՈԼՉ ԻՄՈ . . .
ՉԳԷԷՐԼԵԼՈՑ . . . . . ՐՄԽԻԹԱՐԱ ԷՄ . .
Ի ՄԻՆՆ ՍՆՊԱՏ . . . . . ՍԲ ԱՂԱԻԹՍ . . .

Հրատ. Բարխուդարեանց, 126։
Լուսանկ. 103.


531. ԽԱԶՔԱՐ, որմնափակ, մեծ, որմերի երեսպատման քարերի մեծ մասը թափված, նուիրեալս և ճակատոնը, որոնք սրբատաշ են։ Ճակատին ագուցված են իրար կողքի չորս խաչքարեր, որոնք այժմ ել մնում են, քարձրարվեստ են, բայց խիստ հողմահարված. դրանց գլխին երկու շարքի ութ քարերի վրա եղել է մեծ արձանագրութիւն, 6 տողով. նշմարվում են միայն վերջին երկու քարերի արձանագրութիւնները.



Ծանոթ. *Այս վիճակում է եղել նաև Բարխուդարյանցի ժամանակ։*

Հրատ. *Բարխուդարեանց, 125։*
Լուսանկ. *104.*

532. ՆԱԽՈՐԴ ՈՐՄՆԱՓԱԿ ԽԱԶՔԱՐԻ հյուսիսային որմի ստորին մասում, 7 տող.




ԵՍ ԽԱԶԻՆԵ|Կ ԱՆԵՑԻ ՎԱՐ|ԴՊԵՏ ՍԲ. ՆՇ|ԱՆԻՍ, ԻՐԴԻ ՎԱՐՀԱՄԱ. ՈՐՔ ԿԱՐ|ԴԷՔ ՑԱՂԱԻԹ|Ս ՑԻ-ՇԵՑՔ Ի ՔՍ։

Ծանոթ. *Վարդպետ=ճարտարապետ։ Հրատարակիչը չհասկանալով այդ և սխալ վերծանելով առաջին երկու տողերը, միանգամայն այլ իմաստ է տվել արձանագրութեանը։*

Հրատ. *Բարխուդարեանց, 126։*
Լուսանկ. *105.*

533. ԽԱԶՔԱՐ, ագուցված է Բ. եկեղեցու հյուսիսային պատին, ներքուստ. ձախ մասում $^1/_3$-ով կտրված և ճակատի մասը ջարգված խաչի ձախ կողմում միայն անորոշ տառեր, իսկ աջում՝ 12 տող.



ԳԵՐԴ ՈՒ |ՈՒՔԱՆ| ՀԱՑՐԻԿԱՑՐ| ՈՐԴԻՔՍ ԿԱՆ|-ԳԵՑ|ԱՔ| ՁՍԲ. |ԽԱՁՍ Ծ|ՆՈՂ|Ա՝|Ց Մ|Է|Ր|ՈՑ. ՈՐՔ՝| ԿԱՐ|ԴԱ|ՑՔ՝ |Ց՝|ԱՂ|ԱՒԹՍ ՑԻՇԵՑՔ՝։

534. Ա. ԵԿԵՂԵՑՈՒ ներսում ընկած մի քարի վրա եղել է.

թվ|ին| :Ձփթ: (1270) · · ի տէրութեան · · sr. Սահմանուսի, յե՛պիսկոպոսութեան sr Ներսիսի. ես Մխիթար որդի Խ · · · կանգնեցի զխաչս։

Հրատ. *Բարխուդարեանց, 126։ Ալաեան, II, 47։*

535. ՏԱՊԱՆԱՔԱՐԻ վրա, որը գտնվել է Ա. եկեղեցու ներսում.

Այս է տապան Տ՚ր՚ Յօհաննիսին, որդի Տ՚ր՚ կարապետին. թվիլ՚ն: ՌՄԽԷ: (1798):

Հրատ. Լալայեան, II,, 47։

536. ՏԱՊԱՆԱՔԱՐԻ վրա, որը գտնվել է Բ. եկեղեցու մեջ.

Այս է տապան Խմիբի որդուն Սարգսին. էն ժամանակն որ Պապա Ուշաղին թվիլ՚ն :ՌՃՀԴ: (1725). որ եկն. ես Թադուդն առաջ տուդ իլի. այանքն ճդովն սպանեցէն, ետրեցացու Աթային. Հերփէին:

Հրատ. Բարխուդարեանց, 127։

46. ՊԶՊԱԼԱ ԳՅՈՒՂ

Ալս գլուղում և շրջակալքում գտնվող միջնադարլան հուշարձանները XVII դարից ավելի հին չեն. արձանագրութլուններ ունեցողները հետևյալներն են.

Ա. Մեծ ևահատակ, մատուռ, գտնվում է գլուղից հյուսիս, ձորի մլուս կողմում, բարձր սարի գագաթին, շարված է կիսամշակ քարերով. մատուռի մեջ է անտապանագիր մի գերեզմանաքար. պատերին կան արձանագրութլուններ։

Բ. Ս. Աստվածածին, եկեղեցի, գտնվում է գլուղի մեջ, թաղակապ շենք՚է, կիսամշակ քարերով շինված։

537. ՄԵԾ ՆԱՀԱՏԱԿ, արևմտյան պատի մեջ ագուցված մի քարի վրա, արտաքուստ, 4 տող.

ԵՍՂԶՂԱԼԵՑԻՂԱՐԱՅԻԱՆՍՂԻՆԵՑԻԵԿԵՂԵՑԻՍՀԱՅՐՆ
ԻՄԱՄԻՐԻԱՆԵԻՄԱՅՐՆԻՄՄԻՐԱՄՆԵԻԵՂԲԱՅՐՆԻՄՍԱՐՈՒ
ԽԱՆՊԱՂԻԲԱԲԱՍԻԵԻԿՈՂԱՅԳԻՑՆԻՄՔԵՐԻՆ ԵԻ ՈՐԴԻՆԻՄ
ՍԱՐՔԻՍԹՒՆ ՌՃԻԵԷՐ

ԵՍ ՊԶՊԱԼԵՑԻ ՊԱՐԱՑԽԱՆՆ ՇԻՆԵՑԻ ԵԿԵՂԵՑԻՍ. ՀԱՑՐՆ| ԻՄ ԱՄԻՐԽԱՆ ԵԻ ՄԱՑՐՆ ԻՄ ՄԱԻՐԱՍՆ ԵԻ ԵՂԲԱՑՐՆ ԻՄ ՍԱՐՈԻ|ԽԱՆ, ՊԱՊԻ, ԲԱԲԱՍԻ ԵԻ ԿՈՊԱՑԳԻՑՆ ԻՄ ՓԵՐԻՆ ԵԻ ՈՐԴԻՆ ԻՄ| ՍԱՐՔԻՍ. ԹԻԻՆ :ՌՃԻԵ: ԷՐ (1676):

538. ՄԵԾ ՆԱՀԱՏԱԿ, արևմտյան մուտքի բարավորի վրա, 8 տող.

ԵՍ ՂԿՂԷԼԷՑԻ
ԱՄԻՐԽԱՆԷՆ
ՏՂՅ ՂԱՐԱՅԽԱ
ՆՍ ԵԿԻ ՈՒԽՏՍԻ
ՄՆԱՅԱ ՏԱԿԻՍՅ
ԻՂԱՏԱԿԻ ԻՄ ԵԿԵՂ
ԵՑԻՍ ԿՈՂԱԿԻՑ ԻՄ
ՓԵՐՈՒՆ ԱՄԷՆ

ԵՍ ՊԶՊԷԼԷՑԻ| ԱՄԻՐԽԱՆԷՆ| ՏՂԼԱՅՑ ՂԱՐԱՑԽԱ|ՆՍ ԵԿԻ ՈԻԽՏՍ ԻՄ ՆԱՑԱՏԱԿԻՍ. ՑԻ|ՇԱՏԱԿԻ ԻՄ ԵԿԵՂ|ԵՑԻՍ. ԿՈՂԱԿԻՑ ԻՄ| ՓԵՐՈՒՆ. ԱՄԷՆ.

Ծանոթ. *ժամանակով մոտ է նախորդին։*

539. ՄԵԾ ՆԱՀԱՏԱԿ, հյուսիսային պատի մեջ ագուցված փոքր խաչքարի վրա. ներքուստ, 4 տող.

Խ ա չՍ
ս ան Դ
ու խտ
այն խսա

ԽԱՉՍ| ՍԱՆԴ|ՈԻԽՏ|ԱՑՆ. ԽՍԱ . . .

540. ՄԵԾ ՆԱՀԱՏԱԿ, պատի մեջ ագուցված փոքր խաչքարի վրա, 1 տող.

Խ աչս Մամուն ԽԱՉՍ ՄԱՄՈՒՆ.

541. Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ. Ներսում, արևելյան կամարի վրա.

Ես Ոհաննէս շինեցի եկեղեցիս ի հալալ ինչից իմոց. հայրն իմ Թումաճ և մայրն իմ Իւսաճ, կողակիցն իմ Խաճում, հանգուցեալ որդին իմ Ա. . .

Ծանոթ. *Համարում ենք XVII դար։*

Հրատ. *Բարխուդարեանց, 122—129։*

542. Ա. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ. Ներսում, նույն կամարի հյուսիսային երեսին.

Ես Յովհաննէս եպիսկոպոս վերակացու, շինեցի եկեղեցիս. հայրն իմ Տաղտաճ, մայրն իմ Խոճտի. եւ եղիա Խահաճայն, տէր Պողոս, տաճուտէրն Վելիհաճ. եկեղեցուս վարպետ կէսքեր, Ծակոր:

Ծանոթ. *Համարում ենք XVII դար։*

Հրատ. *Բարխուդարեանց, 123։*

47. ՆՆԳԻ ԳՅՈՒՂ

Գյուղում գտնվող եկեղեցին, համաձայն արձանագրության, կառուցվել է 1858 թ. բայց նրա պատերի մեջ ագուցված հուշարձանների վրա մնացել են երկուսը, որոնք ավելի հին են։

543. ԽԱՉՔԱՐ, ագուցված է եկեղեցու հարավային կողմի պատուհանի գրլխին, կողքի, վրան 2 տող.

ԹՎ | ՀՀԲ
ԱՂԱ | ՄԱՐ. . .

ԹՎԻՆ ՉՀԲ: (1523):
ԱՂԱ ՄԱՐ . . .

544. ՏԱՊԱՆԱՔԱՐ, փոքր, ագուցված է արևելյան պատի մեջ, արտաքուստ, 2 տող.

ԱՅՍՒՐԻԼՂԼՆ.ՒՐՌՐՌՈՐԴԻ
ՍԱՉՊԱՆԴՅԻՐՉԱԻՆՁՆՌՄԻՉՆԷՐ

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՄՈՒՐՈՒ ՈՐԴԻ ՍԱՉՊԱՆԴ ՄԻՐՉԱԻՆ. ԹՎԻՆ. ՈՒՄԻՉ: Ն ԷՐ. (1777):

545. ԽԱՉՔԱՐ, գտնվում է Ննգի գյուղից Պատավաթումը տանող ճամբին դանվող ս Գրիգոր Լուսավորիչ կոչվող թաղածածկ եկեղեցու ներսում.

ԵՍԳՐԳՈՐ
ԿԱՆԳՆԵՑ
ԻԽԱՉՍՀԱՒՐ

ԵՍ ԳՐԻԳՈՐ| ԿԱՆԳՆԵՑԻ ԽԱՉՍ ՀԱՒՐ| ԻՄ||ՑԾ ԳՐ|ԻԳՈՐԻԿԱՑ.| ՍՂՈՒՐՒՍ ՏՐ. ԳԼՐԻՔՈՐ. ԹՎԻՆ ՈՀԴ: (1225):

546. ՏԱՊԱՆՈՒՔԱՐ, ընկած է ս. Գրիգոր Լուսավորչի բակում. վրան մեկ լուծ եզներ արոր են քաշում, շուրջը՝

Խաչս Մալխուճ
Խաչ Մալխին

ԽԱՉՍ ՄՍԼՔՈՒՄԼԻՆ, ՔԱՄԱԼԻՆ:

48. ԽԱՉՄԱՍ ԳՅՈՒՂ

Գյուղամիջում կա մի թաղակապ եկեղեցի, վրան փոքր զանգակատուն. կոչվում է ս. Ստեփանոս, համաձայն ներքոգրեալ արձանագրությունների շինել է ուստա Հուսեփը:

547. Ս. ՍՏԵՓԱՆՈՍԻ մուտքի բարավորի վրա, 1 տող.

քվիճ :ԻՃ: (1651):

Հրատ. Բարխուդարեանց, 100:

548. Ս. ՍՏԵՓԱՆՈՍԻ մուտքի արևելյան կողին.

Ես ուստա Ցուսէփ եւ Գէւուրգ ըսմանցս, եկեղեցիս շինեցի յիշատակ. ով որ տեսնոյ, Աստուած ողորմի ասէ:

Հրատ. Բարխուդարեանց, 100:

49. ՂԱՎԱԽԱՆ ԳՅՈՒՂ

Եկեղեցին շինված է 1871 թ., բայց գյուղի հյուսիսային կողմում տարածվում է գերեզմանատունը, ուր կանգնած են փոքրիկ մատուռը և մի քանի խաչքարեր:

549. ԽԱՉՔԱՐԻ վրա.

քվիճ :ՉՂԼ: (1548). ես Շահատոր կանգնեցի խաչս հայր Պախա, մայր իմ Շահմաս . . . . :

Հրատ. Բարխուդարեանց, 110:

50. ԳԻՇԻ ԳՅՈՒՂ

Գյուղի եզրին, ձորակի աջ ափին, աղբյուրի մոտ կա մի մատուռ, որը կոչվում է «Ոսկյանց խաչ» և շինված է XIX դարում, բայց մոտի գերեզմանատունն ավելի հին է:

550. ԽԱՉՔԱՐԻ վրա.

Այս է տապան Պակնայզարի որդի Աղաբէկ Ղոխայիճ. :ՌՃՀԲ: (1723):

Հրատ. Բարխուդարեանց, 120:

51. ԾՈՎԱՏԵՂ ԳՅՈՒՂ


Գյուղի արևելյան եզրին, բլրի վրա գտնվում է գերեզմանատունը, որի կենտրոնում կառուցվել է Մելիք Փաշայան տոհմի դամբարանատունը: Հուշարձանների այս վերջին խումբը բաղկացած է եղել երեք իրար կից կիսագետնափոր մատուռ-դամբանատներից և մի թաղածածկ փոքր եկեղեցուց: Բոլորի մեջ եղել են մեծ, տափակ և սև քարից շինված գերեզմանաքարեր՝ առանց տապանագրերի, և դրանց գլխին կանգնած նույն քարից խաչքարեր՝ գեղեցիկ քանդակներով ու արձանագրություններով: Այժմ շենքերի միայն հիմնապատերն են մնացել՝ ներսը լցված քարի և կրաշաղախի բեկորներով: Մի քանի խաչքարերի վերին մասե-

րը մենք բաց գտանք և կազմեցինք դրանց արձանագրությունների գծագրերը, մնացածներն առնում ենք նախկին հրատարակիչներից։

Եկեղեցի-դամբարանը կոչվում է Կարմիր եկեղեցի։

551. ԽԱՉՔԱՐ, մեծ, գեղաքանդակ, կանգնած է Ա. դամբարանի մեջ, երևում է միայն վերին մասը. քիվին 2 տող.

ԹՎԼԻՆ ՈՒԼԵ: (1586) Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԻՒ. ՏՐ ԴԱՎԹԻ, ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻ. ՄԵԼԻՔ ՓԱՇԻ: ՊԵՏՐՈՍ ԷՊԻՍԿՈՊՈՍ:



Հրատ. Բարխուդարեանց, 106։ Ալաեան, II, 49։

552. ԽԱՉՔԱՐ, մեծ, գեղաքանդակ, կանգնած է Ա. դամբարանի հյուսիսային մասում. երևում է միայն վերին մասը. քիվը՝ չարդուված.

ԹՎ: ՌՒ····ՌԹԻՅՐՅՀՍԻԱՌՀՆԴՌԹԻՄԼԻՓՓԱՇԻՆՑ

ԹՎԻՆ ՈՒԻԵ: (1576) Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԻՒ. ՏՐ. ՑՈՎՀԱՆԻՍԻ, ԱՌԱՋՆԼՈՐԴՈՒԹԻ. ՄԵԼԻՔ ՓԱՇԻՆ: ՑԱՆՈՒՆ ԱՍՏՈՒԾՈՑ ԵՍ ՍԱՀԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԿԱՆԳՆԵՑԻ ՉԽԱՉՍ Ի ՓՐԿՈՒԹԻՒՆ ԵՂԲԱՒՐ ԻՄՈՑ Պ.ԱԶԱՐԻՆ. Ա.Պ.ԱԻԹՍ ՑԻՇԵՑՔՓ:

Ծանոթ. Ինչպես երեում է, առաջին տողն է եղել քիվին, մնացածը՝ ստորին մասերում, բայց հրատարակիչների մոտ չի նշված ստույգ տեղադրությունը։

Հրատ. Ջալալեանց, II, 333։ Բարխուդարեանց, 107։ Ալաեան, II, 49։

553. Ա. ԴԱՄԲԱՐԱՆ-ՄԱՍՈՒՒԻ մուտքի ճակատակալ քարի վրա.

թվիցյ :ՌՀ: (1621). Դաւիթ եպիսկոպոս. յիշատակ է եկեղեցի վաճխս nr լինի սա դաւ֊բարաւ և շիրիմ մերոց նախնեաց:

Ծանոթ. Ջալալյանցի մոտ՝ Պետրոս եպիսկոպոսո և ։ՋԾե։ թիվ։

Հրատ. Ջալալեանց, II, 33։ Բարխուդարեանց, 106։ Ալաեան, II, 49։

554. ՆՈՒՅՆ ՏԵՂՈՒՄ, վեմ֊քարի վրա.

Դաւիթ եպիսկոպոս

Հրատ. Բարխուդարեանց, 107։

555. ՆՈՒՅՆ ՏԵՂՈՒՄ, բեմի խաչի վրա

Դաւիթ աբեղա կանգնեցի զխաչս Աւտան վարդապետի Տարոնե՛ցու՝ . . և զիս իբա։

Հրատ. Բարխուդարեանց, 207։ Ալալեան, II, 49։

556. Բ. ԴԱՄԲԱՐԱՆ-ՄԱՍՈՒՒԻ մեջ, մեծ խաչքարի վրա.

Այս է Սահակ եպիսկոպոսն, nr փոխեցաւ . . . *Մյուս կողմի վրա՝* Անուամբն Աստուծոյ. ես Պետրոս եպիսկոպոս, Դաւիթ Խաճայանս կանգնեցիցիք զխաչս ի փրկութիւն Սահակ եպիսկոպոսին. աղաւթեցէք:

Հրատ. Բարխուդարեանց, 107։ Ալաեան, II, 49—50։

557. ՆՈՒՅՆ ՏԵՂՈՒՄ. հարավային պատին ապուցված մի խաչքարի բեկորի վրա, ներքուստ.

Աճուն տեառն Աստուծոյ. Ես Մեիկ Հացգերգ(?) կանգնեցի զխաչս որդոյ իմոյ Սադիկայ և որ ետայ ու Արղուն ձորոյ խոց. Աստուած ողորմի . . . .

Ծանոթ. Անշուշտ, սխալաշատ վերծանում է, հնարավոր է թերևս Մեիկ անունը ուղղել Մելիք:

Հրատ. Բարխուդարեանց, 107։

558. Դ. ՄԱՏՈՒՌԻ մեջ կանգնած գեղաքանդակ խաչքարի վրա.

Կամաւ ամենակալին Աստուծոյ, ես Մէլիք Աւան կանգնեցի զխաչս ի փրկութիւն հաւր իմոյ Մէլիք Պապին, մաւրն իմոյ Խոնդի խաթունին. ով որ յիշէ ի տէր յիշեսցի աւ Աստուած. թվ[ին] ՈՒԺԵ: ին (1566):

Ծանոթ. Ջալալյանցը Մելիք Աւան-ի փոխարեն ունի Մելիք Աղամ:

Հրատ. Ջալալեանց, II, 334։ Բարխուդարեանց, 107։ Լալաեան, II, 50։

559. ՆՈՒՅՆ ՏԵՂՈՒՄ. այլ խաչքարի վրա.

Կամաւ ամենակալին Աստուծոյ ես Մէլիք Աղամ, որդի Մէլիք Պապին, որդոյ Հախիջանայ, թոռանց որդոյն Թումասին, որդոյ մեծի իշխանին Աւանայ կանգնեցի զխաչս ի փրկութիւն նախնեաց մերոց. ով երկրպագէ, յիշեցէ ի տէր Աստուած զնեզ յիշէ:

Հրատ. Ջալալեանց, II, 333—334։ Բարխուդարեանց, 107 (առանց վերջին նախադասության)։ Լալաեան, II, 50։

560. ՆՈՒՅՆ ՏԵՂՈՒՄ. այլ խաչքարի վրա.

Իշխանութեան Թահմազին, հայրապետութեան տեառն Գրիգորիսի, առաջնորդութեան ուխտիս Սահակայ եպիսկոպոսի . . . .

Հրատ. Բարխուդարեանց, 107։ Լալաեան, II, 50։

52. ՁԱՐՏԱՐ ԳՅՈՒՂ—ԵՂԻՇԱ ԿՈՒՍԻ ԱՆԱՊԱՏ

Դանվում է մի լայնանիստ և բարձր լեռան գագաթին, որն արձանացած է Դունել Ձարտար, Ղուղի Ձարաար և շրջապատի այլ գյուղերի արանքում։ Շինված է ճեղքված քարերով, միայն մուտքը և պատուհանները ձևավորված են սրբատաշ և քանդակազարդ քարերով։ Երկու սյուների և որմնամույթերի վրա կանգնած է մի ընդարձակ դահլիճ, կենտրոնում փոքր գմբեթ՝ զանդակատնով։


Ըստ արձանագրության շինված է 1675 թվականին, ուստա Դաբրիելի ձեռքով, բայց այդ, հավանաբար, մեծ նորոգում է եղել միայն, որովհետև եկեղեցու հիմնապատերն ավելի հին են և պատերի մեջ կան ավելի հին թվականներ ունեցող մանր արձանագրություններ։ Բեմի տակ է գտնվում Եղիշա կուսի սաորերկրյա դամբարանը։ Հայտնի է, որ միայն քրիստոնեության վաղ դարերում էին եկեղեցիների բեմերի տակ նշանավոր սրբերի դամբարաններ կառուցում, ինչպես Հոխիսիմեինը՝ Էջմիածնում, Մ. Մաշտոցինը՝ Օշականում, Աղվանից լուսավորիչ Գրիգորիսինը՝ Ամարասի վանքում և այլն։

Անապատի միջավայրում գտնվել են հին մշակույթի ուրիշ հետքեր ևս. նրա մոտակա Դունել Ձարտար գյուղի եկեղեցին թեև շինված է 1787 թ., բայց նույն գյուղում ակումբ-թատրոնի և դպրոցի շենքերը կառուցելու ընթացքում բացվել էին ինչ-որ հին շինության մասեր, որոնց մի քանի քանդակազարդ բեկորները պահվել էին բակում։ Դրանք, անկասկած, IV—V դարերի բազիլիկ եկեղեցու կամ նույնիսկ սաորերկրյա դամբարանի մասեր էին՝ խիստ բնորոշ քանդակներով[1]։

Այս հուշարձանից մեր ժողովածուն պարունակում է ինը արձանագրություն, որոնցից 3-ը հրատարակվում են առաջին անգամ։

[1] *Մեր առաջարկով դրանք պետք է տեղափոխվեին Ստեփանակերտի գավառագիտական թանգարանը։*

561. ԱՆԱՊԱՏԻ արևմտյան մուտքի կիսակամար ճակատաքարին, 6 տող.




ԿԱՕՂՒ ԹԻՆԼԸ ԵՆԱԶՕ
ՐԻՆԱՅ ԵՍՆՈՒԱՍՏՏՐՅՈՀԱՆ
ԱՆՁԱՒՏԿԱՒ ԼԵԵՂԱՅՍԵՐԷ ԳՐՓՈՓՐ
ՏՐ 3 ՈՀԱՆՍՇԻՆԵՑԱՓՄԲ ԵԿՂՑՍԸՍՏ ԱՆՈՒ
ԱՆՑՍՐԸ ՈՒՀՈՅԿՈՒՍԻՆԵՂԻՇԷԻԿԹՂԿՍՈՒԹՒՆՆԵՐ
ԵՄԻՍՅԻ Ե ՏԱՆՍ ԱՂՈ ԱՆԻՑ ՈՐԻՄԱՅՐԱԹՈՈՅՆԳՆՁՍՄԱ
ՎԱՍ ՐՈ ՅԻՀԼԵԱՂԱՉԵՄՓ ՀԱՆԴԵՐՁ ԾՆՈՂՈՎՓՄԵՐՈՎՓ ՌՃԻԴ

ԿԱՐՕՂՈՒԹՒՆ. ԱՄԵՆԱԶՕՐԻՆ ԱՃ. ԵՍ ՆՈՒԱՍՏ ՏԼԷՅՐ ՅՈՀԱՆ| ԱՆՁԱՄԲ ՏԿԱՐ ԱՒԵՂԱՑՍ ԵԻ ՈՐԴԷԳԼԻՅՐ ՓՈՓՐ| ՏԼԷՅՐ ՅՈՀԱՆՍ ՇԻՆԵՑԱՓ ՍԲ ԵԿԼԵՅՂԼԵՅՑԻՍ ԸՍՏ ԱՆՈՒ|ԱՆ ՍՐԲՈՒՀՈՑ ԿՈՒՍԻՆ ԵՂԻՇԷԻ Ի ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՒՆ ՏՆ. ԵՐ|ԵՄԻԱ-ՑԻ ԵԻ ՏԱՆՍ ԱՂՈՒԱՆԻՑ ՈՐ Ի ՄԱՑՐ ԱԹՈՌՈՑՆ Գ|Ա|ՆՁ|Ա|ՍԱՐԱ„| Վ|Ա|Ս|Ն| ՈՐՈ ՑԻՇԵԼ ԱՂԱՁԵՄՓ ՀԱՆԴԵՐՁ ԾՆՈՂՈՎՓ ՄԵՐՈՎՓ :ՌՃԻԴ: (1675):

Ծանոթ. *Ամբողջ արձանագրությունը ծակծկված է գնդակներով, տառերի մեծ մասը փըշըրված են, ինչպես նաև թվականը ցույց տվողները: Մուտքի շրջանակի վերին անկյուններից փակագրերից երկրորդը ԴԱԲՐԻԷԼ պետք է լինի, որը շենքի ճարտարապետն է (տե՛ս հետևալ արձ.), իսկ առաջինը, որը ըստ բովանդակության պետք է լիներ շենքի հովանավոր ՅՈՒԱՆԸ, չի համապատասխանում արձանագրությանը:*

Հրատ. *Ջալալեանց, I, 333 (թվականը՝ ՌՃՆԴ)։ Բարխուդարեանց, 116—117։ Լալաեան, II, 46—47։*

562. ԱՆԱՊԱՏԻ արևմտյան պատի վէրին մասում, արտաքուստ, պատուհանի գլխին, խորանի մեջ ագուցված խաչքարի վրա 7 տող.



ՏՐ ԱԾ
ԵՍ ԱՆ
ՀՁԱՆ ՈՒՍԴԱ
ՅԿԱԲԸՐԷ ՅՍ ՓՍ ԼՍՇԻՆԵՑՒ


ՏՐ. ԱԾ. ՑՍ. ՓՍ· |ԵՍ ԱՆ|ԱՐՃԱՆ ՈՒՍԴԱ|Ց ԿԱԲԸՐԼԼՍ ՇԻՆԵՑԻ ԱՑՍ ԵԿԵՂԵՑԻՍ ՁԵՌԱՄԲ ԻՄՈՎ. ՈՎ ԿԱՐԴԱ| ՄԻԱՑՆ ՄԼԿ ԲԵՐԱՆ Ո-ՂՈՐՄԻ ԱՍԼ: ԽԱՉՍ ՑԻՇԱՏԱԿ Է ԳԱ|ԲՐԵԼԻՍ, ԾՆՈՂԱՑ ԻՄՈՑ, ԴԸՍ-ՏԵՐԱՑ ԵՒ ՈՐԴՈՑ ԻՄՈՑ:

ԱՅՍԵԿԵՂԵՑԻՍԶԵՌԱՄԲԻՄՈՎՈՎԿԱՐԴԱ
ՄԻԱՅՆՄԼԿԲԵՐԱՆՈՂՈՐՄԻԱՍԼ ԽԱՉՍՅԻՀԱՏԱԿԵԳԱ
ԲՐԵԼԻՍՑՆՈՂԱՑԻՄՈՑԴՍՏԵՐԱՑԵՒՈՐԴՈՑԿԻՄՈՑ

Ծանոթ. *Ժամանակակից է նախորդին՝ 1675 թ.։*

Հրատ. *Բարխուդարեանց, 117։ Լալաեան, II, 47։*

563. ԱՆԱՊԱՏԻ արևմտյան մուտքի կողին, մի քարի վրա, 5 տող.



ՏՐ. ԵԼԻԱԶ|ԱՐՍ, ՈՐ ՁԵՌ|ՆԱԴԼՐՅԵՑԱԻ| ՑԱՊԵՂԱՑ.
:ՌՃՀԳ: (1724):

Ծանոթ. *Ձեռնադրեցաւ բառը գծագրում գրված է ձեռնադնցաւ:*

Հրատ. *Բարխուդարեանց, 116 (ծանոթության մեջ)։*

564. ԳԵՐԵԶՄԱՆԱԿԱՐ, հին, Անապատի շինության ժամանակ դրված է նրա հյուսիսարևելյան ավանդատան մուտքի վրա որպես բարավոր. երևացող երեսին խաչեր և դրանց տակին 3 տող.

ԵՍԱՂԷՍԿՆԱՆԵՑԻՋԽՆՇՓՐԿՈՒԹԻՒՆՁԵԻԿԵՆ
ԱԿՅԻՆԻՄՀՈՐՈՂՈՑԴՍՏԵՐԱՑԻՄՈՑ
Ջ Հ

ԵՍ ԱՂԷՍ ԿԱՆԼԿՆԵՑԻ ՋԽԼԱՁՍ ՓԸՐԿՈՒԹԻ. ԻՆՁ ԵԻ ԿԵՆ|ԱԿՅԻՆ ԻՄՈՑ, ՈՐԴՈՑ, ԴՍՏԵՐԱՑ ԻՄՈՑ| :ՋՀ: (1521):

Հրատ. Բարխուդարեանց, 116։

565. ԳԵՐԵԶՄԱՆԱԿԱՐ, ագուցված է անապատի արևմտյան պատի հարավային մասում. արտաքուստ.

ՍԱ ՆԱՆ ՈՒՄԷՆ ՊԱՀԱՀՈՅ
ՉՍ
ԹԻԱ ՌՈՄ
ԿՌ ԱՆ
ԿԿ

ԽԱՁՍ ՆԱՆՈՒՄԷՆ, ՊԱՀԱԼՈՑ ԹՈՒՄԱՆԼԻՆՅ. ԹԻԱԿ. :ՌԿԶ: (1617):

566. ԳԵՐԵԶՄԱՆԱԿԱՐ, ագուցված է անապատի հարավարևելյան ավանդատան կողին. երևացող Լրեսին հեծյալ՝ խաչը ձեռքին, դիմացը՝ գավազան բռնած մարդ, սրանց արանքում անարվեստ տառերով.

ԵՍ ՄԻՍԷԼՍ ԿԱՆՆ
ՈՒԱՆՍՍ
ԿՈՒԽԱՍՍ
ԵԿԻՂԽԱՆՅ ԳՐՈՒԱՅՆՀԱՅ
ՀՈԳՈՅՆ

ԵՍ ՄԻՍԷԼՍ ԿԱՆԼԿՆԵՑԻ ՋԽԱՁՍ . . ԳՐՈՒԱՑՆՀԱՑ ՀՈԳՈՑՆ

567. ԽԱՉԿԱՐ, փոքր, ագուցված է հարավային մուտքի հարավային երեսին. շրջանակներին 3 տող.

ԵՍՀՈՎԱՑԴԵՂՍԿԱԿ ՆԵՑԻՋԽԱՉՍ ՈՐԴՈՅ ԱԼԼԱՓՓԻՐՄԻՆ

ԵՍ ՀՈՎԱՑԴԵՂՍ ԿԱԼՆԿ|ՆԵՑԻ ՋԽԱ-ՋԸՍ ՈՐԴՈՑ| ԱԼԼԱՓՓԻՐՄԻՆ։

568. ԽԱՉԿԱՐ, ագուցված է եղել բեմի քարե խաչկալի հյուսիսային մասում. վրան.

Ղազար, կողակից ուր Նազլու. թվ. :ՌՃԳ: (1654):

Հրատ. Բարխուդարեանց, 116։

569. ԲԵՄԻ ՎՐԱՑԻ ՔԱՐԵ ԽԱՉԿԱԼԻ հարավային մուտքի երկու սյուների վրա եղել է.

Ցիշատակ է Համասուսանց Միրզախանի որդի Մանուէլ վարդապետիս այս խաչկալս. եղբարճն իմ Պապան և Վանկալան, ընար իմ Գուլասմար, Ինթաղիի. ծնողճն իմ Մուխթանում, կողակից իմ Նազլու, որդի իմ Հախնազար, Շահապաս, Սիրուն, Վռամիճն, Մուզվանիճն և դստերճ իմ Բաջուն, Դօսղաճիճն. թվ. :ՌՃԴ: (1655):

Ծաւնթ. Հրատարակիչների մոտ անձնանուններն մեծ մասը աղավաղված է։ Հուշարձանն այժմ գոյութիւն չունի. առնում ենք Բարխուդարեանցից։ Թվականը նույնպես սխալ է, որովհետև խաչքարը ժամանակակից պետք է լինի առնվազն եկեղեցու շինութիւնը, հավանաբար բաց է թողնված տասնավորի ի-ն։

Հրատ. Ջալալեանց, II, 337։ Բարխուդարեանց, 116։ Լալաեան, II, 46։

53. ՀԵՐՀԵՐ ԳՅՈՒՂ

Գյուղի կենտրոնում կանգնած է համակ սրբատաշ քարերով շինված մեծ եկեղեցին՝ ս. Գրիգորիս անունով։ Շինված է Աղվանից կաթողիկոս Պետրոսի հրամանով, իր աշակերտ Բարսեղ արքեպիսկոպոսի ղեկավարութիւամբ, որպես ամառանոց Ամարասի վանքի միաբանների և միացյալ կենտրոն Վարանդալի ու Քոչիզի վիճակների։

Եկեղեցին հիմնվել է 1667 թ. և ավարտվել 1676 թվականին։ Ինչպես ճարտարապետական արվեստի, այնպես էլ կատարման տեխնիկալի առումով իր դարաշրջանի լավագույն հուշարձաններից է։

Եկեղեցին արտաքուստ շեն է, պահեստի վերածվելու պատճառով բեմն ամբողջովին վերացրել են, որի հետևանքով ոչնչացել է № 580 ընդարձակ և կարևոր արձանագրութիւնը։ Անհայտացել են № 581 և 582 արձանագրութիւնները կրող հուշարձանները։

570. Ս. ԳՐԻԳՈՐԻՍ եկեղեցու հարավային մուտքի ճակատաքարին, արտաքուստ, 12 տող.

ՇՆՈՐՀՕՔՆ ՔԻ ԵՍ ԲԱՐՍԵՂ
ԵՊԻՊՍԱՀԵՐՅՊՏՅՐՈՍ ԿԹՂԿ
ՍՆԵՒԾՆՕՂՍՆՄԱ ԱՅՆԵՒԳՈՒԼ
ՂԱՅՆԻԳԱՒԱՌԷՆՎՄՆԴՈՒԻՆԵՂՋԷՆ
ԳԻՇՈՒՆՐՈՆԵԼՊԱՃԱՌԱՅՈՒՅԻՋՍԲ
ԱՔՌՍՄՄԱՍՊՄՍՊՕՔՇՐՋԱՊՏԵՅԱՒՀՂԴ
ԵՐԶՅՈԳՆԱԹԻՒԼԵՆԵԿՕՔՋԵԿՂՅՍՇՔԵՂ
ԱՅՈՒՅԱՔՋԱՌՈՒՔՏՈՒՄՇՇԻՆԵԼԵԿՂՅՍԱՆՈ
ԻՄԲՍԲՈՅՆԳՐԻՔՈՐԻՍԻՀՈՎՄՆՍԲ ԱՔՌՅՆՄ
ՄԱՍԱՀՐԵՒՄՍՆԲԵՐԵԱՔ ԻՆՄՆԷՄՓՈՓԵՅՔԱԱՏԻԱ
ՀԻՄՆՄԿԵՅԱԻՏԱՃՄՍ=ՌՃԺՋ=ԹՎԻՆԿԱՏՄԵ
ՅԱԻ=ՌՃԻԵ=ԻՆ

ՇՆՈՐՀՕՔՆ ՔԻ. ԵՍ ԲԱՐՍԵՂ| ԵՊԼԻՅՍԿԼՈՅՊԼՈՅՍ, ԱՇԼԱՅԿԵՐՏ ՊԵՏՐՈՍ ԿԼԱՅԹԼՈՅ-ՂԼԻՅԿԼՈՅ|ՍԻՆ ԵԻ ԾՆՕՂՍՆ ԻՄ ԱՂԱՁՆ ԵԻ ԳՈՒԼ|ԱՂԱՁՆ Ի ԳԱԻԱՌԷՆ ՎԱ-ՐԼԱՅՆԴՈՒԻ Ի ԳԵՂՋԷՆ| ԳԻՇՈՒ, ՆՈՐՈԳԵԱԼ ՊԱԼՁՅԾԱՌԱՁՈՒՁԻ ՋՍԲ.| ԱՔԼՈՌՍ ԱՄԱՐԱՍԼԱՁՅ, ՊԱՐՍՊՍՔ ՇՐՋԱՊԱՏԵՁԱՔ ՀԱՆԳԵՐՋ ՁՈԳՆԱԲԻԻ ՍԵՆԵԿՕՔ, ՋԵԿԼԵՅՂԼԵՅՁԼԻՅՍ ՇՔԵՂ|ԱՁՈՒՁԱՔ ՋԱՐԳՈՒՔ. ՏՈՒԱՔ ՇԻՆԵԼ, ԵԿԼԵՅՂԼԵՅՁԼԻՅՍ ԱՆՈ|ԻԱՄԲ ՍԼՐՅԲՈՁՆ ԳՐԻԳՈՐԻՍԻ՝ ՀՈՎԱՐԱՆ ՍԲ. ԱՔԼՈՅՌԼՈՅՁՆ ԱՄ|ԱՐԱՍԱ. ՈՐ ԵԻ ՄԱՍՆ ԲԵՐԵԱԻ Ի ՆՄԼԱՅՆԷ ԱՄՓՈՓԵՅԼԱՅՔ ԱՍՏ. ԻՍԿ| ՀԻՄՆԱՐԿԵՁԱԻ ՏԱՃԱՐՍ :ՌՃԺՋ: (1667) ԹՎԻՆ, ԿԱՏԱՐԵ|ՁԱԻ :ՌՃԻԵ:-ԻՆ (1676)։

Հրատ. Ջալալեանց, II, 330։ Բարխուդարեանց, 105։ Լալաեան, II, 40։

571. Ս. ԳՐԻԳՈՐԻՍ եկեղեցու արևմտյան մուտքի բարավորի վրա, արտաքուստ, 5 տող և փակագրեր.

ՋՕՐՈՒԹ[Ե]ԱՄ[Բ]ՌՆ ԱՑ. ՇԻՆԵՑԱՒ ԵԿԵ[Ղ]ԵՑ[Ի]Ս Ի ԴԱՒՌՆ ԵՒ Ի ՆԵՂ ԺԱՄԱՆԱԿԻՍ. Վ[Ա]Ս[Ն] ԾՈՎԱՑԵԱԼ ՄԵՂԱՑ ՄԵՐՈՑ ԵԿՆ ՄԱՐԱԽ ԵԿԵՐ ՋԵՐԿԻՐՍ ԱՂՎԱՆԻՑ ԵՒ ԱՒԵՐԵՑ ԲԱՋՈՒՄ ՏԵՂԻՍ, Ի Թ[Ա]Գ[Ա]Ի[Ո]Ր[Ո]ՒԹԵ[Ա]Ն[Ց] ՇԱՀՍՈՒԼԵՄԱՆԻՆ, ՊԱՐՈՆՈՒԹԵ[Ա]Ն[Ց] ՄԻՐՋԱ ՂՈՒԿԻ Պ[Ե]Տ[Ր]Ի[Ո]Ն ԵՒ ԻՇԽԱՆՈՒԹԵ[Ա]Ն[Ց] ԵՐԿՐԻՍ Վ[Ա]ՐԱՆԴՈՒ ՄԵԼԻՔ ՊԱՂՈՒ, ՈՐԴՒ ՄԵԼԻՔ ՇԱՀՆԱՋԱՐԻՆ ԵՒ ՕԺԱՆԴԱԿՈՒԹԵ[Ա]ՄԲ[Ե] ՈՎԱՆԻՍ[Ի]Ն ԵՒ Ք[Ա]Հ[Ա]Ն[Ա]Յ[Ի]Ց ԵՒ ՏԱՆՈՒՏԵՐԱՑ, ՄԵԾԱՄԵԾԱՑ ԵՒ ՓՈՔՈՒՆՑ. ԱՄԵՆ. Թ[Վ]Ի[Ն] :Ո ՃԻԲ: (1673):

Փակագրերը

Ա. ՊԵՏՐՈՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ.
Բ. չեճ հաւկաճուռմ.
Գ. ԴԱԻԻԹ.

Մանոթ. Հավանաբար այս փակագրերի մասին է Ջալալյանի հետևյալ նկատողությունը. «Անուանք եպիսկոպոսաց»—ես Պետրոս եպիսկոպոս, Դաւիթ եպիսկոպոս, Սահակ եպիսկոպոս:

Հրատ. Ջալալեանց, II, 330—331, 332։ Բարխուդարեանց, 105։ Լալաեան, II, 41։

572. Ս. ԳՐԻԳՈՐԻՍ եկեղեցու արևմտյան մուտքի գլխին, կամարի մեջ խորը ագուցված մի քարի վրա, 8 տող և փակագրեր.

ԿՂՊ ԵՍՊԵՏՐՈՍԿԹՂԿ
ՒՓՈՍԱՀԿՐՏՂՈՒԿ
ԱՍՎՐԴՊՏԻՆԵ
ՏՈՀՇԻՆԵԼԿԱՌՈ
ԻՂԻԿԷՍՅՇՏԿԻ
ՆՁԵՒԱՇԿՐՏԻՆ
ԻՄՈՅ ԲԱՐՍԵՂ
ԵՊԱՊՈՆՅԻՇՅՖԻՒՍ

ԵՍ ՊԵՏՐՈՍ ԿԱԹՂՈՂԻԿԿՈՍ, ԱՇԼԱԿԵՅՐՏ ՂՈՒԿԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ԵՒՈՒ ՇԻՆԵԼ ԿԱԹՈՂԻԿԷՍ. ՑԻՇԵՑԷՔ Ի ՔՈ:

Փակագրերը

Ա. ՊԵՏՐՈՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ
Բ. ՂՈՒԿԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ
Դ. ԲԱՐՍԵՂ ԵՊԻՍԿՈՊՈՍ.

Մանոթ. Հրատարակիչները չունեն փակագրերը։

Հրատ. Ջալալեանց, II, 330։ Բարխուդարեանց, 105։ Լալաեան, II, 41։

573. Ս. ԳՐԻԳՈՐԻՍ եկեղեցու բեմի հյուսիսային պատին, չարդուված 16 տող.

ԱՄԵՆԱԿԱՂ[1] . . . . . .
. . ԵԿԻ Ի ՍԲ. ԱՄ[ԱՐԱՍ ԹԻՒՆ| ՀԱՑ[ՈՑ
.ՌՃԵ:-ԻՆ (1656), ՀԱՆԴԵՐՁ ՑՈ[ՀԱ]ՆԷՍ,
ԱԼԷՔՍԱՆ, ԵՂԻԱՑ ԵՒ ՄԱ[ՐՏ[.| ԻՐՈՍ
ԵՊԻՍԿ[Ո]Պ[Ո]ՍՕՔՍ, ՈՐ ԱՌ ԱՅ. ՓՈԽԵ[Ց]|
ԱՆ. ՈՐ ԷՐ ԹԻՒՆ :ՌՃԺՋ: (1667). :ԻՆ
(21) ՀՈՒՂ[] ԻՍ ՀԻՄՆԱՐԿԵՑԱՒ ՍԲ. ՏԱ-
ՃԱՐՍ| [ԱՆՈՒ[ԱՄԲՆ ՍԲ. ԳՐԻԳՈՐԻՍԻ.
ՁԵՌՆՏ[ՈՒՈ]|
[Ո]ԻԹԲ . . . . . |
ԻԹԵ . . . . . |
ԱՇԽԱՏԱՆՍ ԱՐԱՐԻՆ . . . . . |
ՄԱՀԳԱՍԻ ԳԷՍՈՒՆ . . . . . |
ՅԷ ԸՍՏ ԱՇԽԱ . . . . . |
ԱՆՅ . . . . . |
Ֆ[ՒՅՇ[ՆՅՅ[Ն[Ր . . . . . .
ՅՍ ՈՍ . . . . . .

ՅՇՅՓ
ՅՍՈՍ

Նաեւոք. *Ալս վիճակում է եղել դեռևս Բարխուդարյանցի ժամանակ։ Ալն սվաղով ծածկված էր, բացեցինք։*

Հրատ. *Բարխուդարեանց, 105։*

574. Ս. ԳՐԻԳՈՐԻՍ եկեղեցու արևմտյան մուտքից վեր, նախորդի մոտ 5 տող.

ԱՃ ԱՀՆԷՓՈՉԻՋ
ՈՒԺՄՂՎՐՆԱՅՆԱՀՆ
ՈՒՔԲՆՈՈՉԱՅԱԷԶ
ՈՆՅՈՒԵՂԵՆԿՐԻՆԵՒՓԱ
ԻՆ .

ԱՅ. ԱԻ[Ր]ՀՆԷ ՔՈՋԻՋ|ՈՒ ԺՈՂ[Ո]Վ[ՈՒ]Ր[Դ]Ն
ԱՑՆ Ա[ԻՐ]ՀՆ|ՈՒԹՐՆ. ՈՐ ՈՋ ԱՆՑԱՆԷ. ՁԵ|ՈՒՐՆ-
ՏՈՒ ԵՂԵՆ ԿՐԻՆ ԵՒ ՔԱՐ[ԻՆ:

Նաեւոք. *Վերաբերում է շինութեան ժամանակին։*

Հրատ. *Ջալալեանց, II, 330։ Բարխուդարեանց, 105։ Լալաեան, II, 41։*


575. Ս. ԳՐԻԳՈՐԻՍ եկեղեցու արևմտյան մուտքի հարավային կողին, 8 տող.

ԵՍՏ[Ր]Դ:ԱՒԻԹ ՊՆ
ԵԿԻ ՍԲ[ՈՒԽՏՍԻ
ՍՊԱՍԱՒՈՒՀԻ
ՍԲ[Ո]Ն ԳՐԻԳՈՐ
ԻՍՒ:ԹՒՒՀ:ՒՐ:
ՃԺ:Թ:ԻՆ ՈՎԿ
Ա.ՐԴ.Ա.Ճ ՈՂ
ՈՄ[ՒՍԱՍԷ .

ԵՍ ՏՐ. ԴԱՒԻԹ ԵՊ[Ի]ՍԿ[Ո]ՊՈՍ[| ԵԿԻ ՍԲ. ՈՒԽՏՍ Ի| ՍՊԱ-
ՍԱՎՈՐՈՒԹԻ[Ի]ՆՆ[| Ս[Ր]ԲՈ[Ց]Ն ԳՐԻԳՈՐ[ԻՍԻ. ԹՎԻՆ :Ռ|ՃԺԹ:
-ԻՆ (1670). ՈՎ Կ|ԱՐԳԱ ԱՅ. ՈՂ[ՈՐՄԻ ԱՍԷ:

Հրատ. *Ջալալեանց, II, 331 (թիվը «Ռճեա»)։*


576. Ս. ԳՐԻԳՈՐԻՍ եկեղեցու արևմտյան մուտքի վարավային կողին, արտաքուստ, նախրդի մոտ, 6 տող.



ԵՍ ԱԲՐՀԱՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ| ԵԿԻ Ի ՍԲ. ՈՒԽՏԻՍ ԸՍՊԱՏ-
ՍԱՅՈՐՈՒԹԻՆ, ՍՐԲՈՅՑՆ ԳՐԻԳՈՐԻՍԻ. :ՌՃԽԱ:
(1692) ԹՎԻՆ.| ՈՎ ՈՐ ԿԱՅՐԴԱ Ա՟Ծ. ՈՂՈՐՄԻ ԱՍԷ:

Հրատ. Ջալալեանց, II, 331։


577. Ս. ԳՐԻԳՈՐԻՍ եկեղեցու հյուսիսարևելյան ավանդատան կողին, 4 տող.



Ա՟Ծ ՈՂՈՐՄԻ ՏՆԴԻՒՆ ՄԱՐԻԱՄԻՆ, ՈՐ :Է: (7) ՌՏԱՐԻ
ԵԿԵՂԵՑՈՒՅՍ ՀԱՑՆ ԵԻ ՃԱՇՆ ԱՐԱԻ:

Հրատ. Բարխուդարեանց, 105։


578. Ս. ԳՐԻԳՈՐԻՍ եկեղեցու հարավարևելյան ավանդատան մուտքի հյուսիսային կողին, 9 տող.



ՄԵՔ ՀԷՐՀԷՐԱ ՃԱՄԻԱՐԹԻՍ, ՏԱՆՈՒՏԷՐ ՊԱՍՈՒ-
ՄՔՍ, ՌՄԻԵԺ ԵԻ ՓՈՔՐ ՃԱՆԱՊԱՐՀԻ ԳԼԽԻ ՏԱՓՆ
Ի ՍԿԶԲԱՆ ՎԱԽՄ ԷՐ ՍԲ. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻՆ
ՄԵՔ ԵԻՍ ՎԱԽՄԻ ԱՐԱՐԱՔ ՍԲ. ԳՐԻԳՈՐԻՍԻՆ.
ՈՎ ՔԱԿԷ ՆԶՈՎԵԱՐԷ ԵԿԱԻՑԻ Ա՟Ց:

Հրատ. Ջալալեանց, II, 331—332; Բարխուդարեանց, 104; Լալաեան, II, 41։


579. Ս. ԳՐԻԳՈՐԻՍԻ հյուսիսարևելյան ավանդատան մուտքի բարավորի վրա, կիսեղծ, 4 տող.



ԿԱՄԱԻՆ Ա՟Ց . . . . . | . . . .
ՈՐԴԻՔ ՍԱՀԱԿԱՑ ԵԿԻ-| . . . .
ՆՔ ՍԲ. ՈՒԽՏՍ, ՏՎԻՆՔ . . . . |
ՍՈՔԱ ԵՏՈՒՆ ՏԱՐԻՆ ԱՆ. ԺԱՄ. ԱԻԵՏԻՔ ՕՐ:

Ծանոթ. Հավանաբար վաղուց ի վեր մնասված է եղել, որի պատճառով էլ հրատարակիչները չեն վերծանել։

580. Ս. ԳՐԻԳՈՐԻՍԻ բեմի ժողովրդահայաց երեսին եղել է.



ՍԲԱ ՓՆՍՏՈՒՅ ՝ՍԱ՝ԾԻԵԼ ՀԵՍՅՈՑՈ ՅԻՍԻՀՈ ՈՇՆՁԱՀ
ՅԻՈՒ ՅԷՅԻ՝ԱՅ ԱՈՒՆԱԵԼ ՂԿՂՈՁՂՎՉ ԱՅՄՓՐ ՈՇՆՁԱՀ

կամաւն Ա՛. ես Պետրոս կաթողիկոս Աղուանից սր. աթոռոյ Գանձասարայ՝ ծորոգեալ սր. աթոռս Ամարասայ արհի եպիսկոպոսութեան յոլոր ճահուճքն Վարաձոյ և Քոչիզու, բանզի փետեկտեալ և պատատեալ էին զվիճակ սուրբ՝ արարեալ ըստ իւրաքանչիւր կամաց. իսկ մեք զցանկ հայրենի ծորոգեալ ժողովեցաք, ծորոգեցաք, զսիրելի աշակերտս մեր զտէր Բարսեղ արհի եպիսկոպոսըն, որ և հրամայեցաք սմա շինել գեկեղեցիս հովտառն Ամարասայ, զոր և շինեալ կատարեաց ըստ մերում հրամանի յաւուր տաւնի այլակերպութեանն Քրիստոսի. և աւրհնեցաք զսուրբ տաճարս անուանելով զսա սուրբ Գրիգորիս՝ բերելով ի նեխարաց սրբոյն Գրիգորիսի սմխուխեցաք Երկրիս Վարաձոյ և Քոչիզու, ոի եղիցի այս երկու աթոռս մի: Ով որ զայս վիճակս յուժանել և զոք նստուցանել այլ տեղի, եթէ կաթողիկոս իցէ կամ եպիսկոպոս տէր՝ նզովեալ եղիցի :ՅԺԸ: (318) հայրապետացն, ընդ խաչահանուացն դասեցի, Յուդայի մասնակից եղիցի: Այս կտակ և արձանագիր յաւիտեան մնայ հաստատ:

Ծանոթ. *Բեմն այժմ ամբողջովին քանդված է. նրա քարերով ինչ-որ բաժանումներ են արված եկեղեցու ներսում: Այգպիսի մի անշաղախ պատի մեջ դրված է այս արձանագրության քարերից 7 հատ, որոնք դասավորված են այնպես, ինչպես գծագրության վրա:*

Հրատ. *Ջալալեանց II, 331: Բարխուդարեանց, 104: Լալաեան, II, 104:*

581. *Ս. ԳՐԻԳՈՐԻՍԻ հարավային ավանդատան մեջ եղել է գերեզմանաքար՝ հետևյալ տապանագրով, այժմ չկա.*

Այս է տապան Հայրապետի, արքազան մեծ վեհապետի, Տեառն Իսրայէլ դիտապետի, տանն Աղուանից Հովուապետի. Աջորդ արքոյն Եղիսէի, սրտակալ Գրիգորիսի, ժառանգ մեծին Սիմէօնի, և թոռն պետին Ներսիսի, Չի էր որդի մեծասեռի, իշխանագնեայ այն Ապրէսի, :ՌՄԾԷ: (1808) Հայոց թուի, Յուլիսի երեքն վախճանի, Յիսուս առցէ սա արժանի, ով որ կարդալ հանդիպեսցի:

Հրատ. *Ջալալեանց, II, 332: Լալաեան, II, 41:*

582. *ԽԱՉԿԱՐԻ վրա եղել է.*

Այս է Սահակ եպիսկոպոսն, որ վախեցաւ ի ՔՍ. թվին :ՌԼ: (1581):

Հրատ. *Ջալալեան, II, 332:*

54. ԹԱՂԱՎԱՐԴ ԳՅՈՒՂ

Թաղավարդ անունով այժմ գոյութիւն ունի երկու գյուղ՝ Վերին Թաղավարդ և Ներքին Թաղավարդ: Այս երկուսի արանքում մնում են երրորդի ավերակները, որոնք կոչվում են Հին Ներքին Թաղավարդ:

Վերին Թաղավարդից մոտ 2 կիլոմետր հարավ-արևմուտք, մի նեղ լեռնաբազուկի վրա մնում են Ջոզտ Պովածատ կամ Բարևածատ կոչվող վանքի աննշան ավերակները: Բարխուդարյանցի ալցելած ժամանակ ավերակների մեջ եղել են եկեղեցի և գավիթ. այժմ միայն հիմնապատերն են մնում. ոչնչացել են նաև նրա արտագրած կարևոր արձանագրությունների մեծ մասը:

Ներքին Թաղավարդում հին հուշարձաններ չկան, գյուղամիջի ս. Աստվածածին եկեղեցին, ըստ արձանագրության, շինված է 1840 թ.[1]:

Հին Ներքին Թաղավարդը եղել է ընդարձակ գյուղ, որի ավերակները ցրված են մեծ


[1] Մ. Խոխուդարեանց, *Արցախ, էջ 89,*

տարածութ[յան վրա։ Պահպանվել է կիսականգուն եկեղեցին, ծածկը ամբողջովին է, պատերը մասամբ փլված. դրա վրայից Բարխուդարյանցն արտագրել է շինարարական անթվական արձանագրութ[յունը, որն այժմ չկա. հավանաբար XVII դարի վերջերի շինք է։ Պատերին պահպանված մանր արձանագրութ[յունները ևս XVII դարի են։

Այս գյուղերից մեր. ժողովածուն պարունակում է տասնմեկ արձանագրութ[յուն, որոնցից չորսը հրատարակվում են առաջին անգամ։

583. ՋՈՂՏ ՊՈՒՎԱԾԱՌԻ ՎԱՆՔ.

ԽԱՉՔԱՐ, ջարդված մի քանի մասի և հավաքված իրար մոտ. գտնվում է եկեղեցու բևմի վայրում. շրջանակներին և ստորին մասում 6 տող.



ՍՈՒՐԲ| ՅՈՒԱՆՆԷՍ|. ՐԿԱՆԴՆՈՂ. ՍՂՐՐՈՒՑ՝ ԽԱՉԻՍ ՉՈ-
. ՎԱՆ|ՆԷՍ ԵՐԷՑ։

Հրատ. Բարխուդարեանց, 90 (Քերի)։

584. ԽԱՉՔԱՐ, փոքր, հենած է դավթի պատին. ստորին մասում 3 տող.

ՔՈՒ ԱԾ
ՈՒՍԷՓԵ
ՐԷՑ

ՔՍ. Ա.Ծ.| ՈՒՍԷՓ |ԵՐԵՑ։

Հրատ. Բարխուդարեանց, 90։

585. ԽԱՉՔԱՐ. փոքր, հենած է եկեղեցու պատին, ստորին մասում 2 տող.

ՈՒՍԷՓԵՐԵ·
ՅԻՂԵՅԷՓ

ՈՒՍԷՓ ԵՐԷՑ| ՑԻՇԵՑԷՔ։

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՈՐՈՆՔ ԱՅԺՄ ՏԵՂՈՒՄ ՉԿԱՆ

586. ԽԱՉՔԱՐԻ վրա.

Սուրբ Պետրոս. կանգնեցի վխտչս ի վիրկութիւն հոգո իմո և ծնողաց իմոց։ Աղդ, որ եկրպագէք սուրբ նշանիս զիս յաղաւթս յիշեցէք և Աստուած զձեզ յիշեսցէ

թվ. :ՆՈՋ։ էր (997)։

587. ՆՈՒՑՆ ԽԱՉՔԱՐԻ ՄՑՈՒՄ ԵՐԵՍԻՆ.

Սուրբ Պաւղոս. յամս աստուածապատիւ և հոգևոր տեառն Յովհաննիսի Ամատասա եպիսկոպոսին և պետութեան տեառն Գագիկայ Աղուանից իշխանաց իշխանի ես Կիրակոս առաջնորդ սուրբ ուխտիս, եղբաւր որդի Կոկոնս . .

Հրատ. Բարխուդարեանց, 91։ Լալայեան, II, 8։ Ա. Բաբախանեանց, Ուխտավորի հիշատակարան, Շուշի, 1885, էջ 5։

խաչքարի վրա.

588. Հիսուս Քրիստոս. հայոց թվիին :ՈՀԷ։ (1228). ես Ալի, որդի Զեճովբին եկի ի Պարսից, շինեցի զսուրբ եկեղեցիս Աստուծոյ, փրկութիւն հոգոյ իմոյ. որ եկրպագէք, զիս յիշեսջիք և Աստուած զձեզ յիշեսցէ։

Հրատ. Բարխուդարեանց, 91։

589. ԽԱՉՔԱՐԻ ՎՐԱ.

Հոգևոր հարց և եղբարք, զՍողոմոն երայց (երէց), կանգնող խաչիս յաղաւթս յիշեսջիք աղաչեմ. ամէն:

Հրատ. *Բարխուդարեանց, 90—91:*

Հին Ներիճ Թաղավարդ

590. ԿԻՍԱՎԵՐ ԵԿԵՂԵՑՈՒ հարավային (առաջինը բեմի կողմից) որմնամույթի ստորին մասում երկու մետրաչափ մի երեսպատման քարի վրա խաչ և տակին 3 տող.

ԱՅՍ Է ՍՔ̄ԽԱՉՍ
ԴԱՒՈՒԹԻՆ
ԹՎ̄ ՌՃԿ

ԱՑՍ Է ՍՔ̄. ԽԱՉՍ| ԴԱՒՈՒԹԻՆ|. Թ̄Վ̄. :ՌՃԿ: (1608):

591. ԿԻՍԱՎԵՐ ԵԿԵՂԵՑՈՒ հյուսիսային պատին, ներքուստ, բեմի մոտ, մի երեսպատման քարի վրա, 2 տող.

ԹՎԻՆ
ՌՂԴ

Թ̄Վ̄ԻՆ| :ՌՂԴ: (1645):

592. ԽԱՉՔԱՐ, ապուցված է նախորդ արձանագրությունից ներքև, վրան՝ թեքի 2 տող.

. . .ՄԱՐՏԻՐՈՍԿԱՆԿՆԵՑԻ ԽԱՉՔԱՐ
ԹԻԱԿՆ . . . . .

ՐԵՍ՝ ՄԱՐՏԻՐՈՍ ԿԱՆԿՆԵՑԻ ԽԱՉՔԱՐ՝ ՓՐԿՐՈՒԹԵԱՆ . . . . . | ԹԻԱԿՆԻՆ . . . . .

593. ԿԻՍԱՎԵՐ ԵԿԵՂԵՑՈՒ մուտքի մոտ, մի քարի վրա եղել է.

Ես աւետարան Գրիգորս եպիսկոպոս Թաղավարդու եկեղեցին. առաջնորդութիւն Տաւուքին որդին, նոր Պաւղոսին, Ամիրպէկին. այնպէս սէրուն էր, որ գիշեր ցուն չկէ:

Հրատ. *Բարխուդարեանց, 89:*

55. ՇԵԽԵՐ ԳՅՈՒՂ

594. ՄԱՏՈՒՌԻ ՎՐԱ, որը գտնվում է գյուղի հարավային բլրի վրա.

Թվիին ՌՒԲԲ: (1603):

Հրատ. *Բարխուդարեանց, 87:*

56. ԱՄԱՐԱՍԻ ՎԱՆՔ

Արցախի այս հնագույն և նշանավոր վանքի հիմնարկությունը ավանդաբար վերագրվում է Գրիգոր Լուսավորչին, իսկ ավարտումը և օծումը՝ նրա թոռ, Աղվանից առաքյալ Գրիգորիսին: Վերջինիս նահատակումից հետո նրա աշակերտները Գրիգորիսի աճյունը թաղում են հենց այս վանքում:


Մեկուկես հազարամյակի անցյալ ունեցող այս վանքը ականատես է եղել պատմական խոշոր իրադարձություններին, ունեցել է իր ծաղկման շրջանը, երբ այնտեղ են նստել Աղվանից կաթողիկոսները, կրել է նաև աղետներ ու ավերածություններ և հետագայում մնացել անմարդաբնակ:

Բազմաթիվ վերանորոգումներից հետո վանքը գրեթե հիմնովին վերակառուցվել է XIX դարում, և այդ նոր տեսքով կանգուն է այժմ, շրջապատված բարձր և բրգավոր պարիսպներով, որոնք շինել է Վարանդալի մելիք Շահնազարը։

Միակ հնությունը այդ վանքից Գրիգորիսի ստորերկրյա դամբարանն է, որը գտնվում է ներկա եկեղեցու բեմի տակ։

Հին արձանագրություններ նույնպես չգտանք այստեղ. Ստեփանակերտի Դավառագիտական թանգարանում պահպանվում է սպիտակավուն խաչքարի մի բեկոր՝ բոլոր կողմերից ջարդոտված և արձանագրության մնացորդներով, որը տարվել է Ամարասի վանքից. ահա այդ խաչքարի արձանագրության գծագիր պատկերը.

595.



Ծանոթ. Բովանդակությունից պարզ է, որ խաչքարը կանգնեցվել է 6ՀԴ—92ա թվականին, երիտասարդ հասակում օտար աշխարհում մեռածի հիշատակին։

ՀԱԴՐՈՒԹԻ ՇՐՋԱՆ

57. ՋՐԱԿՈՒՑՍ ԳՅՈՒՂ.

596. Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ԵԿԵՂԵՑՈՒ մուտքի ճակատին.

Ցիշատակ է սուրբ Խաչափառնոյս եկեղեցիս ձարակոյսա ուամիկ ժողովրդեան քվլիճ։ ՌՃՆԷ։ (1698)։

Հրատ. Բարխուդարեանց, 72։

58. ԴՐԱԽՏԻԿ ԳՅՈՒՂ.

597. Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑՒ ԵԿԵՂԵՑՈՒ մուտքի բարավորի վրա.

քվլիճ։ ՌՂԴ։ (1645)։

Հրատ. Բարխուդարեանց, 88։

59. ԹԱՂԱՒՈՐ ԳՅՈՒՂ.

598. Այս գյուղի և Շեխերի արանքում կա գերեզմանատուն՝ մեջր մատուռ. ճակատին չինուքյան թվականը՝

քվլիճ։ ՌՃԲ։ (1603)։

Հրատ. Բարխուդարեանց, 87։

60. ԾԱԿՈՒՒԻ ԳՅՈՒՂ.

599. ԽԱՉՔԱՐԻ ՎՐԱ.

քիւ ։ՈՒԷ։ (1198)։

Հրատ. Բարխուդարեանց, 73։

600. ԳՅՈՒՂԱՄԻՋԻ ԵԿԵՂԵՑՈՒ մուտքի բարավորի վրա.

Ես ցանկալի վարդապետս, աշակերտս Եսաեա վարդապետին Կրճևացոյ, ի գիւղաքաղաք գեղչէն Թաղլարցի, յազգէն Թանկոց, սուաչնորդ կարգեալ ի հայրապետէն Աղուանից տեառն Երեմիայի մի բանի գիւղօրէից ղուզաինուոյ, ոչ թողին բնակիլ ի հայրենի աթոռն մեր, այլ ուր և երչեցա ոչ գտի աւաւել բան գայս և հանեցայ բնակիլ աստ և հրդել գՅնդուսար արարի ի տեղի բնակութեան և սկիզբն աւարեալ շինեցի եկեղեցիս ի կաթուղիկէն. յիշատակ հոգոյ իմոյ և

ծնողաց իմոց, հօրն իմոյ Դալվաթի և մօրն իմոյ Մարիամին, և դաճեակ սնուցիչ երկու հոռն իմոյ Սաւրին, ցաբաւին ողորմութեան. աղաչեմ կենաց: Շինեցաւ սուրբ եկեղեցիս ծեռամբ ցակովբ վարդապետին. ի թվին :ՌՃԼԱ: (1682):

Հրատ. Ջալալեանց, II, 262; Բարխուդարեանց, 73։

61. ՄԱՄԱՏԱՋՈՐ ԳՑՈՒՂ

601. Ս. ՄԻՆԱՍ ԵԿԵՂԵՑՈՒ մուտքի բարավորի վրա.

թվիհ :ՌԺ: (1601):

Հրատ. Բարխուդարեանց, 72։

602. Ս. ՄԻՆԱՍ ԵԿԵՂԵՑՈՒ հյուսիսային կամարի վրա՝

ես Ալարիա արտս, Դաւիթ էրեց, որ շինող եկեղեցոյ . . .

Հրատ. Բարխուդարեանց, 72։

603. Ս. ՄԻՆԱՍ ԵԿԵՂԵՑՈՒ հյուսիսային կամարի այլ երեսին՝

Խաչս Բաղդասարին է. իւր կողակցին . . .

Հրատ. Բարխուդարեանց, 72։

62. ՏՈՒՄԻ ԳՑՈՒՂ


Գյուղից հարավ, ձորակով անջատված հարթութեան վրա սփռված են հին հուշարձանների մնացորդներ։ Համեմատաբար լավ է պահպանվել անտաշ քարերով շինված մի փոքր թաղակապ եկեղեցի, որը կոչվում է «Կարմիր եղցի». եկեղեցու ծածկը և հարավային պատը փլված են. հնում նրա արեմտյան պատուհանի միակտուր պսակի վրա եղել է :ՆԽԹ: թվականի արձանագրութիւնն։ Պսակի այդ քարը կոտրված է երկու մասի, մենք գտանք դպրոցի միջանցքում կազմակերպված փոքրիկ թանգարանի հնագիտական այլ իրերի կողքին, որոնք հավաքել էր ուսուցիչ Ամիրջանյանը։ Այժմ այդ քարը տեղափոխված է Մտեփանակերտի Գաղառագիտական թանգարան։

Եկեղեցու շրջապատը գերեզմանատուն է. հին ու նոր տապանաքարերի մեջ գտանք միայն մի փոքր և գեղաքանդակ խաչքար, որն ուներ :ՌԿ: թվականը։

Եկեղեցուց հարավ, թմբերի վրա նշմարվում են շենքի հիմնապատերը, որը համաձայն ավանդության կոչվում է «Թագավորի պալատ»։ Սրանից քիչ հեռու, մի այլ թմբի վրա մատուռի հիմնապատերն են, որոնց մոտ գտնվող մի մեծ և անարձանագիր տապանաքարը նույն ավանդությամբ կոչվում է «Թագավորի գերեզման»։ Գյուղի և այս հնավայրի արանքում եղած աղբյուրը, որի վրա սրբատաշ քարերով ծածկ կա, կոչվում է «Թագավորի աղբյուր»։

Այս գյուղը եղել է Ապումուսէ իշխանի նստավայրը, որը պատերազմից Բուղալի հետ՝ Գտչա բերդում։ Արձանագրության մեջ «Թագավոր» անվանված Գագիկը Ապումուսէի—Մուսէի ժառանգն է։ Այսպիսով, իշխանական այս տոհմին է պատկանել Գտիչ բերդը IX դարում, որի մոտ գտնվում է Տումի գյուղը։


604. ԿԱՐՄԻՐ ԵՂՑՈՒ *պատուհանի պսակի վրա, 5 տող.*



ի :ՆԽԹ: (1000) թվինն Հ[ա]ՑՈՑ, եւ ի[թ]ԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆՆ ՏՆ. ԳԱԳԻԿԱ. ՈՐԴՈ[ւ] ՄՈՒՍԷԻ. ԵՒ ՍՈՓԻ ԴՈՒՍՏՐ ՄՈՒՍԷԻ ՇԻՆԵՑԻ[ւ] ՏԱՒՆ Ա[ս]. Ի ՓՐԿՈՒԹԻՒՆ Հ[ո]ԳՒՈ ԻՄՈ ԵՒ[ւ] Ծ[Ն]ՈՂԱՑ ԻՄՈՑ:

Հրատ. Բարխուդարեանց, 79— (ՍՈՓԻՒ փոխարեն ՈՍԿԻ)։

605. ԽԱՉՔԱՐ, փոքր, գեղաքանդակ, դրված է նոր գերեզմանի վրա. թևերի շուրջը.



63. ՏՈՂ ԳՅՈՒՂ ԵՎ ՇՐՋԱԿԱՅՔ

Հին ու նշանավոր է այս գյուղը, որ գտնվում է հինավուրց Քթիշ լեռան արևելյան փեերին (լեռան գագաթին է Քթիշ բերդը)։ Գյուղն առավել անվանի դարձավ XVIII դարի սկզբներից, երբ այնտեղ հաստատվեց Մելիք Եգանը։

Գյուղում կան արձանագրություններ ունեցող հետևյալ հուշարձանները.

Ա. Ս.Ստեփաննոս եկեղեցի. գտնվում է գյուղի հյուսիսային եզրին՝ գերեզմանատան մեջ. Թաղածածկ փոքր շենք է, կառուցված ճեղքված քարերով։ Անսովոր կերպով եկեղեցու մեջ կանգնած է մի մուլթ, որը սրահը բաժանում է երկու մասի, ըստ որում հյուսիսային մասն ավելի նեղ է։ Այդ նեղ մասում հնում եղել են տապանաքարեր։ Եկեղեցու շինության ժամանակը հայտնի չէ, արևմտյան միակ մուտքի ճակատին գրված Մելիք Իսայու արձանագրությունը հաղորդում է 1747 թ. ծածկը նորոգելու մասին, բայց եկեղեցու պատերի մեջ ագուցված բազմաթիվ հին բեկորների վրա կան ավելի հին թվականներ. ամենահինը՝ 1421-ից։

Բ. Գերեզմանատուն. Ս.Ստեփաննոս եկեղեցին շրջապատում է երեք կողմից, որի մեջ ցաք ու ցրիվ ընկած են խաչքարերի բեկորներ, իսկ տապանաքարերի մեծ մասը անգիր է. մի քանիսի վրա կան կենցաղային քանդակներ։

Գ. Աճապատ. գտնվում է Ս. Ստեփաննոսից մոտ 150 մետր արևմուտք, թեք լանջի վրա. փոքր թաղածածկ շենք է, այժմ կիսավեր, շրջապատում կան խուցերի ավերակներ, այստեղ միայն մի արձանագրություն է եղել նախկինում, որից կարելի է կռահել, որ եկեղեցին կոչվել է ս. Վարդան։ Անցյալում եղել է կույսերի աճապատ, որը հաստատվում է նաև № 643 արձանագրությամբ։

Դ. Մելիք Եգանի ապարանք. գտնվում է գյուղի կենտրոնում, հնում ունեցել է բրգավոր շրջապարիսպ, որը մասամբ է պահպանված՝ դարպասի հետ միասին։ Շինված է սրբատաշ քարով, երկհարկանի է, ներքին հարկը քարածածկ. վերին հարկն ունի պատշգամբներ։

Գյուղը այժմ էլ շեն է և բնակելի։ Ապարանքի ներքին հարկի գեղեցիկ ձևավորված մուտքի շուրջը փորագրված է Մելիք Եգանի ընդարձակ հիշատակագրությունը, տեղական բարբառով և բովանդակալից։

Ե. Ս. Հովհաննես եկեղեցի. գտնվում է գյուղի մեջ, բարձրադիր թաղում. շինված է սրբատաշ քարերով, չորս սյուների վրա և թաղածածկ շենք է. շինված է համարվում Մելիք Եգանի կողմից, բայց հավանաբար հնի տեղում։ Եղել է Մելիք Եգանյանների տոհմական տապանատուն։ Եկեղեցին բաց անելու և արձանագրություններն ստուգելու հնարավորություն չունեցանք, առնում ենք նախորդ հրատարակություններից։

Զ. Աճիայտ հուշարձան. Տող գյուղից Ֆիզուլի քաղաքը (Կաբալագինո) տանող ճանապարհի ձախ եզրին բարձրացող բլրի գլխի հուշարձան։

Ժողովածուի մեջ գյուղի և շրջակայքի հուշարձաններից հավաքված են 36 արձանագրություն, որոնցից 27-ը հրատարակում ենք առաջին անգամ։

Որպես հավելված բերում ենք նաև մատուռների վրա եղած արձանագրությունները։


Ս. Ստեփաննոս


Եկեղեցու շինության և նորոգությունների ժամանակ, նույնպես և հետագայում՝ պատերի մեջ ագուցված են հին խաչքարեր և տապանաքարեր՝ մանր հիշատակագրություններով. այդպի-

սխներն արվել են նաև երեսպատման քարերի վրա։ Ահա դրանք ժամանակագրական կարգով և առանց տեղադրությունը նշելու։

606. . . . . ԹՎ.ԼԻՆՅ :ՊՀ: (1421): ՅՈՒՅՑ ՌՎ.ՊՀ

607. ԹՎ.ԼԻՆՅ| :ՋՋ: (1531). |ԵՍ ՏՐ. ԴԱՆԻԷԼ.Ի ԿԱՅՆԿՅՆԵՑԼՈՒՅՑԻ.






608. ԽԼԱՅՁՍ| ԻՍԿԼԱՅՆԴԱՐԻՆ.

ԵՍԱՎԱՄԷՍ


609. ԵՍ Ա.Վ.Ա.ՆԷՍ.

ՆԱՆԱՀԼԱՅ


610. ՆԱՁԱ.Պ.Ա.Ց



611. ԽԱՁՍ Ա.Պ.Լ.ՅՄԻՐԼԻՆՅ.



612. ՔԱ.| ՑԻՇԷ| ՏՐ. ԿԼԻՐԼԱ.ՅԿԼՈՅԱԼԻՆՅ.




613. ՊԵՏՐՈՍ, |ՇԱՀՈՒՄ.



614. ԳՈՒՎՈՒ|ՁԱՍ Ա.Ն.




615. ՏՐ. ԿՈԻՍՏԼԱ.ՆԴ.|. ՏՐ. ՈՎԱ.ՆԷՍ.



616. ՄՈՒ|ՏԱ|Յ, | Ա.Ղ|Ա.|ՄԻՐ.




617. ՁԱ.ՆԱ.Ղ.Ա.Ց.




618. ՆԱ.Ղ.Ն|Ա.Ղ.Ա.




619. ՄԱԼՔՈՒՍ.



620. ԵՍ ՄԱՒՏՈՒ . . . |ՑԻՇԵՑՔ Ի ՔՍ.



621. ՍԱՐԳԻՍԻՆ| ԽԱՉՍ|. ԴՈՒ|Լ.Ա.Ղ|Ա.Ց.



622. ԽՈՒԴԱՂ . . | ԴՈԼ.Ա.Ղ.Ա.Ց.



623. ՄԱ.ՆՈՒԷԼ, ԷՊ|Ի.յ|Ս|ԿՈՊՈՍ|.

Հրատ. Բարխուդարեանց, 77։




624. ՈՎԱ.ՆՆՇ ԵՊ|ԻՍԿՈՊՈՍ|.

Հրատ. Բարխուդարեանց, 77։




625. Ի ԹՎ|ԻՆ|



626. . . . :Ռ.ՃԻԴ։ (1675) ՑԻՇԵՑԼՔ.

627. ՏԱՊԱՆԱՔԱՐ, երեսին ուրագ, մկրատ և խաչեր, ագուցված է արևմըտյան պատին, արտաքուստ. 4 տող՝




ԵՍԱՂԻՀ
ԴԻԴ ՝ ՛ .
ԿԻՆԿԵՅԻԽԻՆՂՍՅԻՂ
ԻԿԻՐԻՆՍԻԹԻԼՄԻՂԻՆ

ԵՍ ԱՑԼԱՀԴԱԴ| ԿԱՆԿՆՂԵՑԻ ԽԱՉՍ ՑԻՇ|ԱՏՅԱԿ ԱՊԻՆ, ՍԱԹԻԼՄԻՇԻՆ:

Ծանոթ. *Հաղվագյուտ է Ա տառի մեկ գծով գրությունը։ Հավանաբար XVII դար։*

628. Ս. ՍՏԵՓԱՆՈՍԻ արևմտյան մուտքի ճակատաքարի վրա. 6 տող.




ԹՎԻՆ ՝ՌՃՂՋ
ՅԻՇԱՏԱԿԵՔԸՍ
ՏԵՓԱՆՈՍ ԵԿԵՂԵՑ
ՌՍԳԼԻՒՆՐ ՊՐՈԳԵ
Ա.ՋՂԸՆԴԵԿՀԵՈՐԴԻՒԼ
ԻՊԻՍԱՅԻՆ

ԹՎԻՆ ՝ՌՃՂՋ: (1747). ՑԻՇԱՏԱԿ Է ՍԲ. ԸՍ|ՏԵՓԱ-ՆՈՍԻ ԵԿԵՂԵՑ|ՈՒՍ ԳԼՈՒԽՆ, ՈՐ ՆՈՐՈԳԵ|ԱՑ ՄԷԼԻՔ ԵԿԱՆԻ ՈՐԴԻ ՄԷԼ|ԻՔ ԻՍԱՑԻՆ. ՚ՑԻՇԱՏԱԿ Է ՀՈԳՈՑ՝:

Ծանոթ. *Վերջին երեք բառերը ջարդոտված են այժմ. լրացնում ենք Բարխուդարյանցից։*

Հրատ. *Բարխուդարեանց, 77։*


629. ՏԱՊԱՆԱՔԱՐ, գտնվում է Ս. Ստեփանոսի հյուսիսարևմտյան մասում, ղերեզմանատան մեջ. հարավային երեսին՝ ոչխար, ուրագ, մկրատ, աքցան.



ՈԵՍՏԱՅԵՂԱՆԵՍ
Ձ ԶՂԴ

ՈՒՍՏԱՑ ԵՀԱՆԵՍ| ԹՎԻՆ ՝ՋՂԴ: (1545):

630. ՏԱՊԱՆԱՔԱՐԻ կես, ընկած է Ս. Ստեփանոսի մուտքի մոտ. 3 տող.



ՍՅՍԷՂԱՊԱՆԿՈՁ
ՕՎԱՆԷՍԻ ՈՐԴԻՏՐ
ԲԱՐՍՍԷՂԻՆ ԹՈ . . .

ԱՑՍ Է ՏԱՊԱՆ ԿՈՁ| ՕՎԱՆԷՍԻ ՈՐՊԻ ՏՐ. ԲԱՐՍ[Ս]-ԷՂԻՆ. ԹՈ . . .

Ծանոթ. *Թվականի առաջին գիրը Ռ պիտի լիներ, հավանաբար նաև կոճ—գուցէ խոճ—խոջայ։*

631. ԱՆԱՊԱՏ կոչվող եկեղեցու պատին, խաչի շուրջը՝

խաչս վարդան։

Ծանոթ. *Ավանդաբար ասում են, որ այստեղ է թաղված Մելիք Բախտամը։*

Հրատ. *Բարխուդարեանց, 77։*

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՈՒՆՆԵՐ, ՈՐՈՆՔ ՏԵՂՈՒՄ ՁԵՆՔ ՏԵՍԵԼ ԵՎ ԱՌՆՈՒՄ ԵՆՔ ՆԱԽԿԻՆ ՀՐԱՏԱՐԱԿԻՉՆԵՐԻՑ

632. Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ եկեղեցու մուտքի ճակատակալ քարին.

Թվիւ ՝ՌՃՁԵ: (1736)։ Այս սուրբ Ոհաւէս եկեղեցուս գլուխն ցորոգեց Պ.ուկաս վարդապետի որդի Մելիք եկանն. յիշատակ է հոգոյն իւրոյ. ով կարդայ մեկ բերան Աստուած ողորմի ասէ:

Հրատ. *Բարխուդարեանց, 74 (որից և առնում ենք), Ջալալեանց, II, 260 (չունի թվականը)։*

633. Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ եկեղեցու քարե խաչկալի հյուսիսային դռան վրա.
Որ ողորմի Քրիստոս Աստուած. յիշատակ է խաչկալս պարոն Մէլիք եկանիս և ծնողաց իմոց Մօսէս, Ղուկաս վարդապետին, մօրն իւր Շհօին և ծնողին Մարիամին և եղբարն իմ Աւետին և հայրն իմ Խաճուն, կողակիցն Խաճուն աղին, որդի Աւետին, Ըսայուն, Պաղտասարին, Վեսին, կողակիցն Գոգալին, որուսր Թավարին, խանպաճին, Խաթուն Խաթայուն. և այլն եղելոց ողորմի ասէք. ամէն թիվն :ՌՃէ: (1658)

Նանոթ. Անչուշտ թվականի մէջ սխալ կա, բայց է թողնված տասնավորը։

Հրատ. Բարխուդարեանց, 74։

Տապանագրեր, ս. Հովհաննես եկեղեցուն կից շինված Մելիքական տապանատան մէջ.

634. Այս է տապան Մելիք եկանի հայր Ղուկաս վարդապետի, ով կարդայ ողորմի ասէ. թվին :ՌՃԿԴ: (1716):

Հրատ. Բարխուդարեանց, 75։

635. Այս է տապան հայ իշխանին
Եկան անուն մեծ Մէլիքին,
Որ է որդի բարեպաշտին
Ղուկաս անուն վարդապետին.
Եղև սիրեցեալ ամենայնին
Նաիր անուն թագաւորին:
Տիրապետեաց սայ ի երկրին
Ի Աղուանից ի ճահճոցին
Յոյժ պատուեցաւ պարսից սզգին
Քան զիշխանս Հայոց երկրին... :ՌՃՂԿ: (1744):

Հրատ. Բարխուդարեանց, 75։

636. Այս է տապան հայ իշխանին
Մէլիք եկանի որդի պարոն Մէլիք Աւետին,
Որ շատ սիրական էր Նաիր շահին,
Որ յառաջ վախճանեցաւ հայր սուրին,
Որ շափաղաթ ունէր Նաիր շահին,
Որ է :Բ: Հաֆիմ էլաւ :Ե: Մուհալին.
Շահն ոգեց Աւետ տարաւ,
:ՋՌ: (6000) թուման ջարմայ առաւ,
Ուրախ ատով յղի արաւ,
Մէկ ամ կացաւ, վախճանեցաւ.
Ողորմի. թվին՝ :ՌՃՂԴ: (1745).
Որ վոխեցաւ առ Աստուած,
Որ ընթեռնուք, մէկ բերան Աստուած ողորմի ասացէք:

Հրատ. Բարխուդարեանց, 75—76։ Զալալեանց, II, 260 (Քերի և աղավաղված)։

637. Ցայսմ տապանի հանգչի մարմին՝ հայ և արի Մելիք Բախտամին. սա էր որդի Մելիք Աւետին. մահ և վախճան պատմեն սուրին՝ մահադեղով իրուսիմ խանին. և որ հանդիպիք ի տապան սուրին, միով բանիւ ողորմի ասէք. ամէն:

Հրատ. Բաֆֆի. Խամսայի մելիքութիւնները, 216։

638. Այս է տապան մեծին Մելիք Եկանի որդի Մելիք Եսայուն, և էր սա իշխան կարգեալ Նախիր շահէն. ԼԹ: (33) ամ տիրեաց երկրիս Դիզակու և առաւ բազում հաջութիւն և յաղթութիւն ընդ անօրէնսն. և էր ինքն պարթև և յոյժ զօրաւոր հանի զառաջինսն իւր. և քիւ կենաց նորա :ԿԱ: (61). ամաց, վայնանեցաւ բվլինյ :ՌՄԼ: (1781), հոգետնքերին :Բ: (2)-ին երեքաքթի. որ ընթեռնուք, մեկ հայր մեդայ ասացէք. ամէն:

Հմմտ. Բարխուդարեանց, 76, Ջալալեանց, II, 260, Բաֆֆի, համասյի մելիքությունները, էջ 103.

639. Այս է տապան լուսահոգի Մելիք Աւրամի որդի Բաղր բէկին. բվլինյ :ՌՄԼԸ: Էր. (1789):

Հմմտ. Բարխուդարեանց, 76.

Տող գլուղից Փիղալի քաղաքը (Կարլագինո) աւանող ճանապարհի ձախ եղրին բարձրանամ է մի լայնանիստ և բարձր լլուր, որի գլխին պահպանվել է թաղածածկ և ամբողջական փոքր եկեղեցի. մուտքի բարավորին 6 տող.

640.

ՌՆ ՈՒՃՂԼԼ
ՅԻՇԱՏԱԿԷՍԱՓԻՍԻ
ՌՒ·ԻՍՈՒՆ·ՄՕՐՆ·ՋՈՒԱԼԻՆ·ԻՒ
ՊՕՐՆ ԿՈՂԱԿԻՑ ՅԵՐԻՔԱՋԻՆՈՐ
ՌԱՆՑՆԵՒՈՍՏՒԱՑ ԱԾՈՂՐՄ

ՁՊ
ՈԲ

ԹՎՐԻՆ :ՌՃՂԱ: (1742). ՅԻՇԱՏԱԿ Է ՍԱՐՔԻՍԻ ՈՐԴԻ ԻՍՈՒՆ, ՄՕՐՆ ՋՈՒԱԼԻՆ, ԻՒՊՕՐՆ ԿՈՂԱԿԻՑ ՅԵՐԻՔՆԱՋԻՆ, ՈՐԹՈՆՑՆ ԵՒ ԴՈՒՍՏԻՐԱՑ ԱԾ. ՈՂՈՐՄԻ.

Նշանոթ. Վերջում եղած փակագիրն, անշուշտ, գրչի անանուն է, հավանաբար Գրիգոր:

641. ՏԱՊԱՆԱԳԱՐ, եկեղեցւոյ հարաւային պատի տակ. երեսին եղծված 2 տող.

ԱՅՍԷՏԱՊԱՆՊԵՏՐՈՍ ՊԱՊԻՆ
ՈՐԻ ԱՒՐԷԳԱ ՈՒՎԱՐԱՐ
ՎԻՆՈՒԼԸ

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՊԵՏՐՈՍ ՊԱՊԻՆԻՈՐ Է . . . . . | ԹՎԻՆ :ՌՂԸ: (1649):

642. ՏԱՊԱՆԱՔԱՐ, ընկած է եկեղեցւոյ ներսում. վրան 3 տող.

ԱՅՍԷՏԱՊ
ԱՆՍՐԲՅԱԿ
ՈՎԻԿԱՅ

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՍՈՒՐԲ ՅԱԿՈՎԻԿԱՅ:

ՀԱՎԵԼՎԱԾ

Ս. Հովհաննես եկեղեցում եղած մասունքների վրա եղել են.

643. Ա. ԱՐԾԱԹՅԱ ԽԱՉԻ վրա՝

Այս է մասունք և ճեխարք սրբոյ Առաքելոյն Թոմայի և Յակովբայ գմահաս(?)

[1] Ջալալյանցը հիշատակում է միայն, որ այստեղ կային Մելիք Եգանի տոհմից քաջ իշխան Օհան բէգի, Բալա բէգի, Բաղր բէգի, Ծօսէի բէգի, Բանկի բէգի, Եսայի բէգի և ուրիշների տապանաքարերը. Նշվ. հատորը, էջ 260.

ճահճակին. ես Շուրքցի Մարզարիս ապաշխարողս եմու զայս ճշմարիտ ճեզ, ծեռուճի Սարգիս վարդապետիդ, յիշատակ հոգոյ. ի վայելումն յաւիտենական fո. թվ. :ճ: (100).

Ծանոթ. Անշուշտ սխալ է վերծանված թվականը. հավանաբար :ՌՃ: (1651)։ Սարգիս վարդապետը հիշատակված է 1657 թ. տե՛ս արձանագրություն 646։

Հրատ. Բարխուդարեանց, 74։

644. Բ. ԱՐՁԱԹՅԱ ԽԱՉԻ վրա.

Ցիշատակ է Մէլիք Եսայի որդի Սափարի բէկին, որ ես Ղոլա կուսանաց Աճապատին. սա է ցակովբ հայրապետին և Թէոդորոսի մատուճի:

Հրատ. Բարխուդարեանց, 74։

645. Գ. ԱՐՁԱԹՅԱ ԽԱՉԻ վրա.

Ես Գրիգոր ճիճել տվի խաչս յիշատակ իճն առաջ աճմահական է ի Քրիստոս Աստուած հաւատաց է սուրբ Ակովիկ, որէ Դիզակ: Հաքերճեցի ոսկերիչ Մուրատս ճիճեցի. թվիճ :ՌԿ: էր (1641):


Հրատ. Բարխուդարեանց, 75։

646. Գ. ԱՐՁԱԹՅԱ ԵՎ ՈՍԿԵՁՐԱՁ աչի վրա.

Այս է աչն արբոյն Բարսեղի հայրապետին կեսարու, որ ես Սարգիս վարդապետս վերսին ճորոգել տրվի, յիշատակ իճն և ծնողաց իմոց Ոհանիճ և Եղիսապետին. ի դուռն սուրբ Աստվածածին. թվիճ :ՌՃԵ:-ին (1657), այժմոյս :ՈՃՄՐ: (1703), ի գիւղն Կոլպ:

Հրատ. Բարխուդարեանց, 75։

647. ՄԵԼԻՔ ԵԳԱՆԻ ԱՊԱՐԱՆՔԻ ՄՈՒՏՔԻ ՇՈՒՐՋՔ՝ գծագրության վրա դուրս բերված գաղափարությամբ.



ԹԼԻՅԻՆ ՙՒՒՃԺՉ՚ (1667). ՅԻՇԱՏԱԿ Է ԹԱՆԱՊԱՑԱՍԼ ԱՑՍ Է ՈՐ ԵՍ ՂՈՒԿԱՉ ՎԱՐԴԱՑՊԵՏԻ ՈՐԴԻՔ, ՈՐ Է ԻՄ ԱՆՈՒՆ ՄԼԷՂԼԻՔՉ ԵԿԱՆ, ՈՐ ԱՌԱՋ ԵԻ ԽԷԼԽՆ ՉԱՄ՝ ԴԵՒ ԻՆՁ ԿԱՐՔԵՑԻՆ ՔՕԽՂՎԱՂՑ, ՑԻԴ ՆՈՐԱՑ ՈՐ ՕԼՔԱՆԻՆ . . . ԴԵՒ ԱԻՂԱԼ ՍՈԼԹԱՆ ՀՈՒՍԷՒՆԻՑ ՏՂԱՑ ՂԱՀԹՄԻՂ ԷՐԵՔՆ ՈՐ Ի ՑԻՆՁԱՓ ՂՈՒԻ, ՈՂԱՐԿԷ. ՈՐ ՊԻՐԱԻ ԻՆՁ ՏՈՒՆ . . . ՄԷԼԻՔՈՒԹՈՒՆ ԴՎԱՎ: ԱՑԼ ՕՍՄԱՆԼՈՒՆ ԵԿԱՎ, ԱՌԱՎ, Ի ՁԵՒ ՆՈՐԱՑՆԻՑՆ. ՈՐ ԱՆ ԷԼ ԱՍՁԱՓ ՂՈՒԻ, ՈՒՂԱՐԿԷ ՈՐ ՊԻՐԵՆ ԴԻՋԱԿ. ԻՆՁ Դ . . ՎՎ. ՍՕՎԼՂԱՐ Ա՚ԼԷ: ՇԱՀ ՆԱՑԴԻՐ ՋՕՐԷՂ, ԹԱՔԱՈՐ ԵԿԱԻ ՋՕՐՕՔ, ԱՌԱԻ ՕԼՔԱՍ Ի ՁԵՌԷՍ ՕՍՄԱՆԼՈՒԷՆ ԱՆԱՑ, ՆՈՐԱՑ ԷՍՁԱՓ ՂՈՒԻ, ՈՂԱՐԿԷ ՈՐ ԴՐԱԻ ԻՆՁ. ԱՑՍ ԵՐ ՋՄՈՀԼԻՍ. ԱՋԿ ՔՐԼԻՅԼՏՈՆԼԻՑ ԴԵՑ ՈՐ ՄԷԿՆ ԹԱԼԻՇ, ՍԷԿՆ ՁԱՐԼԱՑՊԼԵՐՅԹ, ՄԷԿՆ ԽԱՁԱՆ, ՄԷԿՆ ՎԱՐԼԱՅՆԴԱՑ, ՄԷԿՆ ՔՈՁԵՁ, ՄԷԿՆ ՏՈՒՁԱՂ. ԱՑԼՅԴՈՒՆՑ ԽԱՆԸ ՊԱԿԼԱՐՊԷԿԱՑ ՏԵՂ, Ա՚Ր ԻՆՁ ՇԱՓԿՑՂԱԹ ԱՐԱԻ: ՕՎ, ՈՐ ՑԵԴՕՎ, ԿԱՐԹԷ, ԱՑՍ ԴԻՐԵՍ ԻՄԱՆԱՑ ՈՐ ՄԵՐ ՈՐՊԷՍՈՒԹՑՈՒՆ ԱՑՍՊԷՍ ԻՎԱԻ. ՄԻՆ ՈՂՈՐՄԵՍ. ԱՑՍ Է ԵՂԵՒ ԱՄԷՆ:

ԵՍ ԹՈՂԵՑԻ ՈՁ ՀԱՑԱՍԴԱՆԱՍ ԵՍԻՐ ԴԱԼՈՒ:

Նաեոր. Թվականի այս ընդհանրացած վերծանությունը չի համապատասխանում պատմական փաստերին. այսպես՝ Մելիք Եղանը (բուն անունը Ալան) Լոռիից փոխադրված և Տող ղլաղում հաստատված է համարվում 1716 թ. և մահացել է 1744 թվականին։

Նկատի պիտի ունենալ հետևյալ հանգամանքը. արձանագիր գրիչները հաճախ ի և Ի տառերը գրում են իրար շատ նման ոճով, որը և շփոթության տեղիք է տալիս։ Թվում է, որ ներկա դեպքում թվականի մեջ տասնավոր ի-ն պետք է Ի վերծանել, որով կստացվի 1707 թվականը։ Այս դեպքում նաև Մելիք Եգանի Տող տեղափոխվելու ժամանակը մոտ 10 տարով կհետևա։

Հրատ. Բարխուդարեանց, 76—77։

64. ԴՏՁԱ. ԲԵՐԴ ԵՎ. ԴՏՁԱ. ՎԱՆՔ

Հուշարձանների այս խումբը գտնվում է հնագույն մյաս Հարանդ, հետագայում Դիղակ գավառի և այժմյան Հադրութի շրջանի Տող, Տումի և Թաղլար գյուղերի արանքում առտնձնակի բարձրացող բարձր սարի գագաթին։ Լեռան և վանքի անունները գրվել են գոնազան ձևերով, հնում՝ Բերդ, հետագայում՝ Կոփչ, Գոփչ, իսկ նոր ժամանակներում՝ մելիքանիստ Տող գյուղի անունով՝ Տողի բերդ։

Ամբողջովին անտառապատ լեռան գագաթին մնում են բերդի պարիսպների ավերակները, դիմացը փորված խոր խրամը և ներսում մեծ թվով տնատեղեր։

Քերթ բերդը Արցախի հնագույն և ամրագույն բերդերից մեկն է, նրա պատերի տակ նշանավոր դեպքեր են տեղի ունեցել։ Հիշենք մեկը. IX դարում արաբացոց Բուղա ոստիկանը պաշարում է այստեղ ամրացած անհնազանդ հայոց Ապումուսէ կամ Եսալի Ապումուսէ իշխանին։ Պաշարումը և պատերազմը տևում են ամիսներ, արաբացոց զորքը մեծամեծ կորուստներ է կրում, բայց չի կարողանում կոտրել պաշարված զորքի և ժողովրդի դիմադրությունը և հարկադրված է լինում, ի վերջո, հաշտության առաջարկել[1]։

Լեռնագագաթում եղած հուշարձաններից արձանագրություններ մնեն հետևյալ երկուսը.

Ա. Գտչա վանք. գտնվում է բերդից հյուսիս, մի հարթ բացատում։ Գրականության մեջ բացի վերոհիշյալ անուններից, կոչվել է նաև Թիլնա վանք. բաղկացած է մի գմբեթավոր եկեղեցուց և զավթից. երկու շենքերն էլ կառուցված են համակ սրբատաշ քարերով և արվեստավոր վարպետի ձեռքով։ Արցախի հայ ճարտարապետական լավագույն հուշարձաններից մեկն է։

[1] «Թովմայի վարդապետի Արծրունւոյ Պատմութիւն տանն Արծրունեաց», Թիֆլիս, 1917, էջ 289—301։

Համաձայն արձանագրությունների հիմնադրված է 1241 թ. և ավարտված 1248 թ.՝ Ամարասի վանականներ Սարգիս և Վրթանես եղբայրների կողմից։ Գավթի հյուսիսային պատին կից կա անտաշ քարերով և ալժմ ծածկն ամբողջովին փլված մի եկեղեցի ևս, որն, ըստ ամենայնի, կառուցվել է ավելի վաղ։ Վանքի հնության ապացույց է Մ. Կաղանկատուացու հիշատակությունը, ուր Պարտավի եկեղեցական ժողովի մասնակիցների թվում հիշատակված է նաև—«Գետալ վանուց տանուտէրը»[1]։ Ժողովը տեղի է ունեցել VIII դարի սկզբներին։


Գտչա վանքը հնում ունեցել է ընդարձակ կալվածներ և եղել է մշակույթի կենտրոն։ Հայտնի են այնտեղ գրված կամ պահվող մի քանի ձեռագրեր[2]։ Դիզակի Մելիք Եգանը հովանավորում էր այս լեռան գագաթի հուշարձանները։ Նա իր հայր Ղուկաս վարդապետին կարգել էր Գտչա վանքի վանահայր։ Նոր ժամանակներում Գտչա վանքում եղել է Առաքել վարդապետ Կոստանյանց անունով մի գրասեր վանահայր, որն ունեցել է երկու հատոր գանազան գրվածքներ։ Դրանց մեջ եղել են նաև պատմական բովանդակությամբ կարևոր նյութեր, որոնցից օգտվել է Բաֆֆին՝ Խամսայի մելիքությունները աշխատությունը գրելիս։

Բ. Բերդամիջի եկեղեցի. գտնվում է բերդի ներսում, նրա արևմտյան մասում։ Թաղածածկ շենք է՝ շինված անտաշ քարերով։ Հարավային մուտքի ճակատին քանդակված է աստվածամոր պատկերը՝ մանուկ Հիսուսը գրկին և երեք այլ սրբապատկերներ։ Արձանագրությունները խաչքարերի և տապանաքարի վրա են եղել, որոնք մենք չտեսանք։

Այս միջավայրից ժողովածուում ամփոփված արձանագրությունները 18-ն են, որոնցից 6-ը հրատարակվում են առաջին անգամ։

ԳՏՉԱ ՎԱՆՔ

648. ԵԿԵՂԵՑՈՒ հյուսիսային պատին, ներքուստ, 14 տող.



ՅԱՆՈՒՆ ՋՀ. ՀԱՒԻՐ ԵՒ ՈՐԴՈ ԵՒ ՄԲ. ՀՈԳՈՑՆ. ԵՍ ՏՐ. ՍԱՐԳԻՍ ԵՒ ՏՐ. ՎՐԹԱՆԷՍ ԱՄԱՐԱՍԱ. ԵՊԻՍԿՈՊՈՍՔ ՀԻՄՆԵՑԱՔ ՉԵԿԵՂԵՑԻՍ Ի ԹՎԻՍ ՈՂ։ (1241) ՇԱՏ ԱՇԽԱՏՈՒԹՔ. ԻՆՁ ՉԱ.ԻԱ.Գ ԽՈՐԱ.ՆՆ ԽՓԵՑԱ.Ի ԵՂ.ԲԱ.ՑՐ ԻՄ ՏՐ.

[1] «Մովսէսի Կաղանկատուացւոյ Պատմութիւն Ազուանից աշխարհի», Թիֆլիս, 1913, էջ 343։

[2] Լ. Խաչիկյան, Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարանները, հատ. Ա. 285, Բ. 228, Գ. 460։

ՍԱՐԳԻՍ Ի ՔՍ. ՓՈԽԵՑԱՒ. ԵՍ ՏՐ. ՎՐԹԱՆԷՍ ԿԱՏԱՐԵՑԻ ԲԱԶՈՒՄ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆ. Ի ՄԵՐ ՀԱՒԱՒ, ԱՐԴԻՒՆԻՑ ՌՈՂԵ: ԹՎԻՍ (1246). Ի ԴԱՌՆ ԵԻ ՆԵՂ ԺԱՄԱՆԱԿԻ ՑԱԶԳԷՆ ՆԵՏՈՂԱՑ, ՈՐ ՋԲԱԶՈՒՄ ԳԱՒԱՌՈՒ ԱՒԵՐԵԱՑ ԵԻ ՄՆԱՑ ԱՑԼԱՍԵՒԻՑՆ ԱՒՈՌՈՒ ԵԻ ՎԻՃԱԿՍ ՍԼՐՔԼՈՑՆ ԳՐԻԳՈՐԻՍԻ, ՈՐ Է ՀԱՍՏԱՏԵԱԼ ՈՒԲ. ՆՇԱՆԱԻՍ ԵԻ ՍԲ. ԱՋՈՎՆ ԵԻ ԳԱՎԱԶԱՆՈՎ ՍՐԲՈՎ. ՎԻՃԱԿԵՑԱԻ ԵՎ ՍԱՀՄԱՆՈՎ, Ի ՑԱՂՈՒՆՈՑ ԳԵՏՈ ԻՆՁՈՒ ԵՐԱՍԽ, ԻՆՁՈՒ Ի ԱԻԱԶՆ ԳԱՀՏԱՀՎԱՏԻ, ՎԱԿՈՒՆԻՍ ՎԱՂԱԶՆԱԳԵՏՈ Ի ՔԱՐԱՏՆԻՍՆ ԽՈՁՈՒԱԳԵՏՈՎ. ՋԱՒԻՍՏ ԻՒՐ ԿԵՐՈՎ, ՀԱԿԱՐԻ ՀԶԱՒԱԳԵՏՈՎ ՔՐԴԱԳԵՏ ԻՒՐ ԴԵՏՈՎՆ, ԴԻՋԱԿՈ ԲԼԼՈՒԿԱՆ ԻՒՐ ԿԵՐՈՎՆ ՀՒԱՑՐԵՆԻՔ ԵԿԵՂԵՑՈՑՍ. ՓԱՐԱԽՆ ԳՈՏԱՆՈՑՆ ԿԵՐՈՎՆ, ԵԿԵՂԵՑԱՁՈՐ ԻՒՐ ՍԱՀՄԱՆՈՎՆ. :Ա: ԼՇՈՀՈՂ Ի ՏԱՀԻՍ, :Ա: ԼՇՈ Ի ՏՈՂ, :Ա: Ի ԴԱՔՍ, :Ա: Ի ՄՈԽՐՆԵՆԻՍՆ, ԽԱՋԻՆԱՄԱՐԳ ԽՈՏՈՏԵՂ: ՈՐ ՑԱՑՍ ՎԻՃԱԿԵՍ ԵԻ ՍԱՀՄԱՆԵՍ Ի ՑԻՏ ՈՒՆԻ ԿԱՄ ԹԱԳԱՒՈՐ ԿԱՄ ՑԻՇԽԱՆ ԿԱՄ ՀՍՑՐԱՊԵՏ :Գ: ՍԲ. ԺՈՂՈՎՈՑՆ ՆԶՈՎԵԱԼ ԵՂԻՑԻ. ՁԱՑ ԵԻ ՑԱՐՄԵՆԱՑՆ ՍՐԲՈՑ ԱՆԻԾԵԱԼ ԵՂԻՑԻ, ՍԱՍՆ ԵԻ ԲԱԺԻՆ ՐՆԴ ԽԱՉԵՑՈՂՍՆ ԵՂԻՑԻ ԵԻ ԼՆԴ ԿԱԵՆԼԻ:

Ծանոթ. 7, 8, 9 տողերի սկզբի մասերը պարունակող քարը ընկած-կորած է. լրացնում ենք ըստ նախորդ հրատարակիչների, նկատի առնելով նաև Եսայի կաթողիկոսի ձեռագրից արտագրված բնագիրը: 9, 10 տողերի վերջին մասերը գրված են ընդհանուրի սահմանից դուրս (գծագրութեան մեջ բաժանված ուղիղ գծով):

Բացի այլ տարընթերցումներից, բոլորի մոտ էլ բացակայում է կառուցողների՝ Ամբառի եպիսկոպոսներ լինելը նշող մասը:

Հրատ. Ջալալեանց, I, 209—210, Բարխուդարեանց, 80—81, Շահխաթունեանց, II, 366:

649. ԵԿԵՂԵՑՈՒ հարավարևելյան ավանդատան մուտքից վեր, 8 տող.

ԻԹՎԻՍ ՈՂԵԵՍՐՎՐԹԱՆԷՍ ՇԻՆԵՑԻ
ՋԵԿԵՂԵՑԻՍԵԻՑՐՈՒԵԱԼՎԻՃԱԿՀԱ
ՍՄԱՏԻԵՋՀԱՅՐԵՆԻՔՍԵՒԱՐՁԱՆԻ
ԳՐԵՑԻՀԱՆԱՊԱԶՈՒՐԲԱԹՆԱՆՅԻՇԱՄ
ԱԿԱՑՁԱԼՄՆԵԻՏԱՐՈՀՂՆ=Ձ=ՁԱՄ ԻՆՁԵԻՁ
··ՏՍԱՐԴՍԻՅԻՆԱՆՑՆ=Ա=ՁԱՄՈՒԽՏԱՆԻՍԵՂ
ԲԱԻՐԻՄ ԱՁԱՄՄՈՎՍԻՍԻՄՔՎԵՐՈՐԴՈ
ՈՎՈՐԽԱՓԱՆԷՄԵՐՄԵՂԱՑՆՏՐԷԱՌՁ

Ի ԹՎԻՍ :ՈՂԵ: (1246). ԵՍ ՏՐ. ՎՐԹԱՆԻՆ ՇԻՆԵՑԻ ՋԵԿԵՂԵՑԻՍ ԵԻ ՑՐՈՒԵԱԼ ՎԻՃԱԿ ՀԱՍՏԱՏԻ ԵՒ ՋՀԱՑՐԵՆԻՔՍ ԵԻ ԱՐՁԱՆԻ ԳՐԵՑԻ. ՀԱՆԱՊԱԶ ՈՒՐԲԱԹՆ ԱՆՑԻՇԱՏԱԿԱՑ ԺԱՄՆ ԵԻ ՏԱՐՈՋՆ :Ժ: (10) ԺԱՄ ԻՆՁ ԵԻ :Ժ: (10) ՐԺԱՄ ՍԱՐԴԻՍ: ՑԻՆԱՆՑՆ :Ա: ԺԱՄ ՈՒԽՏԱՆԻՍ ԵՂԲԱՒՐ ԻՄ :Ա: ԺԱՄ ՄՈՎՍԻՍԻ, ԻՄ ՔՎԵՐՈՐԴՈՒ: ՈՎ ՈՐ ԽԱՓԱՆԷ ՄԵՐ ՄԵՂԱՑՆ ՏԷՐ Է ԱՌ ԱՅ:

Հրատ. Ջալալեանց, II, 258, Բարխուդարեանց, 81:

650. ԵԿԵՂԵՑՈՒ հյուսիսարևելյան ավանդատան մուտքից վեր եղել է.

ես Ջերգամ և ադի իմ Վարաք միաբանեցաք սուրբ ուխտիս. տէր Վրդանէս իւր կամաւ զժամատունն ինձ երես և ես իմ հալալ արդիւնն ընձա բերի սուրբ աթոռոյս. ժամն տարուցն առնեն :Ա: ատ ինձ Ջերգամա, ապա Վարաքա. որչափ որ այս եկեղեցիս հաստատ է մի ոք խափանեսցէ յազգէ ազգ:

Ծանոթ. Այս արձանագրութիւնը տեղում չգտանք. Բարխուդարյանցն ունի մինչև սր.

աթոռոյս բառերը. Ջալալյանցը՝ լրիվ, բայց հատկապես անունների խիստ աղավաղումներով, կազմել ենք երկուսի համադրութ[յամբ]։

Հրատ. Ջալալեանց, II, 258։ Բարխուդարեանց. 81։

651. ԳՈՒՄԹԻ արևելյան կամարի ոտքին, որը հենվում է եկեղեցու արևմտյան պատին, եկեղեցու մուտքի դիմաց՝ երեսով հարավ. անարվեստ և խառն դրչութ[յամբ] 9 տող.

ԵՍԻՇԽԱՆԲՐՈՒՏ
ԵՒՈՐԴՒՔԻՄՀԱՍԱՆ
ԵՒՍՊԱՏՄԻԱԲԱՆ
ԵՑԱՒՄԲՈՒԽՏԻՍԵՒ
ՏՐՎՐԹԱՆԷՍԵՐԷՄ
ԻՏԱՐՈՉԲԺԱՄՈՐՉ
ԱՓԽԱՓԱՆԷ
ՄԵՐՄԵՂԱՑՍ
ՏԷՐԷ

ԵՍ ԻՇԽԱՆ ԲՐՈՒՏ|ԵՒ ՈՐԴՒՔ ԻՄ ՀԱՍԱՆ|ԵՒ ՍՊԱՏ ՄԻԱԲԱՆ|ԵՑԱՔ ՄԲ. ՈՒԽՏԻՍ ԵՒ| ՏՐ. ՎՐԹԱՆԷՍ ԵՐԷՑ|Ի ՏԱՐՈՉ :Բ: ԺԱՄ. ՈՐ[Չ|ԱՓ] ԽԱՓԱՆԷ| ՄԵՐ ՄԵՂԱՑՍ| ՏԷՐ Է:

Ծանոթ. *Ժամանակակից է նախորդներին, 1246-ին մոտ։*

652. ԽԱՉՔԱՐ, որմնափակ, մեծ և գեղաքանդակ. կանգնեցված է գավթի հյուսիսարևելյան կամարի մեջ, եկեղեցու պատին կից. ստորին մասում 3 տող.

Ո
ԻՈՎԻ ՂԷ ԷՒՐՎՐԹԱՆ
ԷՍ· · ԵՑԻՉԽԱՀՍԻՓՐԿՈՒԹՆՀՈՑ·····

Ի ԹՎԻՆ |:Ո|ՂԵ: (1246). ԵՍ ՏՐ. ՎՐԹԱՆԷՍ ՀԱՆԳՆԵՑԻ ՉԽԱՉՍ Ի ՓՐԿՈՒԹՆ. ՀՈԳՈՑ ԻՄՈՑ:

Ծանոթ. *Հաղվագյուտ դեպք է, երբ շենքի ներսում որմնափակ խաչքար է կանգնեցվում։*

Հրատ. Ջալալեանց, II, 258։ Բարխուդարեանց, 82։

653. ՈՐՄՆԱԽԱՉ, փոքր, ագուցված է նախորդ խաչքարի որմի հարավային երեսին. խաչի շուրջը 6 տող.

ԵՍՄՒԹԱՀԿԱԳՆ
ՅԻ ԽԱ
ՉՍ Ա Մ ՈՒՆ
ՈՒ ԻՄ
ԹԱՀԱՀԱՅԲԱՆՈ
ԻԱՆԱՅԳՐԳՈՐԱ

ԵՍ ՄԽԻԹԱՐ ԿԱՆԳՆԵ|ՑԻ ԽԱ|ՉՍ ԱՄՈՒՍ|ՈՒ ԻՄ| ԹԱՄԱՐԱՑ, ԲԱՆՈ|ԻԱՆԱՑ, ԳՐ|Ի|ԳՈՐԱ:

Ծանոթ. *Դրչութ[յան և քանդակների ոճով,* XIII *դար։*

654. ԽԱՉՔԱՐ, ագուցված է գավթի հարավային պատի մեջ, ներքուստ, վրան եղ՝ված 2 տող՝

ԵՍԱԼ··ՆՍԵՒՍԿՍԿՆԵՑ
┼
Ի ԱՆՍ·····

ԵՍ · · · · ԵՊ[Ի]Ս[ԿՈՊՈՍ] ԿԱ·Ն|ԿՆԵՑ|Ի ԽԱ-ՉՍ · · · · ·

Ծանոթ. *Դրչութ[յան ոճով,* XVI—XVII *դդ։*

655. ԽԱՉՔԱՐ, կանգնած է եղել դավթի հարավարևելյան կամարի մեջ, եկեղեցու պատին կից, վրան՝

Ցիշատակ է սուրբ տաճարիս կաթողիկէից դողեցի Սարգսի որդի Սալուն և իւր կողակից Հերիփնազին. թվին :ՌՃԿԶ: (1717):

Ծանոթ. Խաչքարն այժմ տեղում չկա:

Հրատ. Ջալալեանց, II, 258, Բարխուդարեանց, 82 (որից և առնում ենք):

656. ՏԱՊԱՆԱՔԱՐ, գտնվում է դավթի հարավային պատի առակ, ներքուստ, դրերը խիստ չարգոտված են այժմ.

Այս է տապան տէր Սիմէօնի որդի Մեսրոպ վարդապետին. թվին :ՌՃԸԲ: (1723): Լուսաւորզի Մեհիթ եկանն ձեռնադրել տուսվ նպիսկոպոս, կարգեց Կիւրայ վանից աւագնուդ. որ եկի հաստատեցի սուրբ աթոռս. ի թվին հայոց :ՌՃՂԶ:-ին (1747) առ Աստուած փոխեցաւ. ով որ :կարդայ մէկ բերան ողորմի ասեն:

Հրատ. Ջալալեանց, II, 258 (որից և առնում ենք), Բարխուդարեանց, 82:

657. ԽԱՉՔԱՐ, փոքր, ազուցված է դավթին կից հյուսիսից թաղակապ եկեղեցու արևմտյան մուտքից վեր, արտաքուստ, 6 տող.

ԽԱՀ	Ս	ՏՐՍ
ԱՐ	Կ	Ի
Ս	այ	ՓՐԿ
Ո	Ւ	ՔԵ
Հ	Ո	ԳՈՒ

ՄՈՅ


ԽԱՉՍ ՏՐ. ՍԱՐԳԻՍԱՑ. ՓՐԿՈՒՔԵ. ՀՈԳՈ ԻՄՈՑ:

658. ԽԱՉՔԱՐ, վոքր, աղուցված է նախորդի մոտ. վրան մխայն թվականը.

ՌՎ | ՌՃԵ

ԹՎ. ԻՆ: :ՌՃՆ: (1606):

659. ՏԱՊԱՆԱՔԱՐ, երեսին զգեստավորված քահանա, ակիհը ձեռքին, առաջին վեմ քար, դիմացը՝ խունկ ծխող սարկավագ, դրանց կողքերին՝ աղավնիներ և խաչեր: Վերևի շրթունքին և ճակատին եղծված արձանագրություն. հետագայում մեջը փորվել և դուռ է դարձվել: Գտնվում է վանքի մոտ՝ աղբյուրի դիմաց, որի մեջ թափվում է ջուրը.



. . . ԻԿԱՄԱԻՆ Ա֊Ց. ԿԱՆԻԿՆԵՑԻ ՋԽԱՋՍ ՓՐԿՈՒԹԵ . . . . . ԱՆՈՒՆ ՍԱՐԿԱՒԱԳ. ՀԱՑՐ ԻՄ ՈՀ-Ս.-ՐՆ . . . ԹԻԻՍ ՈՒԾԸ: (1609):

ԳՏԻՋ ԿԱՄ ՏՈՂ ԲԵՐԴ

660. ՏՈՂ ԲԵՐԴԻ կիսավեր եկեղեցու արևելյան կողմում մի գերեզմանաքարի վրա եղել է.

ԹՎԻՆ ՉՁ: (1257). այս է տապան Մուխէս վարդապետին . . .

Մանոր. Տեղում չգտանք։

Հրատ. Բարխուդարեանց, 84։

Տող բերդի կիսավեր եկեղեցու մեջ եղել են սպիտակավուն քարից հինգ փոքր խաչքարեր՝ հիշատակագրություններով.

661. Խաչս Նազարին.

662. Խաչս Մրհապետին.

663. Խաչս Շահումին.

664. Խաչս Պ.ապարայ.

665. Խաչս Եղուայ (Եղուայ?)

Մանոր. Տեղում չգտանք։

Հրատ. Բարխուդարեանց 84։

65. ՑՈՐ ԳՑՈՒՂ.

Հիմնված է այն բարձր լեռան ստորոտում, որի գագաթին գտնվում է Ծորաբերդը։ Այս բերդը վերջին դարերում կոչվել է նաև Վելիջանի բերդ, համանուն իշխանի անունով։ Ծորաբերդը Արցախի միջնադարյան հին բերդերից է։ Անձրևների հեղեղումներից հետո բերդի շրջապատում երևում են հին ջրատար խողովակների, մեծ կարասների և խեցեղեն անոթների բեկորներ և տնային իրերի կտորներ։

Բերդաւաբի լանջին, դյուղից հարավ մնում են մի փոքր եկեղեցու ավերակները, որի մոտ նաև մի ստորերկրյա դամբարան՝ մեջը անարձանագիր գերեզմանաքար. եկեղեցին կոչվում է ս. Լուսավորչի անապատ։

Դյուղամիջի եկեղեցին շեն է և կոչվում է Ամենափրկիչ. վերջինս չորս սյուների վրա կանգնած թաղածածկ շենք է։

666. ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ԵԿԵՂԵՑՈՒ արևմտյան մուտքի բարավորի վրա, անարվեստ դրչությամբ 1 տող.

ՅԻՀՈՒՆ

Մանոր. Բարխուդարյանցը այս անորոշ գրվածքը վերծանում է «Հիշատակ է ։Ն։ (951) թվ.»։ Նկատի ունենալով գրչության ոճը և եկեղեցու նորաձև լինելը, մենք ընդունելի չենք համարում նման վերծանումը։

Հրատ. Բարխուդարեանց, Շ5։

667. ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ԵԿԵՂԵՑՈՒ բեմի ճակատի եզրին, վերից վար 1 տող.

Ր
Ո
Գ
Ի
Ր
Ի
Ւ

ԳԻՐԻՔՈՐ

Մանոր. Տառերի հերթականությունը չի պահպանվել։

66. ՆԱՄՁՈՐ ԳՅՈՒՂ

668. ԳՅՈՒՂԱՄԻՋԻ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ հյուսիսային պատին, արտաքուստ 1 տող։

թվ|ին|յ. :ԱՌԿԶ:-ին (1717):

Մանոր. Բարխուդարյանցն ունի շինության թվական :ՌՈՒԵ: (1696)։

Հրատ. Բարխուդարեանց, 63։

67. ՍՊԻՏԱԿ ԽԱՉ ՎԱՆՔ

Վանք և հադրութ գյուղերի արանքում, բարձրադիր մի հարթության վրա, գտնվում է Սպիտակ խաչ վանքը։ Այն ունի մի հասարակ եկեղեցի, որի արևմուտքում կա փոքր և բաց գավիթ։ Արևելյան պատին կից՝ թաղածածկ սենյակ-հյուրատուն. ընդարձակ բակում՝ խաչքարեր և տապանաքարեր։

Գոյության ունեցող շենքերը բոլորն էլ XVII դարի կառուցումներ են, բայց դրանց պատերի մեջ ագուցված հին տապանաքարերի ու խաչքարերի վրա եղած տապանագրությունները հասնում են մինչև XIV դարի առաջին կեսը, նույնը նաև բակում գտնվածների վրա. նախկինում եկեղեցու մեջ գտնված մասունքների հետ կապված ավանդությունները ավելի հին են։

669. ԽԱՉՔԱՐ, որմնափակ, դեղաքանդակ, գտնվում է բակի հարավային մասում, ճակտոնի տակի կիսակամար քարի վրա 6 տող.

ԵՍԱՁԱՄԻՈՐԴԻԻՇԽԱՆԱՅԿԱՆԿ
ՆԵՑԻՋԽԱՉՍԻ:ԻՓՐԿՈՒԹԻ ՀՈԳ
ՈՅՈՐԴՈՅԻՄՈՅԱՍՈՒԴԱՐԱՅՈՐ
ՓԿԱՐԴԷՓՅԻՇԵՑԷՓԻՍՈՒՐԲՅՂ
ԱՒԹՍԶԵՐ ԱՂ.ԱՀ ԵՄ:ԻԹՎ
ԻՍ:Զ:Ղ:Ե:

ես
հա
սա
ն.ո

ԵՍ ԱՋԱՄԻ, ՈՐԴԻ ԻՇԽԱՆԱՑ, ԿԱՆԿ|ՆԵՑԻ ՁԽԱՁՍ[Ի] Ի ՓՐԿՈՒԹԻ ՀՈԳ|ՈՑ ՈՐԴՈՑ ԻՄՈՑ ԱՍՈՒԴԱՐԱՑ. ՈՐ|ՔՔ ԿԱՐԴԷՔՔ ՅԻՇԵՑՔՔ Ի ՍՈՒՐԲ ՑԼԱՂ|ԱՒԹՍ ՁԵՐ ԱՂԱՁԵՄ: Ի ԹՎ|ԻՍ :ՉՂԵ: (1346):

Մանոր. Խաչքարն ընդգրկող երեք որմերի սրբատաշ քարերը պոկել-տարել են, նույնը և ճակտոնինը։ Խաչի հորիզոնական թևերի տակ քանդակված են հրեշտակներ։

Ջալալյանցն առաջին տողը կարդացել է «Աբրահի որդի իշխանա», իսկ Բարխուդարյանցը անձնանունները դրել է փոքրատառով և թվականը՝ :ՉՂԵ: Հուշարձանը անվանել է «Բեմ»։

Հրատ. Ջալալեանց, II, 264։ Բարխուդարեանց, 67։

670. ՆՈՒՃՆ ԽԱՉՔԱՐԻ հարավային կողին հետագայում փորվել են բաղմաթիվ մանր խաչեր և մի հիշատակագրություն՝ 1 տող.

ԵՍ ՀԱՍԱՆՆ

671. ՏԱՊԱՆԱՔԱՐ, օրորոցաձև, գտնվում է նախորդ որմնափակ խաչքարի դիմաց. հարավային երեսին կենցաղային տեսարան և կենաց ծառ. թերի 2 տող.

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ԲԱՐԵԱՊԱՇՏԻՆ
ԱՄՈՒԴԱՐԱՑ ՈՐ ԿԻՍԱԻՐԵԱՑ ԻՄ-
ՄԱՆԱԿԱՒ Ի ՔՒ ՓՈԽԵՑԱԻ. ՈՎ ԿԱ.

ԱՅՍԷ°ՀԱՆԳԻՍՏԲԱՐԵԱՊԱՇՏԻՆ:ԱՍՈ·····
···· ԱՆԱԿԱՒԻՔՒ+ՈՒԽԵՑԱՒՈՎԿԱ

Նանոթ. Մի չին մասն այժմ չարդուված է, լրացնում ենք ըստ Բարխուդարյանցի։ վերջին մասը թերի է թողնված, թեև գրելու տեղ կա։

Հրատ. Ջալալեանց, II, 264։ Բարխուդարեանց, 67։

672. ՏԱՊԱՆԱՔԱՐ, մեծ, օրորոցաձև, գտնվում է նախորդների մոտ. հարավային երեսին չորս խաչեր ու զարդաքանդակներ, իսկ երեք շրջանակներին՝ տապանագիրը. արևելյան ճակատին՝ հիշատակագրությունը՝ 7 տող.

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ԲԱՐԷՊԱՇՏ
ՎԷԼԻՃԱՆԱՑ, ՈՐ| ԿԷՍԱԻՐԻՔ
Ժ|ԱՄԱՆԱԿԱՒ Ի ՔՒ. ՓՈԽԵ-
ՑԱԻ· ՈՎ. . . . : ԵՍ ԽՈՒ-
ՄԱՐ, ՈՐԴԻ| ՋԱԼԱԼԱՑ,
ԿԱՆԳՆԵ|ՑԻ ՋԽԱՋՍ Ի ՓԸՐ|
ԿՈՒԹԻՆ ՀՈԳՈՑ| ՈՐԴՈՑ
ՎԷԼԻՃԱՆԻՆ:| ՈՐՔ ԵՐԿԻՐ
ՊԼԱԳԱՆՆԷՔ ՑԱՂ|ԱԻԹՍ ՑԻ-
ՇԵՑԷՔ. ՓՎԼԻՆ. :ՋԻԷ:
(1478):


ԴՍԻՈՑՁՈՎՍՓՈՅԻՈԿՈՂՂՐ ՊՓՁՅՈՈՁԿ

ԵՍԽՈՒՄԱՐ ՈՐԴԻ
ՋԱԼԱԼԱՅԿԱՆԳՆԵ
ՑԻՋԽԱՋՍԻՓՐԿ
ՈՒԹԻՒՆՀՈԳՈՅ
ՈՐԴՈՅՎԷԼԻՃԱՆԻՆ
ՈՐՔԵՐԿԻՐՊԷՔՅԱՂ
ԱԻԹՍՑԻՇԵՑԷՔՓՎ
ՋԻԷ

Նանոթ. Տապանաղիրը թերի է թողնված, թեև ազատ տեղ կա դրելու։

Հրատ. Բարխուդարեանց, 67։ Ջալալեանց, II, 264։

673. ԵԿԵՂԵՑՈՒ հարավային պատին, արտաքուստ, երեսպատման մի քարի վրա՝ փորված՝ խաչ և շուրջը՝ 4 տող.



ԽԱՉՍ ՄԱԽ|ՍՈՒՏ ՊԼԷ|ԿԻՆ Ա.Ց:| :ՋԽ: (1491):

674. ԵԿԵՂԵՑՈՒ արևմտյան մուտքի հարավային կողին, երեսով հյուսիս, 6 տող.

ՇԻՆԵՑԱՒ ՈՒՃ
ՅԴ · · · · · ·
ՅԻԾԱՏԱԿՑԱՆԿ՝
ԱԿԱՅՈՒՆՍՍՈՐ
ԱՊՐԴՈՎԸՍ
ԵՊԿՒՆ

ՇԻՆԵՑԱՒ ։ՈՒՃԺԴ։ (1665) ՐԹՎ.ԻՆ՝.| ՑԻՇԱՏԱԿ Լ։ ԶԱՆԿ|ԱԿԱՅՈՒՆՍ ՍՈՒՐԲԱՊԻ ՈՐԴԻ ՈՎԱ-ՆԼՍ| ԵՊԼԻՍՅԿԼՈՊՈՅՍԻՆ։

Հրատ. *Բարխուդարեանց, 66—67 (առանց թվականի)։*

675. ԵԿԵՂԵՑՈՒ արևմտյան պատին, արտաքուստ, պատուհանի միակտուր քարի վրա.

ՏՐԱՆՅԻՓՆ
ԵՍՏՐԱԿՄԻԵՅ
ՈՐ
ՌԽՌԻՆ ՈՒ
ՃԽԳ

ՏՐ. ԱՃ. ՑԻ. ՓՍ.|
ԵՍ ՏՐ՝. . . .|
. . . . ԹՎԻՆ ։ՌԻ|
ՁԽԳ։ (1694)։

Մանոթ. *Արձանագրությունը շատ բարձր տեղ է, մենք հեռադիտակով տեսել ենք այն, ինչ որ գծագրված է. Բարխուդարյանցը մեր բաց թողած տեղերում ունի վ.րդաձև Ր. կարե-լի է ընթերցել նաև Ազարիայ։*

Հրատ. *Բարխուդարեանց, 67։*

676. ՀՑՈՒՐԱՆՈՑԻ արևելյան մուտքի ճակատաքարին, 6 տող.

ՐԵՑԻ
ԵՍՄԿՐՏԻՀՍԳ·
ՅԻԾԱՏԱԿԷ ՌԱՆԱՊՍ
ՍՈՐԱ ՊՐԴՈՎԱՆԷՍԵՊԿՍԻՆ
ՇԻՆԵՑԱ՞°ՈՒՃՅԴՌԻՆԱՅՆ ՏԱՐԻՆԷՐ
ՌԱՀՄԱՋԽՆ°ՍՀՆԼՈՒՆԵՐԿՐԷՍՅՈՒՍՄ՞

ԵՍ ՄԻԿՐՏԻՉՍ ՊԻՐԵՑԻ. ՑԻՇԱՏԱԿ Լ ԹԱՆԱՊԻՍ |ՍՈՒՐԲԱՊԻ ՈՐԻ ՈՎԱՆԼՍ ԵՊԼԻՍՅԿԼՈՊՈՅՍԻՆ. |ՇԻՆԵՑԱՒ ։ՈՒՃԺ։ (1735) ԹՎԻՆ. ԱՑՆ ՏԱՐԻՆ ԷՐ՝ ԹԱՀՄԱՋ ԽՍՆ ՕՍՄԱՆԼՈՒՆ ԵՐԿՐԷԱ ՏՈՒՐՍ ԱՐԱՒ։

677. ՀՑՈՒՐԱՆՈՑԻ արևելյան մուտքի հարավային կողին, 2 տող.

ՔՈՒՐՃԺԵԻՆՁԻԾԱՌԱ
ՊԵՏՐՈՍ ՎՐԴԱՊԵՏ

ԹՎԻՆ ։ՈՒՃԺԴ։-ԻՆ (1766) ՓԻ. ՅԱՌԱ| ՊԵՏՐՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ։

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՑՈՒՆՆԵՐ, ՈՐՈՆՔ ԱՑԺՄ ՏԵՂՈՒՄ ՉԿԱՆ

678. ԵԿԵՂԵՑՈՒ ներսում, հյուսիսային կամարի տակ կանղնած խաչքարի վրա.

Ես Սիրաւ կանգնեցի զխաչս հաւր իմոյ Խութլափի. թվիհ։ ՉՁՔ։ (1333)։

Հրատ. *Բարխուդարեանց, 66։*

679. ԲԱԿԻ ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆ մեջ, Վելիճանի տապանաքարի մոտ, մի գերեզմանաքարի վրա.

Այս է հանգիստ խոնդքեկուն, դուստր Ախիճանին, կողակից Կոստանտէլին և մոր Վելիճանին. յիշեցէք ի Քրիստոս յԱստուծոյ. թվին :ՉԿԱ: (1512):

Հրատ. Բարխուդարեանց, 67։

68. ՀԱԴՐՈՒԹ ԳՅՈՒՂ

680. ԳՅՈՒՂԱՄԻՋԻ մեծ եկեղեցու ներսում, որմնամույթի վրա. 1 տող.

ՁԻՃԲ

Թվին :ՌՃԲ: (1653):

Նանոթ. Բարխուդարյանցն ունի ՌՃՀ։ Իսկ Ջալալեանցը՝ 1702։

Հրատ. Բարխուդարեանց, 68։ Ջալալեանց, II, 263։

69. ԹԱՂԱՍԵՒ ԳՅՈՒՂ

Գյուղը նոր է. հինը գտնվում մոտ 5 կիլոմետր հեռու, բարձրության վրա. այստեղ ավերակների մեջ մնում է XVI—XVII դարերին վերաբերող մի կիսափուլ եկեղեցի, որը եղել է թաղածածկ. որա պատերի մեջ ագուցված կան մի քանի փոքր խաչքարեր. մկրտության ավազանի մոտ եղածների վրա կա երկու արձանագրություն։

681. ԽԱՉՍ ՀՒՈՒՄԻՆ

ԽԱՉՍ
ՀՈՒՈՒՄ
ԻՆ

682. ԽԱՉՍ ՂԱՍՈՒՄԻՆ

ԽԱՉՍ
ՂԱՍՈՒ
ՄԻՆ

683. ԳՅՈՒՂԱՏԵՂԻՑ ներքև, գետակի վրայի կամուրջի հյուսիսային ոտքի արևելյան երեսին, երկու քարերի վրա. 7 տող.

ՅԻՇԱՏԱԿ Է ԳԱՒՐՄՈՒՃՍ ՅԱՊՈՆ| ԵԿԱՆԻ ՈՐԳԻ ՊԱՂՏ|ԱՍՅԱՐԻՆ ԿՈՂԱԳԻՑ ՓԷՐՈՒԻՆ| ԹՎԻՆ :ՌՍԺԲ: ՈՒՆ (1763): |ՄԻ ԲԱՐԱՆ Ա.Ծ. ՈՂՈՐՄԻ |ԱՍԷՔ:

ՅԻՇԱՏԱԿ ԵԿԱՆԻ ՈՐԴՈՅ ՊԱՂՏԱՍԱՐԻՆ ԿՈՂԱԳԻՑ ՓԷՐՈՒԻՆ ԹՎԻՆ ՌՍԺԲ ՈՒՆ
ՄԻ ԲԵՐԱՆ Ա.Ծ ՈՂՈՐՄ

Նանոթ. ՅԱՊՈՆ վերծանությունը կասկածելի է, թերևս պարոն։

70. ԿԱՐՋԱԲԱՋԱՐ

Այս գյուղը գտնվում է Հադրութից դեպի Շիդուլի քաղաքը տանող ճանապարհի վրա՝ Աղրիջանի սահմանի մոտ։

Գյուղամիջում, այժմ էլ գործող հին ճանապարհի եզրին, գրեթե ամբողջական վիճա-

կամ կանգնած է մի հին կարավանատուն։ Ուղղանկյուն շրջապարսպից մի ձևավոր դարբաս է բացվում դեպի փոքր բակը, որի չորս պատերի տակ շինված են հյուրասենյակներ և ախոռները. վերջիններս երկարավուն պատերի տակ են։ Դարբասի երկու կողմերում հյուրասենյակներ են՝ իրար մեջ և բակից բացվող մուտքերով։ Հանդիպակաց պատի տակ երեք կամարներով ա բացվածքով սրահ է, որի միջից դռներ են բացվում դեպի կողքերի և հետևի հյուրասենյակները։

Ամբողջ կարավանատունը արտաքուստ անտաշ քարերով է շինված, իսկ հյուրասենյակները և մանավանդ սրահը՝ սրբատաշ քարով։ Սրահի կամարները պլտաձև են և կառուցված հայ ճարտարապետության միջնադարյան լավագույն ոճով։ Այդ սրահի կենտրոնական կամարի սյան վրա խաղդրով և անվարժ ձեռքով գրված է հետևյալ հիշատակագրությունը։

684.

ԵՍԶԼՒ ՎԱՐԴՍ ԵԿԻ
ՔՒՃԼՌ ԵՍԿԱ Հ

ԵՒ ՋԼԻ ՎԱՐԴԱ ԵԿԻ ԹՎԼԻՆ։ ՌՃԼ։ (1681)...

Ծանոթ. Շարունակությունը այլ մարդու է և չի ավարտված։

ԼԱՋԻՆԻ ՇՐՋԱՆ

71. ԾԻԾԵՒՆԱՎԱՆՔ

Դտնվում է պատմական Սյունիքի Աղահեճք գավառում, ներկա Դորիսի և Ազրբևջանական ՍՍՀ Լաչինի շրջանի սահմանագլխին՝ Հագարու գետի վտակների միացումից գոյացող բարձրադիր հարթության վրա. ամենամոտիկ գյուղը Դորիսի շրջանի Խնածախն է։

Այս վանքի հիմնարկության ժամանակի մասին տեղեկություններ չկան։ Ստեփանոս Օրբելյանն իր «Պատմության» մեջ մի քանի անգամ հիշատակում է վանքի անունը, դրանցից ամենահինը վերաբերում է 844 թ., երբ Տաթեև վանքի սահմանները հաստատող փաստաթղթի վկաների շարքում հիշում է «Ստեփաննոս Ծիծառնոյ վանականս», բայց շենքի ճարտարապետական առանձնահատկությունները ոչ մի կասկած չեն հարուցում, որ այն IV—V դարերի հնագույն բազիլիկ է։

Հնում վանքի մոտ եղել է նաև գյուղ՝ Ծիծառնավանք անունով և 10 չափ հարկով։ Վանքի և գյուղի անունն ըստ երևույթին առաջացել է շրջապատի քարաժայռերին ապրող ծիծեռնակներից։ Հոյակերտություն ունի նաև ավանդությունը, որ այդ վանքում է պահվել Գևտրոս առաքյալի ծիծեռնը՝ ճկույթի մատի մասունքը։

Վանքի եկեղեցին լուրահատուկ նեղ ու երկար շենք է (21 մ երկար., մոտ 8 մ լայն., 18,5 մ բարձր.), որը 6 զույգ հաստահեղույս սյուներով բաժանվում է երեք նավերի, որոնցից միջինը համեմատաբար լայն է։ Ունեցել է երեք մուտք, որոնցից մեկն է այժմ բաց՝ հարավայինը։ Երկրեք կտուրի արևելյան և արևմտյան ծայրերի տակ կան փոքր սենյակներ։ Հետագայում կտուրին ավելացվել է նաև փոքրիկ գմբեթ-դանգակատունը։

Արդեն փլված շրջապարսպի ներսում կան մեծ թվով ավերակ շինություններ։

Ներկա ժողովածուում տեղ գտած 8 արձանագրություններից 7-ը հրատարակվում են առաջին անգամ։

685. ԵԿԵՂԵՑՈՒ հարավային պատի կենտրոնում, արտաքուստ, այժմ շարված-փակված մուտքի մոտ, 6 տող.

ՈՎՀՐ ՔՍ Ա
ՕԱՏԷՂԲ
ԱՅՐՍԻՐՈՂ
ՉԳՐԻԳՈՐԶԱՆԱՐՁԱՆ
ՃԱՌԱՅԻՇԵՑԷՔՅԱՂԱԻԹՍ


ՈՎ. ՏՐ. ՔՍ. Ա|ՉԱՏ Ե|ՂԲԱՑՐ ՍԻՐՈՂ| ՉԳՐԻԳՈՐ, ՉԱՆԱՐԺԱՆ| ԾԱՒՍ. ՑԻՇԵՑՔՔ ՑԱՂԱԻԹՍ։

Ծանոթ. *Ըստ տառերի ոճի, ոչ ուշ X դարից։*

---

[1] Ս. Օրբելեան, Պատմութիւն, 208, նաև 339, 500 էջեր։
[2] Անդ, 516։

686. ԵԿԵՂԵՑՈՒ արևելյան պատի (բեմի) կիսակամար մասում երկու պատրիարքները բաժանող քարի վրա՝ երկու խաչ և 6 տող.



ԵՍ
ՄՀ
ՈՅ
ԻԿ
ԿԱՆԳՆԵՑԻՋԽԱՉՍՀԱՐԻՄ
ՄԽԻԹԱՐԱԽԱՐԲԷԿԻՆ

ԵՍ| ՄՀ|ՈՅ|ԻԿ| ԿԱ.ՆԳՆԵՑԻ ՋԽԱՉՍ ՀԱ.ՀՐ ԻՄ| ՄԽԻԹԱ.ՐԱ. ԽԱ.ՐԲԷԿԻՆ:

687. ԵԿԵՂԵՑՈՒ հյուսիսարևելյան մուտքի կամարի սկզբի երկու քարերի վրա՝ չորսական տող.

ՏԱՒ ՋԳՐԻ
ՈՐՅ ԳՈՐ
ԻՀԵ ԳԱ
ՅԷՓ ՅԻՂԷ

ՏԱ.Վ|ՈՐ Յ|ԻՇԵ|ՑԷՔ: ՋԳՐԻ|ԳՈՐԻ|ԴՍ ՑԻՇԵ|ՑԷՔ|:

Մանոթ. *Վերջին անձնանվան տառերը հետ ու առաջ են դրված. հնարավոր է նաև Գիորգս վերծանել։*

688. ԵԿԵՂԵՑՈՒ հյուսիսային երկրորդ (արևմուտքից) մուտքի վրա, խաչել և 2 տող.

ԵՍՈՀՆՂԱՆՍԿ
ԿՆԵՑԻ ՍԲ ՆՂ

ԵՍ ՈՀ|Ա.|ՆՋԱՆՍ Կ|Ա.Ն|ԿՆԵՑԻ ՍԲ. ՆՇ Ա.ՆՍ|:

689. ԵԿԵՂԵՑՈՒ հյուսիսարևմտյան մուտքի վրա, խաչի շուրջը 3 տող.

ՍԲ ✝ ԽԱՀՍ
ԲԱԽԱՍ ՀՈԳՈՅ
ՄՀԴՍԻԳՆԼ Ն

ՍԲ. ԽԱ.ՋՍ| ԲԱ.|ԼԻ|Ն|ՅԽԱ.ԻՍ ՀՈԳՈՑՆ| Մ|Ա.|ՀԴ|Ա.|ՍԻ ԳՆ...:

690. ՊԱՐՍՊԻ արևմտյան մուտքի կողին, 4 տող.

ԿԱՅԱՐԵՑԱՒ
ԵՍԱ ՊԱՐԻՍՊԻՀԵՌՆՀԱՅ
ԿԱՋԻԸԽԱՆԻՆԻԱՌԱՋՆՈՂՈՒ
ԹԻՄԿՕՀԼԵՊՍ Ռ Ռ. Կ:Բ:✝✝

ԿԱ.ՏԱ.ՐԵՑԱ.Ի| . . . . ԵՍԱ. ՊԱ.ՐԻՍՊՍ Ի ՋԵՌՆ ՀԱ.Ց|ԿԱ.Զ ԻՇԽԱ.ՆԻՆ, Ի Ա.ՌԱ.ՋՆՈՐԴՈՒ|ԹԻ. ՄԿ|Ր|Տ|Ի|Զ ԵՊ|Ի|Յ|Ս|ԿՈՊՈՍԻ|, Թ|Վ|ԻՆ| :ՌԿԲ: (1613):

691. ԽԱՋՔԱՐ, դրված է բակի հարավում գտնվող տնտեսական շենքին որպես բարավոր, քիվին և ստորին մասում 2 տող.

ՍԲԽՆՍԳՈՒՉԼԻՆ
Ռ ՌՃԴ

ՍԲ. Խ|Ա.|ՋՍ ԳՈՒՋ|Ա.|Լ|ԻՆ. Թ|Վ|ԻՆ| :ՌՃԴ: (1605):


692. ԵԿԵՂԵՑՈՒ մուտքի բարավորի վրա եղել է՝

Նորոգեաւ գաւիթս և գանգակատունս ի ժամանակիս Իրուռիիմ խանիս . . . թ| իճ|, :ՌՄԻԲ: (1773):

Հրատ. *Լալայան, Ազգ. հանդ., IV, 48։*

72. ՔՈՂԻՋ ԳՅՈՒՂ

693. Գյուղամիջում մնացել է անտաշ քարերով շինված մի թաղակապ եկեղեցի, որի արևմտյան պատի վերին մասում ագուցված մի սալանման քարի վրա փորագրված է խաչ. շուրջը 8 տող.



ՅԱՆՈՒՆ ԱՅ ԵՍ Հ ԷԿԱՋ
ՍՐԱՆՈՑԻՆ Հ ԱՅՐԷՆ
ԻՓՆ : Դ : ԲԱԺԻՆ
Ա : ԻՄ ՝ ԷՐ Ե ՏԻ
ՎԻ ՎԱԽՄ ԸՍՏ
ԵՓԱՆՈՍ
. . . . . .
. . . . . .


ՅԱՆՈՒՆ ԱՅ. ԵՍ Հ ԷԿԱՋ| ՍՐԱՆՈՑԻՆ Հ ԱՅՐԷՆ| ԻՓՆ :Դ: ԲԱԺԻՆ| :Ա: ԻՄ ԷՐ. ԵՏ|ՎԻ ՎԱԽՄ ԸՍՏ|ԵՓԱՆՈՍ . . . |. . . . |. . . |

Ծանոթ. Մնացել է 6 տողը, վերջին 2-ը խափան ջնջված են.

73. ՄԻՆՔԵՆԴ ԳՅՈՒՂ

Գյուղի կենտրոնում մնացել է անտաշ քարերով շինված մի թաղակապ եկեղեցի, որի շուրջը մի քանի տապանաքարեր. Գյուղից մոտ չորս կիլոմետր հարավարևելք կա սրբատաշ քարերով շինված փոքր մատուռ, ծածկը փլված, շուրջը մի քանի տապանաքարեր.


694. ԵԿԵՂԵՑՈՒ հարավային մուտքի բարավորի վրա 3 տող.



ՂԻՆԵՑԱՒՍԲ ԵԿԵՂԵՑԻՍՆՐԱԿ
ՆՌՆՖՀԱԿԱՅԱՈՂՈՎՈՒՐԴՍ
ՌՈՒՃԻԴ

ՇԻՆԵՑԱՒ ՄԲ. ԵԿԵՂԵՑԻՍ ՆՈՐԱԿ|ՆՈՒՆՌ, ՀԱՂՑԿԱՑ ԺՈՂՈՎՈՒՐԴՍ.| ԹՎԻՆ :ՌՃԻԴ: (1675):


695. ԳԵՐԵԶՄԱՆԱՔԱՐԻ վրա, որը գտնվում է եկեղեցու հարավային պատի տուկ, 2 տող.



ԱՅՍԷՀԱՆԳԻՍՏՆ ՏՐՀ ԱՅՐԱ
ՊԵՄՐ ՃԺԱԷՐ

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ[Ն] ՏՐ. ՀԱՅՐԱ|ՊԵՏԻՆ. ԹՎԻՆ :ՌՃԺԱ: ԷՐ (1662):


696. ԳԵՐԵԶՄԱՆԱՔԱՐԻ վրա, որը գտնվում է մատուռի մոտ.



ԱՅՍԷՀԱՆԳԻՍՏՅԱՐՈՒԹԻՒՆՈՐԷՈՐԴԻ

ԱՅՍ Է ՀԱՒՆՅԼԻՍՏՅ ՈՍԳԷԴՈ|ԼԻՅԿԻՆ. ԹՎԻՆՅ. :ՌՃՆԷ: (1698):

697. ԳԵՐԵԶՄԱՆԱՔԱՐԻ վրա, հախճորգի մոտ, 4 տող.



ՈՂ ՈՃ
ԼԴ ԷՐ


ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՑԱՐԻՒԹԻԻ-ՆԻՆ, ՈՐ Է ՈՐԴԻ| . . . . . . | ԹՎԻՆՅ :ՌՃԼԴ: ԷՐ (1685):

Ո

74. ՇԱԼՎԱ ԳՅՈՒՂ


Գյուղամիջում կա թաղակապ եկեղեցի, որի պատերի մեջ օգտագործված են բազմաթիվ խաչքարեր և տապանաքարեր։

698. ԵԿԵՂԵՑՈՒ արևմտյան մուտքի շրջանակի եզրին՝ խաչ և 3 տող.




ՄԻՔԱՐ|. :ՊԿ: (1411):

699. ՏԱՊԱՆԱՔԱՐ, երևացող երեսին կենցաղային տեսարան, ազուցված է եկեղեցու արևելյան պատին, արտաքուստ, պատուհանի մոտ, խաչքարի տակին՝ 3 տող.



ԹՎ|ԻՆ| :ՌՀԸ: (1629):

700. ՏԱՊԱՆԱՔԱՐ, դրված է մուտքին, որպես կողաքար, վրան՝ ննջեցյալ և 2 տող.




ՊՈՏՐՈՍ, ՊՈՂՈՍ. ԹՎ|ԻՆ| :ՌՃ: (1651):

75. ԱՀՄԵԴԻԼՈՒ ԳՅՈՒՂ


Գյուղամիջում կա անտաշ քարերով թաղածածկ մի եկեղեցի, որի պատերի մեջ օգտագործվել են հին խաչքարեր և գերեզմանաքարեր, բակում մնում են դրանցից մի քանիսը։

701. ԽԱՉՔԱՐ, ղեղաքանդակ, կանոնած է եկեղեցու հարավային պատի տակ, կիսովին ծածկված կից շինված տան պատով. երևում են 3 տողի սկզբի մասերը.



Ա.Ծ. ՈՂՈՐՄԻ Զ . . . |
Ի̣ՏԻ̣. Գ̣ՑԿ . . . . . |
ԹՎ|ԻՆ| :ՉԿԶ: (1517).:

702. ՏԱՊԱՆԱՔԱՐ, ազուցված է եկեղեցու հարավային պատի մեջ, արտաքուստ, 1 տող.



Ա.ՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՊԱՂՏԱՍԱՐԻՆ: Ա.ՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՊԱՂՏԱՍԱՍԱՐԻՆ:

76. ՄԻՐԻԿ ԳՅՈՒՂ

Գյուղամիջում դեռ կանգուն է թաղակապ եկեղեցին, բակում մնում են մի քանի տապանաքարեր։

703. ԵԿԵՂԵՑՈՒ մուտքի բարավորի վրա 6 տող.

ԵՍ ՊՐՆՀՄԻՆԶՐՍ ՍԲ ԱԾԱԾՆԵԿՂՅՍՅԻՇՅԿԻՆՁԵԻՄ
ԾՆՂՅՆՀԱՅՐՆ ԱՊՐՀԱՄԻՆԵՂԲՐՆԻՄՀՅԿԶՆՅՇՅՓԻՓՍ
ԵՍՆՕԱՐԳՍ·ՏԱՆՏՐՎԵՐԿՅԻԵԿԵՂՅՍԵՏՈՒ·Ե ԹՄՆՅԻՇՏԿ
ԻՆՁԵԻՄԾՆՂՅՆ·:ՄԵՆՏՐԿԻԱ·ՎՐԴ·ՊՏՈՒԱՓ
Ե:ԹՄՆ:ՅԻՇՏԿՄԵԶԵԻԼԲԾՆՂՅՆԻ ԹԻԻՆ ՌԾԼՄԷԿՆ

ԵՍ ՊԼԱՅՐԼՈՅՆ ՀՄԻՆԶՐՍ ՍԲ. ԱԾԱԾԼԻՅՆ ԵԿԼԵՅՂԼԵՅՁԼԻՅՍ ՁԻՇԼԱՅՏԼԱՅԿ ԻՆՁ ԵԻ ԻՄ| ԾՆԼՈՅՂԼԱՅՁՆ. ՀԱՁՐՆ ԱՊՐՀԱՄԻՆ, ԵՂԲԼԱՁՅՐՆ ԻՄ ՀԼԱՅՁԿԼԱՅԶՆ ՁԼԻՅՇԼԵՅ-ՁԼԷՅՔ Ի ՔՍ:| ԵՍ ՆՕԱՐԳՍ ՏԱՆԼՈԻՅՏԼԷՅՐ ՎԵՐԼԱՅԿԼԱՅՁԻ ԵԿԵՂԼԵՅՁԼՈԻՅՍ ԵՏՈԻ :Ե: ԹԼՈԻՅՄԼԱՅՆ ՁԻՇԼԱՅՏԼԱՅԿ| ԻՆՁ ԵԻ ԻՄ ԾՆԼՈՅՂԼԱՅՁՆ: ՄԵՆՏՐԿԻԱ ՎԼԱՅՐ-ԴԼԱՅՊԼԵՏՅ ՏՈՒԱՔ| :Ե: ԹԼՈԻՅՄԼԱՅՆ ՁԻՇԼԱՅՏԼԱՅԿ ՄԵԶ ԵԻ ՄԵՐ ԾՆԼՈՅՂԼԱՅՁՆ. Ի ԹԻԻՆ :ՌՃԼ: ՄԷԿՆ. (1682):

Նաևոթ. Ձայնավորների մեծ մասի կրճատման հետևանքով անձնանունների մի մասը մնում է անհասկանալի։

704. ՏԱՊԱՆԱՔԱՐ, օրորոցաձև, ընկած է եկեղեցու բակում, վրան 3 տող.

ԵՍ ՊՈՂՈՍ ԿԱՆԳԵՑԱՅ ՌՎ
ՍԲ ԽՍ·····ՍԱԿԵՂ Ռ Ճ
ՓՆ... ՆԱՒԱՍԱՐԴԻՆ Դ

ԵՍ ՊՈՂՈՍ ԿԱՆԳԼՆՅԵՑԱՁ| ՍԲ ԽԱՂՉՍ...
ՍԱԿԵՂ|ՔՆ... ՆԱԻԱՍԱՐԴԻՆ. ԹՎԼԻՆՅ :ՌՃԴ (1655):

Նաևոթ. *Թվականը արևմտյան ճակատին է։*

705. ՏԱՊԱՆԱՔԱՐ, ընկած է եկեղեցու հարավում, վրան 3 տող.

ԱՅՍԷՀԱ Ռ
ԳԻՍՏ Ֆ Գ
ՊՐԻՆ Ճ

ՍՑՍ Է ՀԱԼՆ ԳԻՍՏ ՋԱՐԻՆ. ԹԼՎԻՆՅ :ՌՃԳ: (1654):

77. ՓԱՐԱՋԱՆՑ ԳՑՈՒՂ

Հինավուրց հայկական գյուղ։ Այժմ բնակեցված է ադրբեջանացած քրդերով։ Գյուղամիջի թաղածածկ եկեղեցու պատերի մեջ կան տապանաքարեր և մի խաչքար՝ XI դարի զարդաքանդակներով։

Ավազանի վրա 1901 թ. հիշատակագրությունն է։ Գյուղից ներքև կա գերեզմանատուն։

706. ԳԵՐԵԶՄԱՆԱՔԱՐ, օրորոցաձև, հյուսիսայրին երեսին կենցաղային տեսարան, վերևի թեքության վրա եղծված արձանագրություն. արևմտյան ճակատին խարույկ, որից վեր միայն թվականը.

ԹՎ ՌՃ Է ԹՎԼԻՆՅ :ՌՃԷ: (1658):

ՔՅԱԼԲԱՋԱՐԻ ՇՐՋԱՆ

78. ԴԱԴԻ ՎԱՆՔ

Այս անունը կապված է Թադէոս առաքյալի աշակերտ Դադի հետ, բայց հաճախ կոչվել է նաև Մութա վանք՝ մոտակա գյուղի և քարախութի անվամբ, որի վրա շինված է։

Դադի վանքի հիմնարկութեան ժամանակը հայտնի չէ. գրավոր տեղեկութիւններ են պահպանվել Կաղանկատվացու մոտ, ուր IX դարի ազգամիջյան ընդհարումների վայրը հիշատակվում է «ի Մորաձորն, որ կոչի Դադոլի վանք»[1]։ Նկատի ունենալով վանքում կիսավեր մնացած ընդարձակ բաղիլիկ շենքը և Թադէոս առաքյալի անվան հետ կապված հուշարձանների հնութիւնը, Դադի վանքի հիմնարկութիւնը պետք է վերագրել IV—V դարերին։

Վանքում պահպանված արձանագրութիւններից չորս հնագույնները վերաբերում են XII դարի վերջին քառորդին։ Բազմաթիվ այլ արձանագրութիւնները և գրավոր տեղեկութիւնները վկայում են, որ XII դարից սկսած վանքի հովանավորողը եղել է Արցախի ամենանշանավոր վախթանգյան տոհմը, և վանքը՝ նրա հոգևոր կենտրոնն ու դամբարանատանը։ Վանքի առաջնորդները ևս այս տոհմից են նշանակվել։ Առավել նշանակալից վաստակ ունի վախթանգյան տոհմի տիկին Արղու խաթունը. նա է կառուցել վանական շենքերից ամենագեղեցիկն ու մեծածախսը՝ ս. Նշան կոչվող գմբեթավոր եկեղեցին, որն իր ճարտարապետական և կառուցողական վարպետութիւմբ Արցախի լավագույն հուշարձաններից մեկն է։ Արվեստագետ և հասարակական գործիչ Արղու խաթունը դուստրն է Մահկանաբերդի Հրուրգ իշխանի, որը հովանավորում և աջակցում էր Մխիթար Գոշի գործունեութիւնը։ Արղու խաթունն ամուսնանալով Արցախի իշխան Վախթանգի հետ, իր հասարակական գործունեութիւնը զուգակցեց նաև ասեղնագործութիւնը։ Արղու խաթունն իր աղջիկների հետ ասեղնագործել է մի քանի նշանավոր վանքերի վարագույրները (Հաղբատ, Մակարավանք, Դադի վանք և այլն)։ Ժամանակի պատմագիր և ականատես Կ. Գանձակեցին նկարագրելով այդ վարագույրները, նրանց արվեստը համեմատում է բիբլիական նկարիչներ Բեսելիելի և Ողիաբի հետ[2]։

